

ԱՐԴ ԵՐԳՈՒՅ

Դ ՏԵՐԻ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա Գ Ի Ր

№ 3

ՄԱՐՏ

1906

ՀՎԵ

ՏԵՐ Ե Ր Ա Խ Ա Ծ

Տպարան „ՀԱՐՄԱՆԻԿ“ Մողաք. փող. № 15.

## ԲՐԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 3

*Երես*

	<i>Երես</i>
<b>1.</b> ՖԱՐՁԱԴ ԵՒ ՇԵՐԻՆ, Վ. Փափազեանի . . . . .	9
<b>2.</b> ՎԵՐԱ, «ՄԵԿԻ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ» . . . . .	15
<b>3.</b> ** Ա. Խամակեանի . . . . .	27
<b>4.</b> ԹԱԻՐՔՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐԺԱԿԱՆՔՆԵՐԻ ՔՍԱՆԵԽԵՆԳԱՄԵԱԿԻ	
Ականատեսի . . . . .	28
<b>5.</b> ԱԳՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒՇՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ	
Երուանդ Մարգարեանի, . . . . .	38
<b>6.</b> ԿՈՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՄԻՉՄԸ, Բ. Իշխանեանի .	56
<b>7.</b> ՄԻՄՎՈԼՔԶՄԸ ԴՐԱՄՄԱՅԻ ՄԷԶ, Ս. Յակովեանի .	79
<b>8.</b> ԱԴՄԻՆԻՍՏՐԱՅԻԱՆ ԵՒ ԴԱՏԱԱՏԱՆ Տ-Ի . . . . .	87
<b>9.</b> ՆՈՐ ԵՆ ՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ . . . . .	94
<b>10.</b> ՔՆԱՐԴԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ . . . . .	
Պրոֆ. Վ. Զրմբարտ «Քանուորական հարց» Թարգ. .	
Ա. Առաքեանի, 2) Ա. Ալիբեկով. Ելիսավետովուսկու	
կրօնականություն պրետ սահմանական առաջնորդություն և պահպան առաջնորդություն . .	
3) Գեղանակեան ինչ կարգու Յով. Տէր-Միքայելի կամաց առաջնորդություն . . . . .	95
<b>11.</b> ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պ. Գումարի բնորութիւնների	
ընթրքը . . . . .	97
<b>12.</b> ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աղջիկ Լվովից իմանանա-	
դրական երկրներում. — Բանուորական պրօդայութ և	
կուրրիմերի կատաստրոֆք Ֆրանսիայում. — Պրոլետա-	
րիատի օպտիմ նոր թիվ Անդինյում. — Թիւրքիայի	
շարժումների մասին մի քանի գիտողութիւններ:	
<b>13.</b> ԱՐՏԱՍՄԱՆԻ ՀԵՅ ԿԵՍԵՐԻ ՔՐԱՆԵՒ	

Նոր շրջան VI տարի

Հրատ. XVIII տարի

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՅՈՐԴԻԿԱՆ ԵԽ ՔԸՆԱԳՈՎՈՐԻ

Ա. Մ. Ա. Ա. Գ. Ի. Ռ

№ 3


Ս Ա Ր Տ

1906



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՐՄԱԿԱՆ“ Ընկ. Մադար. փող., 15.  
1905



## ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### № 3

Երես

1. ՖԱՐՀԱԴ ԵՒ ՇԵՐԻՆ, Պ. Փափազեանի . . . . .	9
2. ՎԵՐԱ, «ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ» . . . . .	15
3. ** Աւ. հսանակեանի . . . . .	27
4. ԹՈՒՐՅՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆՔԻ ՔՍԱՆԵԽՀԻՆԳԱՄԵԱԿԸ	
Ականատեսի . . . . .	28
5. ԱԳՐԱՐ. ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ Երուանդ Սարգսեանի, . . . . .	38
6. ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ, Բ. Իշխանեանի . .	56
7. ՍԻՄՎՈԼԻՉՄԸ ԴՐԱՄԱՅՅԻ ՄԷՋ, Ս. Յակոբեանի . .	79
8. ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱԼ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆ Տ.-ի . . . . .	87
9. ՆՈՐ ԵՎ ՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ . . . . .	94
10. ՔԵՆԱԿԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕԾՈՒԹԻՒՆ. — Պրոֆ. Պ. Զոմբարով՝ «Բանուրական նարց» Թարգմ. Ա. Աքեղեանի. 2) И. Алибековъ. Елисаветпольские кровавые дни предъ судомъ общества, Завравшайся «Нублициство» и его общественные сподвижники. * 3) Դեռահաներն ինչ կարդան. Յով. Տէր.-Միլա- րեանի . . . . .	95
11. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պ. Գումայի ընտրութիւնների շուրջը . . . . .	97
12. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Սոցիալ էվոլյուցիան սահմանա- դրական երկրներում.—Բանուրական գործադրու և կուրքիէրի կատաստրոֆը Ֆրանժիայում.—Պրոլիտա- րիատի օգտին նոր բիլ Անգլիայում.—Թիւրքիսյի շարժումների մասին մի քանի գիտողութիւններ:	
13. ԱՐՏԱՍՈՀԱԿՄԱՆԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԻ ՔԲՈՆԻԿ . . . . .	

14. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .  
 15. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .  
 20. ՅԱԻԵԼՈՒԱԾ. Ջէյմս Մորիէլ «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ-  
     ԼԻԱՅՈՒՄ», վեպ պարսկ. կեանքից, թարգմ.  
     անգլ. Մ. Կարապետեան . . . . .

### ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրեց՝ գրել պատզ,  
 մանաւանդ բաւերը, յատուկ տնօւներն ու օսաւ բառերը, եւ բերքի միայն մի  
 եւեսի վեայ. առանձնապէս ուշ դարձնել կէտագրութեան, ուղղագրութեան և  
 նոր պարբեռութիւնները ուռուսի լինելու վեայ. Թարգմանութեան չետ պէտք  
 է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Չընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ա-  
 միս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է  
 ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ստանաւորները չեն  
 վերադարձնուում:

3. Քրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւ-  
 նը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները հա-  
 մարտում են անվճարելի:

4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները  
 փոփոխելու կամ կըճատելու իրաւունքը:

5. «ՄՈՒԵՆԻ» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեա-  
 նը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով գիմող անձինք պէտք  
 է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոփոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի  
 փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ որպէս-  
 զի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է  
 այտնել նաև հին հասցէն:

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Յաջորդ համարից կը սկսենք տպագրել մեր աշխատանկից Լէօփ մի ուսումնասիրութիւնը թուրքահայոց շարժման անցիալից՝ «Սասունից այսօր»:

Մորիէրի Հաջի Բարա վէպի առաջին հատորը մեր բաժանորդների համար արժէ 1 ր. (2 րուբլու փոխարէն), ճանապարածախքով 1 ր. 50 կոպ.

Առանձարի «Վշտի Ծիծաղը» մեր բաժանորդների համար 70 կոպ. (1 ր. փախարէն):

1905 թուականի «Մուլճի» սպառուած № 1, 2-3, 4 և 5 ցանկանում են գնել. դիմել առաջարկութեամբ «Մուլճի» խմբագրութեան:

Բանուորները կարող են գրուել «Մուլճին» ԲԱԳՈՒ և ԲԻԲԻ-ԵՅԲԱԹՈՒՄ պ. Դաւիթ Տէր-Դանիէլեանի մօտ («Մանթաշեան և ընկ» գրաս.) ԲԱԼԱԽԱՆՈՒՄ պ. Արշակ Գետնչեցեանի մօտ (Խե. մաստերսկայ Կառիք. Դ-րա.)

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ԲԱՑԻԱԾԴՐԵ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## „ԿԵՎՆՔ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,  
ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՒ ԱՌԱՋԺՄ ԿԸ ՀՐԱ-  
ՏԱՐԱԿԻՒ ԻԲՐԵՒ

## ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., գուրսը  
տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.: Ամսական Թիֆ-  
լիսում 20 կոպ., գուրսը 30 կ., արտասահման 40 կ.: Հասով  
Թիֆլիսում 5 կ., գուրսը 7 կ.:

Հասցէն<sup>1</sup> Տիֆլիս Ռեդակցիա «Կյանք», Չավչաձևսկայա № 4.  
արտասահմանից<sup>2</sup> Tiflis, Rédaction «Kiank». Tschawtschawadzews-  
skaja № 4.

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Իշխանեան

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## „ՅԱՐԱՉ“

ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ՕՐԱԹԵՐԹԻ

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Թիֆլիսում տարեկան 6 ր., ամսական 60 կոպ.: Թիֆլի-  
սից գուրս՝ տարեկան 7 ր., ամսական 70 կոպ., Արտասահմա-  
նում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.:

Դիմել՝ Տիֆլիս, րեդակցիա «Արած» կամ Tifis (Russie)  
Pédaction «Haradj»

Խմբագրատումը գոնուում է Թիֆլիսում, Թրէյլինսկայեա  
փողոց № 6.

ԲԱՑԻԱԾ է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՄՇԱԿ“

ՔՍՂԱՔԸԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(34-րդ տարի)

Առաջնության

**1906**

ԹԻԱԿԱՆԻՒ

«Մշակ» կը հրատարակուի նոյն պլողամել և նոյն  
ուղղութեամիս

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը «Մշակի», տարեկան գինը 10  
ռուբլի է, ամսանեմեկ ամսանը՝ նոյնպէս 10 ռ., տասն  
ամսանը՝ 9 ռ., ինչ և ութ ամսանը՝ 8 ռ., եօթն  
ամսանը՝ 7 ռ., վեց ամսանը՝ 6 ռ., հինգ ամսանը՝ 5 ռ.,  
չորս ամսանը՝ 4 ռ., երեք ամսանը՝ 3 ռ.,  
երկու ամսանը՝ 2 ռ. և մի ամսանը 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագրութիւնը. Ամ ե-  
րիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան  
6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ.  
Պարկասատանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը՝ (Բա-  
զարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գլ-  
րուելու համար և առհասարակ նամակներ և ծրաբներ  
ուղարկելիս՝ պէտք է գիմել հետեւեալ հասցէով. ՏԻՓ-  
ԼԻСԵ, Редакция „ՄՇԱԿ“, իսկ արտասահմանից՝  
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունուում են բոլոր լե-  
զուներսից:

Ապանիկ ըոժանորդագրութիւն չէ ընդունուած: 2—3

ԲԱՑԻԾԾ է 1906 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵ

# ԱՐԵՎԱԼՈՅՎ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՕՐԱԹԵՐԹԻ

**24** պատկերագարդ յաւելուածներով, որ կանոնաւորա-  
պէս լոյս կը տեսնեն ամիսը երկու անգամ.

Թերթի ձգտումն է պետական սահմանադրական կազմ,  
կովկասիան ներքին լայն ինքնավարութիւն, տեղական գեմսա-  
վո, գեմստվօյական մանր միութիւններ և ազատ կապակցում  
այդ մանր միութիւնների:

Հողի բաւարար բաժիններ սակաւահոյ գիւղացուն՝ պետա-  
կան և կալուածական հողերից, և օշինսդրական բաւարարու-  
թիւն բանուորի կենսական պահանջներին:

Ընարարական սկզբունքի լայն գործադրումը ընդհանրապէս,  
և մասնաւորապէս մեր գպրցցական գործի կազմակերպութեան,  
եկեղացական կալուածների տնտեսութեան և հասարակական  
հիմնարկութիւնների գեկավարութեան մէջ:

Թերթի գլխաւոր ուժը ուղղուած կը լինի հայ կեանքի  
պահանջներն առաջ մղելու և աշխատելու նրանց իրականաց-  
մանը ղեծոկրատ ոգով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՈՌԻՍԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՏԱՍԱՆԱՆՈՒՄ

Տարեկան . . . . 7 ա. — —	32 ֆր. 28 մարկ. 28 շ. 7 դոլ.
Վեց ամիսը . . . 4 » — —	20 » 16 » 16 » 4 »
Երեք ամիսը . . . 2 » 25 կ.	12 » 10 » 10 » 2 »
Մի ամիսը . . . — 75 »	4 » 3 » 3 » 1 »
Տարեկան բաժանորդները կարող են վճարել մասնաւորապէս 4 ա. և յունիսին 3 ա.:	

**Ապահիկ բաժանորդագրութիւն չի ըն-  
դունաւում.**

Կարելի է գրուել խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկայա  
№ 11) կամ գործականների մօտ: Ուրիշ տեղերից գիւմել՝ Ռեդակ-  
ութիւն գազետ «Արշալույս». Կամ Տիֆլիս, էդակցութեան աշխատանքանութեան մասնաւորապէս գործականների մօտ:

Խմբագիր-հրատարակիչ՝ Գ. Մելիք-Կարսագեօջեան Յ

# ՖԱՐՆԱԴ ԵՒ ՇԻՐԻՄ<sup>\*)</sup>

(Պարսիկ պօէմա—դէրվիշի պատմած)

## 1.

Քեզ, իմ անդին էակ, քեզ եմ նուիրում Ֆարհադ—  
Շիրինի գողարիկ այս զբոյց:

Վառ Արևելքի սէրն է նրան ծնել Շիրազի հովան  
Ջրերն ուռաճացրել վարդենիների բուրմննքն օրօրել:

Անցել—քայլել է դարերի զիխով, անմոռնուկ ծաղ-  
կի հրապոյըն ունի, սիրածդ զեփիւռի մրմննջը տար-  
փոտ, և զիտէ խօսել թէ չերմ սրտերի, թէ մեծ մըտ-  
քերի:

Քեզ եմ նուիրում այրուած սրտերի այս խորունկ  
վէպը, հանած հնութեան անյատակ ծովից՝ որպէս մար-  
գարիս: Որպէս մի հին զիրք, որի էջերը լի իմաստու-  
թեամբ՝ զիտեն դեռ յուզել, զիտեն ջերմացնել:

Քեզ եմ նուիրում նոյնքան մեծ սիրով, որքան Ֆար-  
հանգը սիրեց, որոնեց, ընկած... և ընկած տեղը նոնե-  
նին բուսաւ:

## 2.

Եւ զիտէր սիրել Ֆարհադը Շիրինին: Սիրել այն

<sup>1)</sup> Այս պօէման իբր հիմք ունի պարսկական յայտնի «Փարհադ-Շիրին» կամ՝ Էնարլը «Փարհադ» (Փարհադի նուռը) զբոյցը: Պօէման կարդալիս՝ անհրաժեշտ է յատկապէս ուշը դարձնել թէ շեշտերին և թէ կէտադրութեան: Ծ. Հ.

սիրով, որ չէ մեղկացնում, այլ ոգևորում է, որ սոզունի մէջքին անգամ թևեր բռւսցընում:

Եւ գիտէր սիրել ֆարհաղը Շիրինին: Սիրել այն սիրով, որ աշքը դեմնից՝ ամպերին ձգում, ժայռեր է հայցնում, ճահիճների տեղ՝ վարդեր աճեցնում, անապատի մէջ՝ փշեր տրորում, արեսն շիթերով՝ հնդը բեղմնաւորում:

Եւ գիտէր սիրել ֆարհատը Շիրինին: Սիրել այն սիրով, որ կանգ չէ առնում ոչնչի առաջ, որ չէ խոնարհւում, կծկւում, ստրկանում, այլ որ ներշնչում է, ձղճիմ թզուկին հսկայի փոխում:

## 3.

Գեղեցիկ էր Շիրազի հովտի չքնաղ Շիրինը: Գեղեցիկ—որքան գիտէ ստեղծադործել վառ Արեեցի երազող միտքը, ճոփ երևակայութիւնը:

Գեղեցիկ—որքան կարող է անըջել սիրային տեսչը, բանաստեղծական խանդավառ սիրաբ:

Գեղեցիկ—որքան Շիրազի նորածիլ վարդի թարմ կոկոնը, սոխակի երգին բացուող թերթերունքները:

Շիրազը չունէր մի ուրիշ Շիրին: Նա էր իրանի սիրոյ աստուածուհին, նիւթ եղած՝ բանաստեղծների կրքու երգերին:

Ֆարհաղը պաշտոնմ էր Շիրինին: Շիրինը սիրում—մի՛միայն ֆարհաղին:

Երջանիկ էին, սիրով օրօրուն, կենսալից ու ջերմ, դիմազրաւ վշտի, ծաղրող—արհամարհող՝ չար ոգիների, ամէ՛ն տառապանքի:

## 4.

—Խօսիր իմ Շիրին, ասա, դրդիր ինձ, գործել եմ ուզում: Սէրն է սրտումս—նրա կայծերը երկինքն են ձգտում, նրս են որոնում:

Ասա, կ'ուզե՞ս այդ գոռ լեռները հարթեմ—դաշտ շի-

նեմ. անապատի մէջ՝ դրախտ կառուցանեմ, աւերիչ գետի հոսանքը դարձնեմ, չար ոգիներին ճզմեմ-հալածեմ, աշխարհը մի՛միայն սիրոյ, բարութեան մի հովտի փոխեմ... խօսիք, իմ Շիրին...

Եւ Շիրինը խօսեց:

Խօսեց Շիրինը և իր Ֆարհադին մեծ գործի մղեց:  
Ուզեց, յիրաւի, իրանն ու թուրանը երջանիկ տեսնել, ապա՛տ չարիքից, ապա՛տ վշտերից, դառն արցունքներից։ Ուզեց որ իր շուրջը սէրը միայն թագաւորի—անսահման սէրը, բարիք մնուցանող, ժպիտ, երգու կեանք...

—Ելիք, իմ Ֆարհադ, ասաց նա ժպառն։ Սիրոյ կայծերովդ տապարդ զինիք, այդ գաժան լեռան խորքերը մտիր. պեղիք, որոնիք, չար ոգիների ձեռքից Զուի՛-Շիրը<sup>1)</sup> կորզիր—մարդկանց նուիրիր։

Թող բղիկն նրա ազնուացնող, չարիքը հալածող անմահ ջրերը. թող ոռոգէ նա վշտի դաշոը, վշերի աեղ՝ վարդենի բուսցնէ, ամէն մի տանջանք՝ ծիծաղի փոխէ և արցունքներին վերջ տայ—ժպիտը թագաւորէ։

5.

Ելաւ Ֆարհադը։ Կորզեց ասապարը, ջերմացրեց զինեց իր սիրող սրտի բոցոտ կրակով, կոացաւ—գգուեց չքնաղ Շիրինին, ամրացրեց դօտին, ճանապարհ ընկաւ, լեռների սթին խորքերը մտաւ, Զուի՛-Շիրը չար ոգիների ձեռքից խլելու իջաւ։

Բայց ինչու յանկարծ սեղմուեց, մենակ մնացած Շիրինի սիրտը։ Ինչու կոկորդը դաւնացաւ, մթագնից աչքը։

Կարծես չար ոգին էր այն, որ մօտ եկաւ նրա տկանջին, փափսաց, ասաց.

—Աւաղ, ով Շիրին, գնաց Ֆարհադը, գնաց յա-

1) Ասապելական մի գետ։ Հիւրի-փէրիների կեանք տուող, անմահացնող և զուարթութիւն ու կենսունակութիւն ներշնչող նեկտարի գետը՝ ըստ պարսկական առասպելների։ Ծ. Հ.

Հիտեան։ Որոնող սիրտը՝ մտքի՝ է փոխւում։ որոնող միտքը սիրտն է թառամեցնում և կամ լայնացնում— աշխարհն ամփոփում, միակ Շիրինների մոռանում-անցնում, և կամ, յօշոտում, ամբողջ արիւնովը՝ մարդկանց վշտերի մեծ գնիլ գտանում...

Ինչու այդպէս սեղմուեց Շիրինի սիրտը, կոկորդը դառնացաւ, Շիրազի հովտի շքեղ այդ վարդը բացաւ, վշտացաւ...

## 6.

Գնաց ֆարհադը, քայլեց ոգեորութեամբ, քայլեց շնաւ երկար։

Մտաւ լեռները, իջաւ անգունդներ, տապալեց ժայռեր և երկրի խորքում գետակը որոնեց, Զուի-Շիրը աշխարհին նուիրել ճգնեց։

Չար ոգիները յուղուած, զայրացած գետը քաշեցին, խորքերը տարան, որոնող հսկայի ջանքերը ՚ի դերի հանել մտածեցին։

Իսկ ֆարհադը յամառ ու տոկուն, գառն տանջանքներով, երկար տքնութեամբ՝ պեղեց ու պեղեց, գոռ հարուածներով լեռները թնձնդ հանեց, խաւարը հալածեց, ժայռերը փշրեց. որոնողութեան տենդով համակուած՝ ժամանակը մոռցաւ, տարիների զլխով ոստնեց ու անցաւ։

Հասաւ ակունքին. հասաւ, իրաւ է. բայց թէ Երբ, ինչպէս— դա Աստուած զիտէ։

Ու երբ հասել էր—ոյժերը ժողովեց, մի յեալին թափով նեկտարը թազցնող ժայռը զլորեց և դուրս ժայթքող փրփրագէզ գետակի երգը նա երգեց...

Երգեց խսնդալից, երգեց աւիւնով...

## 7.

Զարմանք, ոգեորութիւն, շքեղ յաղթանակ—սպահ մի մոռացրին և սէր, և Շիրին։

Լոյսն էր՝ ազատուադ՝ Խաւարի՝ քանախից. լոյսն ու բարութիւն, աշխարհն ազնուացնող անմահ հեղուկը, որ դարեր ամբողջ կաշկանդուած—պրկուած, չար ողիների շղթայով ճնշուած—տոկուն, ջերմ սիրոյ մղմամբ ազատուած, ոստնում էր, եխում, աշխարհին գնում:

Եւ հսկայ, երկար ջանքեր գործ գնող ֆարհադը կուացաւ, Շիրինին յիշեց երազի նման. տոչորուած շրթունքը գրոշմել ուղեց կաթնահամ ջրի փայլուն շիթերին, որ այնտեղ—հեռու սպասող Շիրինը այդ համբոնին առնէ, հրճուել, ոգեսրուի, վարդերի տուաջ՝ յամառ, ջերմ սրտի յաղթանակն երզի:

...Բայց ահա յանկարծ ջրերը յուզուեցին, ես ընկրկեցին, փրփուր-դիզացան, սոսկումով ահեղ՝ ձերմակ բաշերը թօթուեցին արագ և ֆարհադի ականջին, հեռու տեղերից, հասաւ քամու ձայն՝ տխուր, մահաշունչ. —

—Թշուառ որոնող, անբախտ իմաստուն. դու որոնում էիր՝ Շիրինը մոռացած, Զուի—Շիրը պեղում։ սէրդ կաշկանդած... Ու մինչ փնտում էիր, տքնում, տառապում—Շիրինը ծիւրուած՝ տարիներ ամբողջ, նստած սպասեց և մեռաւ կարօտից ու «ֆարհադ» կանչեց...

Զրերը յուզուեցին, և բաշերը թօթուեցին, ես ընկրկեցին...

Ֆարհադին թուեց՝ աշխարհը կործանուած, ժայռերը նորից-նոր՝ թաւալած—ընկած. լեռը կարծես դարձեալ փուլ եկաւ ծածկեց, կաթնահամ ջրին տարաւ—անհետացըեց:

## 8.

Յուսաբեկ, ընկճուած, նայեց ֆարհադը ետ գնացող գետի փայլուն ջրերին. իր դէմքը գննեց, տեսաւ կնճիռները, տեսաւ թէ ինչպէս սահող տարիները՝ ծիւնն էին բերել տառապող գլխին:

—Հասկացաւ այժմ, որ սահել—անցել էին տաս-

Նեակ տարիներ։ Շիրինը մեռել էր յուսահատ՝ այնտեղ,  
մինչ ինքը որոնել էր, տառապել՝ այստեղ։

Ու ելաւ հսկան, չուզեց այլս տաղբել։

Ել ինչու ապրել, որոնել, գիտնալ, լեռների խոր-  
քեց բարիքը դուրս կորզել—երբ ինքը, որոնողը և ոչ իսկ  
նրա կաթիլին մօտենալ զօրեց՝ առանց զառն վշտի,  
սպանիչ վշտի։

Շիրինը մեռել էր։ Առանց Շիրինի կեանքը միաք  
չունէր, առանց ջերմ սիրոյ՝ ապրելը չարժէր։

Սէրն է հասցնող մարդուս—բարձր աստղերի. ոէ-  
րը—թե տուող, ժայռերը փշող, սէրը—վարդ բուսցնող,  
բարիք սերմանող...

## 9.

...թնդաց լեռ ու ձոր, մանչեց՝ չուր, ծով. վտու  
արշալոյսի տակ վայլեց ֆարհաղի՝ սիրոյ կայծերով զին-  
ուած սուր տապար... և Զուի-Շիրի ջուրը արիւնով ներ-  
կուեց, յուզուեց, ետ գնաց, լացաւ, ամօթով լցուած՝ խա-  
ւարի կրծքի մէջը թազնուեց։

Տապարի կոթը մե՛ծ ուժնութեամբ վարսուեց գետ-  
նի մէջ, ֆարհաղի արիւնը նրան ոռոգեց... և Շիրազի  
հովտում, տարիներ յետոյ, բուսաւ մի մեծ ծառ՝ արիւ-  
նոտ ծաղկով, արիւնոտ պաղով...  
Նոնենին էր այն...

## 10.

Ու ծառն ամէն տարի, ուր որ էլ լինի—ունի պը-  
տուղների մէջ մի հատը՝ կծկուած, որում երկու սիրո  
կայ՝ միմեանց միացած, խանձուած, առչորուած...  
Ֆարհաղ—Շիրինի սրտերն են խամրած...

Վ. Փափազեան

## ԱՐԵՎԱ

### “ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ”

Մ’ ի աղջկայ օրատետքից 1)

Գիշերը:

Դարձեալ ես արթուն եմ, և անհանգիստ հոգով: Ես աշխատում եմ ուրախանալ:

Հոգուս մէջ յանկարծ բռնկւում են երանելիութեան վայր կեանները. բայց իսկոյն փոխում են կեղծ բռնուն կրքի և կամ երջանկութեան այնպիսի դրութեան, որի գիտակցութիւնը ինձ տանջում է:

Որոշուած է հարսանիքն անել գեկտեմբերի 15-ին: Ես չեմ ցանկանում, որ այդ օրը շուտ գայ:

Միթէ իմ սէրը այնքան քիչ և այնքան չնչին է, որ նոյն իսկ սիրած մարդու երջանկութիւնը չի անդրադառնումնրա մէջ:

Ես վերլուծում եմ իմ ամեն մի միտքը: Ես փորում եմ իմ սիրաը, փնտրում եմ նրա գաղտնի հնագարանում իմ այդ անտարբերութեան պատճառները: Միթէ ես էլ ժամանակակից շատ մարդկանց նման, կորցրել եմ իմ զգացմունքների անմեղութիւնն ու անմիջականութիւնը: Կամ գուցէ ինձ շփոթում է իմ հօր անբաւականութիւնը, որ ուզում էր ինձ համար հարուստ և շոայլ կեանք ստեղծել:

Կամ գուցէ սա տանջանքի և վշտի նախազդուշացում է:  
Ես սնուտիալաշտ եմ...

Հոկտեմբերի 8-ին:

Այսօր ինձ մօտ եկան իմ ընկերուհիները: Վաղուցուանից նրանք ինձ հաւատում էին իրանց սրտի գաղտնիքները և ես գործադրում էի նրանց, որպէս խորհուրդներ ընդունող աւ-

1) Տես «Մաւրն» № 2

տօմատ... Ես իմ ամբողջ սրտով լուսանում էի իմ հասակակից-ների հետ նրանց փոքրիկ տանջանքները, ուրախութիւնները: Իսկ ինձ փակեցի նրանց հայեացքներից, որպէս մի գաղտնի արկղ:—Ես միշտ եղել եմ առանձնացած և լուակեաց, զա հետևանք է իմ մեկուսացած կրթութեան:

Իմ նշանուելը սկնմացիա-առաջացրեց և ահա նրանք շտապեցին ինձ մօտ՝ մի փոքրիկ գաղափար կազմելու իմ զգացմունքների մասին:

Իմ գաղտնապահութիւնը մի մեծ հարուած էր այդ հետաքրքրի էսկիների համար:

Միայն Ռեգինան, որ իր սրտակից և անկաշառ վերաբերամունքով երբեմն թեթեացնում էր իմ զժուար ըուպէները, գիտէր իմ փոքրիկ ըրումանը: Իսկ միւսների երեակայութեան հսկովին ազատութիւն տուի:

Գուցէ այս ըուպէիս նրանք ծիծաղաշարժ մի պատմութիւն են հսարում իմ վերաբերմաք:

Երբ ևս գիտում եմ իմ շրջանի օրիորդներին, նրանց մասկերոյթային և թեթեամիտ կեանքը, նրանց մշտական վազվըզելը մէկ Փլիբրտից դէպի միւսը, երբ յիշում եմ, որ մարդկային կեանքի ամենանշանաւոր և ամենաթանկագին մօմենտները նրանց համար կամուրջի դեր են կատարում մէկ զուարձութիւնից դէպի միւսն անցնելու համար—ես խորին թախիծով գալիս եմ այն եղբակացութեան, որ կանայք, չնայելով ազատագրական չարժմանը, զեռ երկար ժամանակ չեն ազատութամարդու խնամակալութիւնից:

Բոլոր այս թեթեամիտ և մակերեսոյթային էսկիները, չընայած իրանց ստացած կրթութեանը, ըուլորովին անընդունակ են լուրջ աշխատանքի:

Նրանք մտնում են ամուսնական կեանքի մէջ, ասանց ծանօթ լինելու կնոջ իսկական կոչումին և այն լուրջ պարտականութիւններին, որ ընկնում են կնոջ վրայ: Նրանք ոլէտք է գառնան մայրեր, զաստիարակչուհիներ, նրանք պէտք է կատարեն ամենամեծ գեղարուեստական գործը—ստեղծեն մանկան հոգին, նրանք, որ ապրում են միայն զուարձութեան, բաւականութեան, գատարկ և խարուսիկ բաների համար... Եւ նրանք կը հառաջեն և կը տնաքան մայրական ճնշման տակ...

Մեր գաստիարակութիւնը մեղաւոր է մեր առաջ: Եւ ևս շնորհակալ եմ իմ բախտից, որ տուել է ինձ լուրջ, կանգուն և ինքնուրոյն բնաւորութիւն, որ հեռու եմ պահում ինձ այդ սոսակալի գատարկութիւնից:

Հոկտեմբերի 23-ին:

Այժմ ևս քիչ ժամանակ ունիմ խոստովանութեան համար, ես բարեխիղճ կերպով բաժանում եմ ժամանակս աշխատանքի և սիրոյ մէջ... և մէկը գեղեցկացնում է միւսին:

Տնունութիւնը առանց իմ օգնութեան չի կարող զլուխ գալ: Իմ սիրելի մայրիկը սրտի կոկիծով է մտածում այն ժամանակի մասին, երբ անտեսութիւնը իմ խոստ հսկողութիւնից պիտի անցնի նրա ձեռքը: Նա զբաղուած է իմ հարսանիքի պատրաստութիւններով և հազարաւոր մանր մունք բաներով, որ պէտք է վերջացնել մինչև այդ օրը:

Երեկոները Գէորգի հետ նստում ենք սենեակի մի անկիւնում: Շատ անգամ ժամերով անխօս ենք մնում: Ո՞վան բովանդակալից է այդ լսութիւնը: Մի միծ հանգստութիւն է տիրում մեղ վրայ: Մենք չնշում ենք մեր մօտիկութիւնը: Նա պատկառանքով և լրջութեամբ համբուրում է իմ մատների ծայրերը մէկը միւսի յետելից... և յետոյ մենք երկուսս էլ ծիծաղում ենք, միաժամանակ... բոլորովին կամաց.. Այս խաղաղ և քնչքոյց երեկոյիան ժամերի մէջ է երջանկութիւնը...

Նոյեմբերի 6-ին:

Երկու շաբաթ բաժանում է ինձ այն երանելի տրամադրութիւնից, որ արտայայտել եմ իմ օրագրի վերջին երեսներում: Երկու շաբաթ: Նրանք ինձ համար տարիներ են, տասնեւակ տարիներ:

Մարդ կարող է մի քանի օրուայ մէջ հոգեպէս ծերանալ: Ենում են վայրկեաններ, որ թրի ասյրին են նմանում: Կամաց կամաց մարդ արիւնաքամ է լինում նրանից. բոլորովին կամաց...

Ես չեմ կարողանում իմ մտածմունքների շարքերը վերջացնել, մղաւանանջը խեղդում է ինձ: Ես զժուարութեամբ եմ չնշում: Դեռ չլացած արտասունքները նորից թափանցում են իմ հոգու խորքը և այնուղ փոթորկում, իմ սրտի մէջ... Նըրանք խեղդում են ամեն մի լաւ բան՝ բարը իմ յոյսերը, իմ ամրող հաւատը, երջանկութեան ամեն մի հնարաւորութիւնը...

Այդ պատահեց միայն մի քանի օր առաջ: Գէորգի հետ վերադառնում էինք օպերայից: Գեղարուեատական արտադրութիւնների գեղեցկութիւնը մարդ աւելի խոր և աւելի մարուք ըմբռնում, երբ վայելում է սիրած անձի հետ:

Մենք զնում էինք թևանցուկ, քաղաքի միջով... Մենք թարմացել էինք, նորոգուել քիչ առաջ ստացած ապաւորութիւնների ազգեցութեան տակ... Գէորգը խօսում էր այսովէս Մարտ. 1900.

լաւ և ոգևորուած։ Ես ուրախանում էի, տեսնելով նրա երիշտասարդական հրճուանքը։

Յանկարծ խօսակցութեան կիսին նա լոեց։ Ինձ թուաց, թէ նու այլայլուեց։ Մեր գէմից մի կին էր գալիս մի պարսնի հետ թիանցուկ։ Նա այնքան էլ երիտասարդ չէր և ման էր գալիս օրօրուելով։ Նրա գէմքը գեղեցկութեան հետքեր էր կրուեւ։

Մեր կողմից անցնելիս նա Գէորգին չտվիեց սպառնական ու անամօթ հայեցրով և ակնյայտնի, զիտաւորեալ կերպով խփեց փեշերը Գէորգին...

Գէորգը նկատելի շփոթութեամբ երեսը շուռ տուեց հակառակ կողմը։

Բնապիմամամբ ես ամեն բան հասկացայ։

Մի քանի վայրկեան մեր մէջ տիրեց ծանը լուսթիւն։

—Ո՞վ է զա։—հարցը ես յետոյ։

—Իմ նախկին ընկեր—ուսանողի կինը։

—Դու նրա հետ ծանծթ ես։

—Առաջ էի ծանօթ։

Նրան տանջանք էին պատճառում իմ ինկվիզիտորական և քննող հարցերը։ Բայց ես չէի կարողանում ինձ զոտել։

—Դու նրան սիրում ես։—հարցը ես։

—Ոչ։—կտրուկ կերպով պատասխանեց նա։

Իմ յուղմունքը մեծանում էր հետզհետէ։

—Ապա ի՞նչ։

—Ես նրա հետ յարաբերութիւն ունեի որանից մի քանի տարի տուած։

Այս խօսքերը նա արտասանեց բոլորովին հանդիսու և ինքնավատահ կերպով, կարծես ինձ առելիս լինէր, «երեկ ընթրիքի ժամանակ կաքաւ եմ կերել»։

Աչքերս արտասանքով լցուեցին, կառկածի զգացմունքը միացած հիասթափութեան, զայրոյթի և խանդի հետ մեծանում էր իմ մէջ։

Նա լուս էր և հաստատակամութեամբ սպասում էր այն փոթորկին, որ պիտի հետեւէր նրա խօսքերին։

Մի քանի վայրկեանի մէջ շատ մտածմանքներ անցան իմ գլխով։ Յանկարծ ինձ անհասկանալի թուաց, թէ ի՞նչպէս ոչ մի անգամ չեմ հարցըել նրա անցեալի մասին, թէ ի՞նչպէս իմ առաջին սիրոյ անմեղ ողմորութեամբ հաւատացել եմ նրա մաքրութեանը, որպէս աւետարանին։

Նա այնպէս յաճախ հաւատացնում էր ինձ, որ ինձանից առաջ դեռ ոչ ոքի չէր սիրել...

Ես կուրօրէն հաւատում էի նրան և անհնարին համարում որ նա կը միանար մի կնոջ հետ առանց սիրոյ... ինչպէս ուշիշները... առանց սիրոյ: Ո՛, որքան անարդ և զգուելի է այդ...

Գաղտնիքն իմանալու վայրկեանը պղծեց իմ սրտի ամենամեծ սրբութիւնը և այլու ոչ մի բան չէ կարող նրան մաքրել:

Երկար ժամանակ քայլում էի ես լուս, անկարող լինելով զսպել իմ յուղմունքը: Յետոյ իմ մէջ ցանկութիւն առաջացաւ ամեն բան իմանալու... ամեն բան...

Մի առանձին տենչանքով ես կամենում իմ վէրբքրքրել: —Պատմիր ինձ ամեն բան, Գէորգ: —ասացի ես:

Նա քնքօրէն սեղմեց իմ թերը: Նա սպասում էր, որ ես նրան կը հեղիղեմ կշտամբանքների և գիրաւորանքների տարափով: Իմ հեղութիւնը նրա վրայ ազդեց: Ո՛րքան քիչ էր հասկանում նա ինձ այդ բոպէում... Խոր ու անեզր անդունդը բաւցուել էր մեր մէջ:

—Դու ամեն բան կ'իմանաս, Վերա: Ո՛չ մի բան, ոչ մի բան ես քեզանից չեմ ծածկի: —ասաց նա:

Եւ յետոյ սկսեց պատմել: Նա առանց կասկածելու իր քընքոյց, հեղ և ժողովական պատմութեամբ պատաստում էր սիրտը, ջարդում էր այն ամենը, ինչ որ թանկ էր այն սրտի համար և խորտակում էր այն գեղեցիկ թագաւորութիւնը, որ հիմնուել էր մեր սիրոյ շուրջը:

Ես նրան Աստուած էի համարում: Բանից դուրս եկաւ, որ նա էլ մարդ է, ինչպէս և միւսները: Այս է բոլորը: Սակայն այդ էլ բաւական է երիտասարդ և ծաղկող երջանկութիւնը սպանելու համար:

Ես չեմ կարող կրկնել այն բոլոր գարշանքները, որ նա պատմեց ինձ: Ես քաջութիւն չունիմ նրա երիտասարդական ամբողջ աղրակոյտը քրթելու:

Նա այնպիսի սեռական կեանք է անցկացրել, ինչպէս և միւս տղամարդիկ: Դա մի կեանք է թեթևամիտ կապերով, առանց լուրջ զգացմունքի, վաճառելի սիրով, մի կեանք, որ առանց զիտակցելու խորտակում է իր միջի վեհագոյնը: Նա իր մաքրութիւնը դէն է շպրտել, որպէս կեղտութիւն մի կտոր: Այն, նա ոչ մի անգամ չի հմացել այդ մաքրութեան արժէքը: Նա երբէք, երբէք չի մտածել, որ երբեցէ նրանից մաքրութիւն կը պահանջէ այն էակը, որ անձնատուր կը լինի նրան իր սրտի և մարմնի ամըողջ մաքրութեամբ ու անսրատութեամբ: Ո՛չ: Նա այդ էակին միայն մի տարի հաւատարիմ մնաց, միայն մի տարի և գուցէ դա նրա համար արգէն մի մեծ

գոհողութիւն է: Դրանից աւելին չի կարելի պահանջել նրանից: Այդ ամենը անհրաժեշտ էր նրա երիտասարդ հասակին, այդ պահանջում էր նրա առողջութիւնը... Նոյն իսկ բժիշկները անհրաժեշտ համարեցին այդ... Բացի զբանից, բոլորն էլ այդպէս են անում!!! Ինչո՞ւ միայն ինքը պէտք է բացառութիւն կազմի???: Միայն ինքը!!!

Մինչև հիմա ինձ համար հանելուկ մնաց թէ ի՞նչպէս ևս կարողացայ այն երեկոյ նրա հետ միասին, նրա կողքին հանգիստ սրտով մինչև տուն հասնել. և առհասարակ, ի՞նչպէս կարողացայ, համարեա առանց ընդդիմաֆօսերւ, լսել դաժան և կոպիտ տղամարդու լպիրշ խոստովանութիւնը:

Իմ յուղմունքը անձայն լափում էր ինձ և թունաւոր օձի նման գալարւում իմ բոլոր զգացմունքների շուրջը...

Նա էլի մի քանի խօսքեր, ասեց այն մասին, թէ ինքը շատ լաւ հասկանում է իմ կուսական ամօթխածութիւնը, թէ ևս պիտի քաջարար ինձ յաղթեմ, պիտի նրան ներեմ...

Ես կծեցի շրթունքս, որ չճամ ցաւից:

Նա ինձ գրկեց հրաժեշտ տալիս: Ես կամենում էի թոյլ չտալ. ևս կարիք զգացի նրան յետ մղել ինձանից: Ես այդ չտրեցի:—Եւ ինձ արհամարհում եմ այդ կեղծիքի համար:

Ես ինձ հազիւ կարողացայ նետել իմ սենեակը. շորերով ընկայ անկողնիս վրայ և կծեցի բարձս, որովհետև չի կարողանում լաց լինել... Մինչև զիշելուայ կէսը ևս տենդային զըրութեան մէջ ման էի գալիս սենեակիս մէջ—լուսամուտից զէպի զուռը, զանից զէպի լուսամուտը: Ես ոտներով խփում էի յատակին, ձեռքերս կսորատում: Ես բառնցքով հարուածում էի լուսամուտի շրջանակին և ականջ զնում ապակիների զըրդիւնին: Միայն առաւտեան դէմ բարձրածայն և անարտասուր հեծկլտանքը մի քիչ թեթևացրեց ինձ ճնշող տառապանքը:

Այդ ժամանակուանից անցնում էին օրեր... Ժամերը սողում էին իմ մօտով և կարծես ծիծազում էին ինձ և իմ յունահատութեան վրայ:

Մտքերս կուտակւում էին իրար վրայ և զեղունների նման կըծում հոգիս:

Գէորգը ուրախ է և անհոգ: Այն զիշերուանից յետոյ, կարծես, նա մի մեծ բեսից աղատուել է: Նա չի գուշակում այն աւերումը, որ գործեց ինքը: Ես հեռացել եմ նրանից: Ես խոյս եմ տալիս: Ես չիմ կամենում բաժանել նրա հետ իմ վիշտը:

Նոյեմբերի 10-ին.

Ես քաշ եմ տալիս իմ ժամերն ու օրերը: Այն ամենը, որ առաջ իմ մէջ հրճուանք էր առաջացնում, այժմ խոր վիշտ է պատճառում: Իմ ապագայ տնտեսութեան մասին եղած ամեն մի խօսք տանջում է ինձ: Գէորգի քնքութիւնները անտանելին ենձ համար: Այդպիսի բոպէներում ես խորյն յիշում եմ, որ ինձանից առաջ նա գրկել է ուրիշներին... Փողոցային պոռնիկ-ներին և ամուսնացած դաւաճան կանանց...

Ինձ ցաւ է պատճառում, երբ նրա հայեացքը կանգ է առնում ինձ վրայ: Ինձ թւում է թէ նա մտքով մերկացնում է ինձ: Երեսում է, որ նա զգում է իր խախուտ դրութիւնը: Նա այժմ համոզուած է, որ իր անցեալ կեանքի ուրուականը կանգնած է մեր մէջ: Նա կամենում է իր բարութեամբ, սիրով և հաւատարմութեամբ ուղղել անցեալի սխալը... Այդպէս է առում ինքը...

Շատ անգամ յանկարծակի պայծառանում և լուսաւորւում է հոգիս: Եւ ես մտածում եմ, ինչքան լաւ կը լինէր, եթէ նա գար այս բոպէին, ես իմ գգուանքներով և համբոյըներով կը հեռացնէի նրա ճակատից վշտի հետքն անգամ...

Բայց յետոյ յանկարծ յիշում եմ կատարուածը և ես սոսկում եմ, առ ու սարսափը պատում է ինձ... Ես զգում եմ ձիւնակոյտի մօտենալը...

Նոյեմբերի 15-ին:

Ես չէի կամենում կուրօրէն քննել այն, ինչ չեմ հասկանում: Զգացմունքը՝ ասանց բանականութեան սխալ է: Դրա համար էլ ես մի քանի գրուածքներ կարդացի տղամարդու սեսական կեանքի վերաբերեալ: Լուրջ, գործնական և գիտական գրքերը սատն ու չոր խօսքերով փշրեցին իմ բոլոր ցնորքներն ու երեակայական յոյսերը:

Մերկ ճշմարտութիւնները համապատասխանում էին իմ սրբազնուած զգացմունքներին: Այդ ճշմարտութիւնները խորտակեցին իմ վերջին ցնորքները: Բայց նրանք չկարողացան խախտել տղամարդու մաքրութեան հնարաւորութեան համար ունեցած հաւատը:

Նրանց մէջ չոր ու գործնական գարձուածքներով նկարագրուած էին այն բոլոր վտանգները, հիւանդութիւններն ու ախտերը, որ սերտ կերպով կապուած են անտառակ կեանքի հետ: Նկարագրուած էր այն ողորմելի էակների կելքն ու թշշուառութիւնները, որոնք օրէցօր մօտենում են իրանց Փիղիկական և բարոյական անկմանը:

Այնտեղ նկարագրուած էին առողջ կեանքի պայմաններն ու հսարաւորութիւնը: Ողջախոհ ամուսնութիւնը երիտասարդ տարիքում՝ առաջայ առողջ սերունդի հիմնաքարն է համար- ւում:

Խիստ ֆիզիոլոգի այս հայեացքին, որ իր հետագօտու- թիւնների ժամանակ աչքի առաջ չէ ունեցել բարոյագիտական վայրկեանը, համապատասխանում են և իմ զգացմունքները: Մինչև հիմա էլ ինձ համար անըմբանելի է, թէ ի՞նչպէս բար- ձրապարզե մարզը, սեռական ողորմելի հակումներից գրգուած, կարողանում է ընկնել այդ նեխուած ճահճճը... Ի՞նչպէս նա կարողանում է ապականել իր մաքրութիւնը դատարկ, անարդ ստոր և փութանցիկ կապերով... Ի՞նչպէս նա կարողանում է իր անցեալի խայտառակ բեռով դիմաւորել իր անարատ կնոջը...

Մի՞թէ իսկապէս տղամարդու և կնոջ սեռական պատիւը տարբեր է... Մի՞թէ երիտասարդ տարիներում սեռական հա- կումներին բաւարարութիւն տալը—լաւ կազմուակերպուած կեղծիք չէ: Կամ գուցէ բժիշկների կողիտ սխալը: Մի՞թէ ող- ջախոհութիւնը կարող է ունենալ այն սոսկալի հետևանքնե- րը—կեանք և երջանկութիւն խորտակող հիւանդութիւնները— ինչպէս բղջախոհութիւնը:

Եւ մի՞թէ մահացու մեղք չէ՝ կանանց ամբողջ սերունդը դատապարտել հոգեկա: Ու մարմանական տանջանքների և կո- րուստի, եթէ նոյնիոկ մի քիչ հիմք ունենան վերոյիշեալ վը- տանգները:

Իրերի այս տեսակ դրութիւնը բացատրում են ապրուս- տի և դոյցութեան կոուի օրէցօր դժուարանալովը, որ թոյլ չի տալիս տղամարդուն տւելի երիտասարդ հասակում ամուսնա- նալ:

Բայց եթէ մենք աւելի մօտիկից դիտելու լինինք ամեն մի առանձին դէպքը, բանից զուրս կը գայ, որ հէնց միջոց ու- նեցող և ամենից հարուսա տղամարդիկ են, որ անառակու- թեան վիճը անցնելուց յետ են միայն ամուսնանում, այն ինչ աւելի աղքատները, ընդհակառակը, յաճախ քաղցած են մնում և ցրտից դողում, միայն նրա համար, որ կարողանան երիտա- սարդ հասակում ճաշակել ամուսնութեան երջանկութիւնը:

Երկրի այս տեսակ անքաղաքակիրթ դրութեան գլխաւոր պատճառը մեր ժամանակակից բարոյագիտութիւնն է:

Տղամարդն իր ընարած օրիորդից ոչ միայն ողջախոհու- թիւն է պահանջում, այլ և անբիծ վարք: Եւ իրաւունք ունի: Ինկ կինը իր ամուսնուն պէտք է փողոցային պոռնիկների հետ բաժանէ, նա պիտի տանի մայրական բոլոր տանջանքները այն

գառն զիտակցութեամբ, թէ իր երեխաների հայրը երիտասարդ ոյժերը վատնել է վաճառուող զրկերի մէջ,—չվախենաւով կեղափաց և գարշելի հիւանդութիւններից, նա իր անասնական զգացմունքներով մի անջնջելի բիծ է թողել իր անարտութեան վրայ... Եւ այդ արել է իր երեխաների հայրը...

Եւ այգպիսի ամուսնուն կինը պէտք է ամեն օր, ամեն ժամ ուրախ սրատով իրան զոհ ըհրի... պէտք է նրան նուիրուի ամբողջապէս...

Եւ միթէ հնարաւոր է, որ սաքուր, առողջ և անբիծ զգացմունքներով բնաւորութիւնը զղուանքով չփախչի գարշանքներով լի այդ վիճից:

Եւ միթէ կինը կարող է յարգել ամուսնական սրբութիւնը և ստորդ անզամ չխախտել հաւատարմութիւնը, երբ նա համոզուած է, որ իր ամուսինը, գուցէ, սրանից քիչ առաջ իը ընկեր—ուսամողի կնոջ հետ խախտեց այդ հաւատարմութիւնը...

Եւ անա կանայք ուտքի են կանզնել և պահանջում են միանման իրաւունքեր պետութեան և կեանքի մէջ, միատեսակ օրէնքներ, միատեսակ արհեստներ ու զբաղմունքներ... Եւ այդ անում են կանայք, որոնց ամենաբարձր և ամենավեհ կողմն է սէրը,—կանայք, որոնք միայն ամուսնական կեանքի մէջ կը կարողանան լիովին երջանելութիւն գանել:

Միայն շատ սակաւ է պահանջում բարոյական իրաւունքների հաւասարութիւնը, և մինչեւ այժմ գոյութիւն ունեցող երկու տարրեր բարոյականութեան ոչնչացումը:

Եւ դա կոչւում է ազատ սէր.—դա մի տեսիլ է, որի ուրուագիծ ոչ որ չի կարողանում որոշել... Միայն ճշմարիտ և մաքուր ամուսնութեան մէջ է կայանում ազատ սիրոյ միակ հնարաւորութիւնը, թէկուզ նա հասարակութեան հաւանութիւնը գտած չլինի:

Այն կինը, որ անձնատուր է լինում չսիրած ազամարդուն, բարոյական տեսակէտից ոչնչով բարձր չէ պոռնիկից, որ այդ ճանապարհով է իր ապրուստը հայթայթում:

Եւ միթէ տղամարդը, որ իր անձը փշացնում է անառակութեան մէջ, միենոյն պոռնիկութիւնը չի անում:

Անմարը ութիւնը ոչ թէ մարմնի մէջ է, այլ հոգու մէջ: Միոքը, զգացմունքը ապականուում են: Մաքրութեան արժէքի գիտակցութիւնը կորչում է: Բարոյականութեան զգացմունքն ընկնում է:

Հենց զրա համար էլ մենք, օրիորդներս, իրաւունք ունինք պահանջելու մեր ընտրած տղամարդուց միևնոյն մաքրու-

թիւնը, միևնոյն անբիծ մտաւոր կեանքը, որ նա--որպէս խիստ դատաւոր—պահանջում է մեզանից:

Մենք չպիտի բաւականանք այն մնացորդներով, որ թողել են մեզ ուրիշ կանացք...

Մենք չպիտի զգանք տղամարդու բարոյականութեան ստորաստիճանը:

Միայն այդ ժամանակ աւելի մեծ երջանկութիւն, սէր, առողջութիւն և կեանքի ուրախութիւններ կը լինին:

Ես այստեղ խօսում եմ բոլորովին անաչառ, անկախ իմ սեփական ճակատագրից:

Խէժ ստանալու համար վիրաւորում են ծառերը: Ահա այդ տեսակ վէրքերից են կաթիկաթում իմ մտքերը:

Իմ տանջանքը չի կարելի խօսքելով նկարագրել:

Նոյեմբերի 18-ին:

Գէորգը հետեւում է իմ իւրաքանչիւր քայլին՝ միևնոյն բարութեամբ ու սիրելիսւթեամբ:

Բայց ես այլիս նրան ոչինչ տալ չեմ կարող:

Ահստարբեր, յոգնած, անգոյն կանգնած եմ նրա առաջ: Նա բնազզմամբ զգում է իմ մէջ փոթորկուող յուսահատութիւնը, բայց չի կարողանում նրան զարկել:

—Վերա, —ասաց նա ինձ երիկ, —եթէ ես կարողանայի ջնջել իմ անցիւալը, զրա փոխարէն ես կը տայի իմ կեանքի ամենաերջանիկ օրերը:

Ես հայեացքս բնեռեցի գեանին և ոչ մի խօսք չասացի:

—Քրանք միայն խօսքեր են, —մտածեցի ես:

Իսկ նա շարունակեց.

—Հաւատոն ինձ, Վերա, մեզ թշուասացնողը հաստրակութիւնն է, որը ոչ միայն համբերութեամբ տանում է գաղտնի մոլութիւնները, այլ նոյն իսկ քաջալերում, առանց պատնէշներ դնելու հող է պատրաստում նրանց համար: Հաւատոն ինձ, Վերա, մենք ինքներս էլ չզիտենք, թէ ինչ ենք անում, մեր երիտասարդ և անփորձ տարիներում մենք լնինում ենք այդ ճանիճը, ապրում ենք վայրկենական կեանքով... Թիթեաների նման թոշկուում ենք մէկ ծաղկից-միւսը... Դատարկ և մույլ է աղամարդու կեանքը...

—Երբ մարդ մի անգամ ապականւում է, նրան այլիս թողութիւն չկայ, —ասացի ես սառը և անողործ կերպով:

Իմ մէջ կարեկցութեան նշոյլ անգամ չէր մնացել: Գէորգի հայեացքը յուսահատութիւն էր արտայայտում:

—Վերա, —ասաց նա. —Կարելի է նորից մաքրուել, կա-

ըելի է պայծառանալ խսկական և բարձր սիրոյ ճառագայթներով։ Անձնազոհութեամբ լի կիանքը կարող է զնել անցեալը։ Մի ասի—«ոչ»—վերա, մի ասի—«ոչ»։

Ո՞րպիսի խղճալի, օգնութիւն ազերսող երկիւղ էր արտայայտում նրա ձայնը։

Ես հազիւ շարժեցի ուսերս։ Շատ կարելի է նա իրաւունք ունի։ Ես չեմ կամենում նրան դատապարտել...

Նոյնմբերի 20-ին։

Ես նստած էի բաղաբային պարտէզի նստարաններից մէկի վրայ, մինչև որ բոլորովին մթնեց։ Իմ շուրջը տիրում էր խաղաղութիւն և ամայութիւն։ Խորը, ծանրաշունչ լոռութիւն և հիւանչոս ու մեսնող լրջութիւն էր արտայայտում ծերացած բնութիւնը։ Չոր տերեները թափուում էին գետին, որպէս միած թռչուններ։

Աշնան այդ վհատիցուցիչ և անժխիթար զրութիւնը համապատասխանում էր իմ կոտրուած սրտին։

Դրայ հասաւ գիշերը, կամաց-կամաց, համարեա քնքշութեամբ նա փարում էր մեսնող օրուան, գրկում, փաթաթում էր նրան իր ծածկոյթով։

Հեղահամբոյր կիսախաւարը հոսում էր օդի միջով։ Մերկ ծառերը մի աեսակ սգաւոր տեսք էին ընդունել։ Մուգ կապոյտ սորուկները սահում էիր սպիտակին տուող շաւիզների վրայով...

Ես բոլոր ժամանակը մտածում էի..., մտածում...

Իմ մաքերը բարակ և շիկացած ասեղների նման ծակծը կում էին ուղեղոս։ Իդուր աշխատում էի Ես մտածել մի որևէ արտաքին, աննշան բանի մասին... մի այնպիսի լաւ և քնքոյշ բանի մասին... որ կարողանար ինձ հանդատացնել, որպէս հաւրազատ ձեռքի զովացուցիչ շօշափումը։ Իմ մաքերը յամառութեամբ մի բանի վրայ էին կանգ առնում։

Իմ մէջ եսում է փոթորիկը և ամեն բան կործանում։ Իսկ զուր աշխատում եմ իմ զգացմունքները բանականութեան ենթարկել։

Ես անընդունակ եմ վերջնական որոշումներ անելու։ Իսկ դա միակ ելքն է հոգեկան կուրի բաօսից ազատուելու համար։

Դայրկեանները, մէկը միւսի յետեից, անցնում եմ իմ ուսուցով և ես անկարող եմ իմ ապագան ձևակերպել։

Երեկ հս հարցը թէորդին։

—Արդեօք, դու կը կարողանայի՞ր պոռնիկի հետ ամուսնանալ։

Նա սարսափով ինձ նայեց և օրօրեց զլուխը: Ես լոեցի: Ես մտածում էի իմ սրտի խորքում, որ բոլոր տղամարդիկ ոչնչով բարձր չեն պոսնիկներից:

Երեսում էր, նա հասկացաւ իմ միտքը, որովհետեւ ցնցուեց, կարծես մէկը նրան խիեց:

Նայեմբերի 23-ին:

Ես նկատում եմ, թէ ինչպէս իմ հոգու մէջ մերձենում են ծայրայեղութիւնները. ինչպէս հաւաքւում են անձնական և ոչ անձնական զգացմունքները, թէ ինչպէս իմ «ես»-ից ծնում է խոր սէր դէպի մարդիկ:

Իմ սեփական տանջանքը թեթևանում է, երբ ես մտածում եմ մարդկութեան կեանքի մասին: Ես իմ բանականութեամբ զգում եմ, որ մեր ծրագրուած և շաբլոն դաստիարակութեան ամբողջ զարգացումը կամաց-կա բաց կ'անհատականանց և այսպէս տասած, առանձին անհատների հոգերը բնական ընտրութեան միջոցով, մեր սոցիալական յարարերութիւնները հետզհետէ կը փոխուին... դէպի լաւը:

Ժամանակակից երկու հակառակ ուղղութիւնները՝ անհատականութիւնն ու համերաշխութիւնը, որ գուրս են գալիս յաւիտենտկանութիւնից անջատուած, աշխատում են միանալ և մի ամբողջութիւն էազմել:

Ինձ թւում է թէ այդ միաւորումը կապ ունի սեռական էթիկայի (բարոյականութեան) հետ, այն էթիկայի, որ տնտեսական հարցի հետ զուգահեռաբար այնքան մեծ և լուրջ նշանակութիւն ունի ապագայի համար:

Սեաման բարոյագիտութեան հարցը անբաժան կերպով կապուած է ժամանակակից միւս հարցերի հետ:

Եւ մեր ժամանակի կատող բոլոր կուսակցութիւնների ծայրայեղութիւններից ու սխալանըներից հետզհետէ ծնունդ կ'առնեն իրերի նոր հասկացողութիւն, երջանկութեան ճշմարիտ գիտակցութիւնը և միացնող ու մաքրող ոյժը...

Ես իմ ամբողջ էութեամբ զգում եմ, որ կը գայ բարոյագիտական բարձր բարեփոխութեան ժամանակը: Ժամանակ՝ երբ արական սեռը կը տարբերուի ոչ թէ երօտիքական ձգտումներով, այլ ողջախոն սիրոյ մաքուր կեանքով... որից բարձր ոչ ինչ չկայ աշխարհիս երեսին...

Ժամանակ՝ երբ կանայք կը դադարին սեռական արժէք ունենալուց և էժան կամ թանկ գնով ծախուելուց, որպէս վաճառքի ապրանք, երբ իսկապէս կը տիրապետէ միակնութիւնը և կը դադարի հասարակութիւնից հովանաւորուած բազմա-

կնութիւնը, երբ տղամարդուց կը պահանջեն հետևողականութիւն և նա կը գաղարի իր համոզունքները վաճառելուց և զիջումներ անելուց:

Եւ կը տիրէ ամենաբարձր երջանկութիւնը, որպիսին միայն կարելի է ձեռք բերել, ընդհանուր համակենցաղի երջանկութիւնն—ընդհանուր, մինչև հողածածկ անկիւնները... Այժմ այդ երջանկութիւնը մատչելու է միայն մի քանի ընաբեալներին... Նա աւելի ու աւելի լայն շրջան կը ըսնէ... աւելի ու աւելի խորը կը թափանցէ... Խնչպէս որ արևն իր ճառագայթներով առաջ լուսաւորում է միայն ոտքերի բարձունքները, իսկ յետոյ հետզհետէ տարածում է իր լոյսը հովիտներն ու ձորերը...

(Կը շարունակուի)

\* \* \*

Ուզեցայ կնոջն հաւասար նորից.  
Լալ ու երազել առաջուայ նման,  
Բայց արիւնոտուեց խեղճ սիրտս նորից.  
Եւ որբ մնացի, և թափառական:

Սէր, մնաս բարով էլ քեզ չեմ նայի.  
Զեմ բաղիսի դուռդ ունայն քամու ոլէս.—  
Բայց կուզենայի յաւիտեան լայի.  
Եւ արտասունքս չը ցամէէր սրտէս...

Աւ. ԽՄԱՀԱԿԱՆԱՒ

ԹՈՒԻՐՔՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆՔԻ ՔՍԱՆԵԿՀԻՆԳԱ-  
ՄԵԱԿԻ

1880—1905

(Նիւթեր հայոց նորագոյն պատմութիւնից)

III

Զուլամերկից մենք շարունակեցինք մեր ուղևորութիւնը դէպի ծէմլդինան, կարելով կեավառի ընդարձակ դաշտավայրը երեքօրեայ ճանապարհորդութեամբ։ Կեավառ աւանից կոնսուլը մի պատգամաւորութիւն ուղարկեց շէյխին՝ իր այցելութիւնը զեկուցանելու և հիւրընկալութիւն խնդրելու։ Թուրք և քուրդ մեծաւորները բաւական վարպետորդի են և գիտեն եւրոպացի ճանապարհորդներին, մանաւանդ պաշտօնական անձնաւորութեանց պարտ ու պատշաճ ըսդունելութիւն անել և սիրալիր հիւրընկալութիւն ընծայել, որոնց մի բարով երեսուն թոչուն զարկած կը լինեն։ Նախ որ նրանց կապոյտ աչքերին թող փչելով կ'արժանանան նրանց շոայլ գովաստնքներին և ապա իրանց գրպանները կը լցնեն մուֆթա վողերով ու մեծավին ընծաներով, որ եւրոպացիք առանաբակ Արևելքում մեծ առատաձեռնութեամբ աջ ու ձախ կը բաժնեն, մինչդեռ նրանցից շատերը իրանց երկրում ալքատի մը ու փող մ'իսկ չեն տալ...

Պատգամաւորը վերադարձաւ մի քուրդ ձիաւորի հետ, ուրին շէյխը յատկապէս ուղարկել էր իրը մնանանդար «կոնսուլ ինկիլիկ»-ին հրաւիրելու և նրան ուղեկցելու որպէս վալադ և թիկնապահ։ Քրդական շքեղ տարազը հագին, ձիւնի պէս սպիտակ վաստակով, այնալի թուանգը ուսին, կեռ դաշոյնը մէջը իրած խրած և 300-նոց փամփշտաշերտակով զրահաւորուած մի կատարեալ հեծելազօրք էր մեր քուրդ մահմանդարը, որ նիզակը ի ձեռին խրոխու ու ինքնավստահ մեզ առաջնորդում էր, իսկ դէմքով այնքան էլ տհաճելի չէր նա։ Քրդերը արիական մեծ ցեղին պատկանելով՝ իրանց վայրենութեան մէջ էլ բաւա-

\*) Տես «Մուրճ» № 2.

կան զիւրեկան երեսյթ մը պահել են, մինչդեռ թաթարաֆշարային ծագում ունեցող մահմեղականները ընդհանրապէս մոնղոլական վայրագ, սոսկում ազդող դէմք մ'ունեն: Այդ ամեն տեղ նկատելի է:

Անվերջ և անվախճան լեռնային ելեէջներից ճեղքելով սարային բարձրութիւնները երեկոյեան դէմ մեր քարավանը վերջապէս մուտ գործեց Շէմղինան, շէյխի աւանը: Զմոռանամ ասել որ հարիւրաւոր զինուած ձիաւոր քրդեր հիւպատոսին ընդ առաջ եկել էին, որոնք նախ ճամբուն վրայ կարգով սալամի կանգնելով, երբ նա առաջ անցաւ, իսկոյն և եթ նրան շրջապատեցին և հետեւում էին, իսկ մենք մնացինք ովիտայի շրջանից գուրս և հե ի հե ձիերնիս առաջ էինք մըզզում: Գիւղը մոնելիս շէյխի թարգմանը, Աղա Սէյիդ Մահմադ Սաղըզը, որ մի աչօք կոյր էր, Շէյխի կրտսեր որդու Արդիւշ Գաղէրի հետ ահապին թուով հետևորդներով կոնսուլին ընդառաջ ենելով, «Խոշ ամեղի» բարի գալստեան սովորական ողջոյնը տուեց յանուն իր պետին և հրաւիրեց ի տուն: Հիւպատոսը որ անգլ. թնդանօթածիզ սպայի համազգեստն էր հազած և պատռոյ սուր կողքից կախ տուած, իսկոյն զինուորական բարե տուեց և ձիուց վար իջնելով Շէյխի ղոնաղը դնաց. կարծեն նրա իջնդրանօք իսկոյն եկան մեզ էլ նրանց մօտ տարեցին, վամնզի ոյս տարօրինակ ճամբուրզութեան միջոցին կոնսուլի հետ լաւ մտերացել էինք. նա խօսում էր ֆրանսերէն բաւականի աղատ կերպով, պահելով, թէկ անգլիական արտասամութիւնը և շեշտը:

Երկյարկանի քարաշէն ընդարձակ մեծ տուն մ'էր Շէյխի ղոնաղը, գեղեցիկ պարտէզի մը կենտրոնում կառուցուած, եւրոպական խոշոր լուսագուտներով, որոնք զոյնդգոյն ապակիներով զարդարուած էին ըստ պարսկական ճաշակի: Տունը բաղկացած էր բիրուն եւ աղէքուն արտօաքին և ներքին բաժանմունքներից. դրսր մասը զրուեց մեր արամադրութեան տակ. երկրորդ մասում ապրում էր Շէյխի ընտանիքը 4 գլխաւոր կիներից բազկացած, որից մինը, իբշտէս ես տեղեկացայ, հայազգի մի աղջիկ էր և որին Շէյխը ամենից շատ սիրում է եղեւ այն աստիճան որ թոյլ է տուել նրան մնալ իր հայրենի կրօնի մէջ և պաշտել իր գաւանած Աստծուն ազատօրէն: Այդ հանգամանքը ինարկէ բիշ պատիւ չէր բերում մոլեռանդ հաչակուած Շէյխի տողէրանսին: Բայց թէ ով էր այդ երջանիկ կամ զըժրադի հայ կինը, մենք չկարողացանք հասկանալ: Քիւթիւքչի Սիմոն Զիլինգարեանցը թերես կարողացել էր թափանցել գաղտնիքի խորը և հրապարակ էլ կը հանէր գուցէ, եթէ

1884-ին Սովուջբուլաղի մօտերը քրդերի ձեսամբ չարաշար սպանուած չլինէր: Ուրիմն այդ գաղտնիքն էլ նրա հետ գերեզման մտաւ կամ անգերեզման թաղուեց մոռացութեան մէջ:

Ենդունելութեան մեծ սրահը, ուր մենք գտնուում էինք, բաւականի լաւ ճաշեկով կահաւորուած էր պարսկական ընտիր և մեծագին գորգերով և զիւանսերով ու շալէ վարագոյրներով, կային նաև եւրոպական աթոռներ Վանում շինուած հայ արհեստաւորների ճարտար ձեռքով. բայց սեղանի նման ոչ մի բան չկար այնտեղ. այդ պատճառով հիւպատոսը բաւական նեղուեց ճաշելիս կամ գրելիս, վասնզի այդ գործողութիւնները ըստ արևելեան սովորութեան գետնի վրայ նստած ծալլապատիկ ոտքերով (կրնառուլի որունգները չափազանց երկար էին) պէտք էր կատարել, որ քիչ գժուարութիւն չպատճառեց նրան:

Միւս օր առաւօտեան Շէյխը բարեհաճեց մեզ այցելել և «խոշ ամեղի» ասել, նրան ըսկերանում էին իր մեծ որդին՝ Շէյխ Մէհմէդ Սալլըզը, Արդուլ Գաղէրը և թարզմանը՝ Սէյլի Մէհմէդ Սալլըզ: Նա 45—50 տարեկան մի մարդ էր երկայն հստակով, սեփակ մազ ու մօրուքով և հագած էր ձիւնի պէտ սպիտակ շորեր, գլխին ձերմակ ամանման, միայն ձեռքից կախ թողած թէզթէնը գեղին ունէր բարիքար լինելով: Նրա նայուածքը բարեխարոյ էր, զբաւիչ ու յարգանք ազգող: Նա նըստեց մի դիվանի վրայ հիւպատոսին հետ զէմ առ գէմ, իսկ միւսները ստի վրայ կանգնած մնացին ի յարգանս նորին: Նա բրդերէն էր խօսում, թերես իրանց ապագայ պաշտօնական լեզուն համարելով այն, իսկ թուրքերէն կամ չգիտէր նա բուլըրովին, կամ զիամամբ չէր ուզում խօսել այդ իրանց այնքան ատելի լեզուով, որին նրանք «լեսանը սոմի»՝ յունաց լեզու են անուանում:

Այս առաջի տեսակցութեան նպատակն միմեանց հետ ծանօթանալը լինելով, միայն աւուր պատշաճի խօսքելով անցաւ, և համարեա թէ իբր կէս ժամու չափ տեսեց: Շէյխը իր խորին գոհունակութիւնը յայտնելով կոնսուլին այն մեծ պատուին համար, որ արել էր նա այցելութեան գալով իրան, վերկացաւ և մեկշնեց սինեակից իր սվիտայով: իսկ մենք էլ գուրս եկանք ազատ օղ շնչելու և զիւղին հետ մօտից ծանօթանալու:

Շէմզդինանը չորս կողմից բարձր սարելով պաշարուած մի աւան է աւելի փոսը ինկած, իբր 2 հարիւրակ տներով, քուրդ, հայ և հրէայ բնակիչներով. ունի շուկայ, մի բազնիք, մզկիթ ու մազրասա, ուր քուրդ երեխայը ուսանում էին գետնի վրայ նստոտած մի մոլա ուսուցիչի շուրջը՝ արարերէն և պարսկերէն լեզուներու պարապելով:

Նկատելի էր որ պետական օսմանեան լեզուից ոչ մի դառ  
չէր աւանդուում նրանց:

Գիւղը իր այգիներով, մրգաստաններով և բարդի ծառերով  
աչքի հաճելի մի տեսարան էր ներկայացնուու: Ինչպէս երեսում  
էր ջուրն էլ առաս պէտք է լինէր, բանզի մենք պատահեցանք  
մի քանի վճիռ աղբիւրների, որից քրգուհիք սափորներով ջուր  
էին տանուում. իրենց պարզութեան մէջ նրանք բաւական, ոխ-  
րուն էին: Շուկայուում մենք պատահեցանք վանեցի արհեստա-  
ւորների և վաճառականների, որոնք հանգիստ իրանց գործին  
էին: Ակներեւ էր որ Շէյխը քաջալերում էր օտարազգի եկու-  
որներին իր գիւղը շէնցնելու, որոնց նա իհարկէ մեծ պէտք  
ունէր, նկատելով որ քրգերը առհասարակ արհեստների ու վա-  
ճառականութեան չեն հետեւու: Նրանց աղքատ գասակարգը  
միայն երկրագործութեամբ է պարապում, իսկ հարուստները  
սաղ օրը պարապ-սարապ ման են դալլիս:

Այդ ժամանակ այնտեղ մենք հաւաքուած տեսանք բաւզ-  
մաթիւ քուրդ աղաներ և բէզեր երկրի ամեն կողմից, և ակնե-  
րե գիւղում մի արտասովոր շարժուու ու եռանգուտ կեանք կար:  
Կոնսուլը, ցանկանալով իմանալ թէ զրանք ովքեր էին և ինչու-  
համար եկել էին այնտեղ, մահմանդարից հարցրեց այդ ժամին—  
զրանք աշխաթների պետերն են, պատասխանեց նա, և եկել  
են Սիւլէյմանիյէից, Ամազիայից, Օրամայից, Պօնթանից, Սա-  
սունի լեռներից, Աղերդից, Մուշից, Արագայից, Վանայ վիլայէ-  
թից և Պարսկական Քրդաստանից՝ իրենց մեծարանքը մա-  
տուցանելու Շէյխին, Մեքկայից վերագառնալուն առթիւ և սուա-  
նալուն Ս. Մարգարէի գերեզմանից նրա բերած օրհնութիւնը:  
—Դրանք բոլորը, թէնչպէս կարող եղան իմանալ Շէյխի վերա-  
գարձի լուրը, քանի որ այստեղ հեռազրատուն չկայ, հարցրեց  
կոնսուլը:

—Կ. Պոլսից Շէյխը ուրոյնուուրոյն նրանց հեռագով  
յայտնել էր թէ ի՞րը կը ժամանէ այստեղ:

—Այդ տարրեր ցեղերի պատկանող քրդերը բոլորն էլ  
միենոյն լեզունք են խօսում, թէ տարրեր լեզուներ ու-  
նեն:

—Այս, միենոյն քրդերէն լեզուն են դործ ածում նրանք,  
քանզի նախ որ բոլորն էլ կուռմանչի են և յետոյ ամենքն էլ  
սիւննի իսլամ, կան Զազա կոչուած քրդեր ալ, բայց նրանց  
լեզուն տարրեր է և նրանցից եկած ալ չեն այստեղ, վասն զի  
անոնք մեզանից չեն և Շէյխի իշխանութեանը չեն հպատակ-  
ուու:

—Նրանք ո՞րտեղ են բնակուած:

— Դիարբեկը կողմելում:

— Բայց այս բազմաթիւ հիւրերի ներկայութիւնը պէտք է թանգ նստի ձեր Շէյխին, նկատեց անդիհային, այնպէս չէ:

— Այս, սակայն այդ ոչ մի ծանրութիւն չէ մեր Շէյխին համար քանզի նախ որ նա շատ հարուստ է, օրինակ ամբողջ Շէրի ընդարձակ գաւառի մէջ կատարուած աղնիւ ծխախոսի մշակութեան բոլոր արդիւնքը Շէյխի գանձարանն է մտնում և մինչև ցարդ Պոլսոյ ֆուանկների Ռէժի կոչուած մոնոպոլիացի ընկերութիւնը, որ պետական հաստատուած ալ է, շնորհիւ մեր մեծ Սուլթանին չկարողացաւ կորպել նրանից այդ հինաւուրց իրաւունքը, վասն զի Սուլթանը մեր Շէյխին շատ է սիրում և երբեմն թանկագին ընծաներ ուզարկում է նրան: Յետոյ այս ալ կայ որ այս բոլոր այցելու հիւրերը մեծամեծ ընծաներով են եկած այսուեղ. ոչխար, ձի, արժէքաւոր շալեր, գորգեր և դրամ բերած են նրանք Շէյխին նուէր:

Բանից զուրս եկաւ որ Շէյխը իսկապէս մեծ հարստութեան տէր պէտք է հղած լինի և թէ, հետեւաբար, նա կարող իր որևէ նպատակներն ու զիտաւորութիւնները զիւրաւ էլ գործ դնել, վայելելով միևնույն ատեն այդքան մեծ հեղինակութիւն և ժողովրդականութիւն քրդական աշխարհուում:

## IV

Երբ տուն վերաբարձանք հիւստառոսը նորից խոկոյն գրի առաւ իր բոլոր տեսածն ու լսածը, իր տեղեղագրի նիւթ պատրաստելու համար: Կէսօրուայ ճաշից յետոյ (մեզ առւեցին քըրդական համեզ կերակուրներ, ձիւնի պէս սպիտակ լաւաշ հաց, արժաւով պատրաստած մի շատ ճաշակաւոր քաղցրաւէնի, ապդուղ—մածնաջուր—և առատ, պտուղներ): Կոնսուլը վափաք յայտնեց փոխադարձ այցելութեան զնալ Շէյխին, ուստի թարգման սէյիզը եկաւ նրան առաջնորդելու, մենք էլ հետեւելով բարձրացանք երկլուրդ յարկը և մտանք մի շքեղ կահաւորուած օժակ որ Շէյխի առանձնասենեակն էր: Նա այնտեղ մենակ նստած էր մի գիււանի վրայ, իսկ կոնսուլի և մեզ համար աթոռներ էին դրուած: Ժպտագին և յոյժ քաղաքավարի կերպով նա վեր բարձրացաւ և սիրալիր կերպով ընդունեց մեզ ամենքիս: Երկու թարգմանները սկսեցին իրանց պաշտօնը կատարել հաղորդելով խօսակցութիւնը իրանց պետերին: Սովորական աւուր պատշաճի խօսքերից յետոյ հիւստառոսը յայտնելով իր խորին շնորհակալութիւնը վասն սիրալիր ընդունելութեան և սրտագին տեսակցութեան ու շքեղ հիւրընկալու-

թեան, թոյլտութիւն խնդրեց բացատրելու նրան թէ ինքը ինչո՞ւ համար եկել էր Շէմզիինան: Շէյխը հրաւիրեց նրան խօսելու, յայտնելով թէ ինքը շատ ուրախ պիտի լինէր լսել կոնսուլի անելիքը և յօժարակամ նրան ամին բաւականութիւն պիտի ընծայէր: Այս խօսքի վրայ կոնսուլը իր թարգմանի ձեռքից մի խոշորածալ պահարան առնելով մէջից մի մեծաղիր թուղթ հանեց ու ոտքի ելնելով Շէյխին մատուցեց: Այդ նրա Վանայ հիւպատոս կարգած լինելուն Սուլթանի կողմից դրուած Փէրմանն էր, զոր քուրդ կրօնապետը նմամապէս ոտքի կանգնելով ընդունեց նրա ձեռքից, բաց արեց և համբուրելով ճակատին տարեց, յետոյ տուեց թարգման Սէյիդին որ կարգալով պարունակութիւնը նրան հաղորդէ: Ամէնքս էլ նորից նստանք տեղերս և հրովարտակի ընթերցումը և թարգմանօրէն բովանդակութեան հաղորդումը կատարուեց և թուղթը վերադրձուեց կոնսուլին:

Հիւպատոսը այնատեն սկսեց բացատրել թէ Անգլիական մեծ ազգը և զօրէղ պետութիւնը շատ գարերից ի վեր Օսմանիան փառապանծ տէրութեան հետ բարեկամական անխզելի կապերով կապուած լինելով փոխադարձաբար միշտ մտահոգութիւն ունեցած է Թուրքիոյ ամբողջութեան պահպահութեանը մասին և մեծամեծ զոհողութիւններ էլ յանձն առած է անցեալում ի պահանջել հարկին իր բարեկամութիւնը Օսմանիան Սուլթաններին բանիւ և արդեամբ ցոյց տալու և ապացուցանելու: Յայտնի է որ Թուրքիան ունի մեծ և հզոր թշնամիներ, որոնք միշտ առիթների են ման գալիս նրան ճշնշնչելու և տիրանալու, այդպիսի ցանկալի առիթներ են նրանց համար Օսմանիան երկրի որևէ մասի մէջ պատահած ապստամբութեան խլստումները և շարժումները: Ահա այդ կարգի անախորժ գէպքերի տեղի չտալու համար, ամեն ճշմարիտ հպատակ օսմանցու նուիրական պարտականութիւնն է հսկել և աշխատել, մանաւանդ Շէյխի նման բարձր դերի և մեծ հեղինակութիւն ունեցող անձանց համար զա մի սուրբ իրաւունք է: Սուլթանը զնահատելով Անգլիոյ կառավարութեան հինաւուրց մեծ բարեկամութիւնը բարեհամել է թոյլ տալ հիւպատոսարաններ հաստատուել կայսրութեան բոլոր կարևոր կենտրոններում, որպէսզի նրանք էլ օգնեն ամեն կերպով անկարգութեանց առաջն առնելու, երբ պատահեն: հետևաբար ինքն էլ որպէս Անգլիական կոնսուլ Վանայ վիլայաթի և շրջակայ երկիրների, լսելով որ Հաքիարիում քրդերը մի ինչ որ խլստումների ու շարժմանց մէջ են, ըստ իր պարտականութեան փութացել է զեկուցանել Պոլսոյ մեծ դեսպանին, որի հրամանով ու հրահանգով ինքը Մարտ, 1906.

եկել է այժմ՝ ինդրոյն մօտից ծանօթանալու, և որովհետեւ առանց մեծ Շէյխի գիտութեան ու հրամանին այդ ընդորձակ երկրում ոչ մի այդպէս բան չի կարող պատահել, հարկ է եղել ուղղակի գիմելու նրան՝ լիակատար տեղեկութիւն ստանալու համար, որպէսզի ինքն էլ ըստ այն տեղեկացնէ Պոլս մեծ գեսպանին:

Այս երկար ճառին ուշիուշով ունկնդրելուց յետոյ Շէյխը ինքինքը հոււաքեց և պատրաստեց պատասխանելու:

Նա խորին շնորհակալութիւն յայտնեց Անգլիոյ կառավարութեան, նրա բարեհաճ բարեկամութեան զգացմանց համար պէսի Թիւքքիան, որ միշտ պէտք ունի Անգլիոյ պէս մեծ և հզօր ազգի օժանդակութեան՝ թշնամիեց դիմադրել կարենալու համար: Շէյխը շատ ուրախ է լսելու որ մօտիկ վան բարեքում էլ հաստատուել է Անգլիական կոնսուլատ և մի բարի, ազնուական անձին, որպիսին է իր յարգելի հիւը, յանձնուել է հիւպատոսութեան մեծ ու կարևոր պաշտօնը: Ճիշտ է և ցաւալի որ մերթ ընդ մերթ կայսերութեան մի որիէ մասում անօրէն, անիբար մարգիկ ապստամբութեան գրօշակ են պարզում Օսմանիան բարեխնած տէրութեան դէմ, ստկայն դժբաղտարար դրանք յաւէտ քրիստոնեայ ցեղեր են եղել միշտ, օրինակ յոյները, վալախները, սերբերը, զարադազիները, և վերջերում էլ բուլղարները ու կրէտացիք, իսկ գալով իսլամ տարրին՝ մասնաւանդ թիւրդ ցեղերին, նրանք էլ Համդուլլահ Օսմանեան փառապանն Սուլթաններին ամենահու, հնագանդ և հաւատարիմ հապատակներ են եղել միշտ և հայրենիքի պաշտպանութեանը համար էլ միշտ ի պահանջել հարկին իրենց արիւնը թափել են, քանի որ զօրքն ու զինուուը միշտ նրանցից է առնւում: Թէ շնորհիւ Սուլթանին այսուեզ հաքեարիում էլ կատարեալ անդորրութիւն կը տիրէ եղել. միշտ այն թէ չարամիտ մարդիկ սոււտ լուրեր են տարածել Վանում քրդերի մասին, բայց ինքը Շէյխը իր գլխովը կարող է երդուել որ ոչ մի խլրտում, ոչ մի շարժում չկայ պետութեան դէմ և չի էլ կարող լինել, քանի որ բոլոր քրդերը չափականց գո՞ւ և շնորհակալ են մասնաւորապէս Սուլթան Համիդից, որ մեծ սէր ու վատահութիւն է տածում դէսի մեզ քուրդերս, և նա շատ բարի մտքեր ու հպատակներ ունի քուրդ ժողովրդի համար, որոնք հետզհետէ պիտի իրագործուեն ապագային, ինչպէս որ նորին մեծութիւնը իր բերանով անձամբ Շէյխին ասել բարեհաճել է, երբ նա մի քանի ամիս առաջ պատիւ և երջանկութիւն է ունեցել նրան ներկայանալու Եղլդըզի պալատում: «Թող Ալահը նրա կեռնքի օրերը հազարապատիկ աւելցնէ»,

ասեց Շէյխը յուզուած, վերջացնելով իր ճառը, «քանդի նրա օռով քուրդ տարրը իր բազմազարեան վայրենութիւնից դուրս պիտի գայ լոյս աշխարհ և պիտի մանէ փառքի ու բարօրութեան ասպարէղը»:

Հիւպատոսը և մենք ամենք յոյժ զարմացած մնացինք Շէյխի այս պերճախօս ճառի մասին, որով նա կատարեալ աշուղութեամբ ժխտել էր նրան վերաբրեալ ամեն ամբաստամութիւն՝ ապստամբութիւն սարքելու և արշաւանք գոբծելու նըսկատմամբ։ Դուք բոլորովին մտքից էլ պիտի չանցկացնէիք որ այդ հմտութեամբ և տակտիկայով խօսող մարզը լեռնական պարզամիտ, վայրենի մի քուրդ կրօնաւոր լինէր։ Ընդհակառակը պիտի կարծէիք թէ դուք դէմ առ դէմ գտնուում էիք մի ճառ պիկ դիպլոմատի հետ։

Անգլիային ստկայն դեռ բոլորովին յուսահատուած չէր թւում Շէյխից վերջապէս մի որևէ բան հասկանալու իր ապագայ ծրագիրների մասին, ուստի և շարունակելով իր ընդհատած ճառը, յարեց։ Զեր այդ բոլոր ստածը շատ լաւ է բայց մի բան կայ որ կայսրութեան հեռաւոր անկիւններում, ուր սուլթանի աչքը չի կարող թափանցել և նրա կամքն ու հրամանները պէտք եղած չափով, եռանդով և երկիւղածութեամբ չեն կատարուած լինում, ընական է որ զեղծումներ և զրկանքներ էլ գործունեն, ի մեաս տէրութեան հաւատարիմ հպատակներին և հակառակ Սուլթանի բարի կամեցողութեան, հետևաբար ժողովրդեան այս կամ այն մասը կարող է դժգոհ լինել և մղուել դէպի ապստմբութիւն։ ևս առաւել այս հեռաւոր լեռնական երկրում մասնաւորապէս քուրդ ազգաբնակութիւնը անտարակոյս դժգոհութիւններ ու գանգտաներ կրնայ ունենալ անարժան պաշաօնեաների գործած չարիքների և կամայականութեանց պատճառով, և որովհետև նրանց արգար բողոքի ձայնը տեղը չի համոււմ, ընական է որ տաք վլուխ մարդիկ յուղունեն, նրանց սրտերն ըստուտանան և այս կերպով անախորժ խըլը լրտումներ և շարժումներ առաջնանան, ուստի ես իրը ներկայացուցիչ վեհ։ Թագուհու—God bless Her!—թո՛ղ Աստուած օրհնէ նրան—(սա մի բարեմաղթութիւն է զոր անգլիացիք իշրանց պաշտօնական խօսակցութեանց մէջ յաճախ կրկնում են, որպէս մահմելուկանք իրանց մարգարէի անունը արտասանելիս պէտք է միշտ կրկնեն «Ալիքաթ-իւլ-Սալամ» բացագանչութիւնը) յայտնում եմ ձեզ որ այժմս կ։ Պոլսում համախըմբուած է մեծ պետութեանց գեսպանախորհուրդը, որին մասնակցում է նաև Պապը Սալին—բարձր դուռը. այդ ժողովում Օսմանեան կայսրութեան վարչական գրութեան մէջ ուժորմներ

մտցնելու մասին լուրջ խորհրդակցութիւններ են տեղի ունենում ամեն օր և բոլոր հպատակ ազգերի վիճակը բարուոքելու պիտի ձեռնարկուի ի մօտոյ. դուք բրդերդ ալ ինարկէ ունիք ցաւեր ու պահանջներ, որոնց գարմանելու բաւականութիւն տալ դուք չէք կարող, բայց մեծ պետութիւնները կարող են և յօժարակամ, ուստի և փոխանակ բրդերը իրանց իրանց արդարութիւն անել ջանալու, աւելի բանաւոր և օգտաւէտ կը լինէր ուղղակի դիմել գեսպանախորհրդին մի տեղեկագրով ձեր ժողովուրդի վիճակի բարելաւութեան համար պահանջուած կարգ ու կանոնների մասին, և ես ամենայն ուրախութեամբ յանձն կառնէի մի այդպիսի տեղեկագիրը ընդունել ձեզանից և մատուցանել ժողովին մեր մեծ գեսպան լորդ Դիւֆերենի միջոցով, որպէս ես արեցի Մուշ, Բիթլիզ և Վան նահանգների հայ ժողովրդեան առաջնորդների ինձ մատուցած այդ տակ տեղեկագիրների և առաջարկած ոչքորմների ծրագիրների մասին և վստահ եմ որ չնորհիւ վեհ. Սուլթանի բարեհած մարդասիրութեան և կամեցողութեան ի մօտոյ նրանց (Հայերին) պահանջներին մեծ բաւարարութիւն պիտի զրուի:

— Ինչպէս Զեղ ասացի, պատախանեց Շեյխը, մենք ոչ մի զժոհութիւն կամ գանգատ չունինք մեր տէրութիւնից, և եթէ ունենայինք ալ, ուղղակի կը դիմէինք նորին մեծութեան մեր բարեգութ Սուլթանին, որ միշտ պատրաստ է լսել մեղ և զոհացում տալ մեր պահանջներին. որպէս մի օսմանեան հպատակ իսլամ ինձ բոլորովին ցանկալի ալ չէ օտար տէրութեանց միջամտութեանը դիմել, բանզի զրանով մենք առիթ կը ներկայացնէինք նրանց մեր տէրութեան ներքին զործերին խառնուելու և բացայաց է որ այդպիսի մի քայլ մեր կողմից Սուլթանի, որ մեր խալիքն ալէ, արդարացի զժոհութիւնը և բարկութիւնը կը զրգուէր մեղ դէմ և յետոյ յետինն քան զառաջին վատ կը լինէր մեզ համար: Նորին մեծութիւնը մեզ շատ լաւ է ճանաչում և մեր հլու հպատակութեան մասին նարուրովին վատան է, զրան ապացոյցն այն չնորհները և պարգևները, որոնց նա մեղ քրդերիս յաճախ արժանացնում է և մենք աւելիին պէտք ու ցանկութիւն չունինք բոլորովին»:

Շեյխը իր այս ճառով արդէն իր վերջի խօսքն ասել էր:

Շուտով էլ բերեցին սովորական դայֆին արծաթեայ ափսէի վրայ շարած փոքրիկ ֆինջաններով, որոնք զետեղուած էին ամենանուրը ճարտարարուեստութեամբ շինուած թափանցիկ ոսկէզօծ զայֆերի մէջ: Շեյխը ըստ արևելեան հիւընկալական օրէնքին հրամայեց մատուցանել նախ կոնսուլին և հիւըներին, իսկ ամենից յետոյ ինքն էլ վեր առեց մի ֆինջան:

Թուրբիայում ղայլիք տալ հիւրերին նշանակում է թէ ընդունելութեան վերջն է, հետևաբար պէտք է մեկնել, Ուստի կոնսուլը իսկոյն վեր կենալով ջնորհակալութիւն յայտնեց Շէյլին իր բարեսրտութեան համար և ներողութիւն խնդրեց նրան պատճառած ձանձրութեան մասին: Շէյլը խիստ քաղաքավարի կիրապով մի քայլ ընդ առաջ գալով մօտեցաւ հիւպատոսին և մտերմօրէն խօսելով ասաց որ ընդհակառակը ինքը պէտք է ներողութիւն խնդրէ անկարող լինելով իր բարձրաստիճան ղարիթ հիւրին ըստ արժանոյն մեծարելու, նկատելով որ աշխարհի այդ խուլուխաւար, հեռաւոր լեռնային անկիւններում ոչ մի հնարաւորութիւն էլ չէր կարող լինել մի եւրոպացի անակնկալ այցելուի ճաշակին համաձայն հիւրընկալութիւն առնելու: «Թուք» ասեց նա, «վարժած էիք քաղաքակիրթ կեանքի ամին վայելքներին ու ճաշակին, բայց այստեղ Քրդաստանում մինք մեր շատ սակաւապետութեամբը հանդիրձ, կարծեմ, աւելի առողջ ենք, աւելի երջանիկ ու գոհունակ, և քանի որ բախտի անիւն ալ ձեզ այժմ աշխարհի այս կողմը շարտել է, հարկ է որ դուք ալ հաշտուէք ձեր նոր վիճակի ու կենցաղի հետ ու վարժուէք մեր ապրած կեանքին»:

Հիւպատոսը մի քանի խօսքերով բացատրեց իր գոհունակութիւնը Շէյլի հետ ծանօթանալուն համար և ասեց որ ինքը այսպիսի մի առողջաբար տեղ և այսպիսի մի բարեսիրտ հիւրընկալի մօտ կուգէր մի քանի ամիս ապրել, սակայն ստիպուած է իր ունեցած հրահանդներին հապատակուել: Հեակաբար այս առթիւ ցանկանում է իր յարգանքների հետ նաև հրաժեշտի ողջոյնը մատուցանել նրան՝ հետեւալ օրը կանուխ մեկնել կարենալու համար, որպէսզի շուտով իր պաշտօնատեղին համնի: Շէյլը ասեց որ ինքը սովոր է իր հիւրերին երկար պահել իր մօտ և բաց չժողոնել նրանց գոնէ մի ամսից առաջ, բայց քանի որ այդպէս է, ինքը շատ գժուարաւ պիտի համաձայնուի այդ մասին, և խնդրեց որ կոնսուլը բարեհաճ գըտնուի ընդունել չնչին մի նուէրը, զոր առաւօտեան պիտի մատուցուի նրան, որպէս յիշելիք իրանց փոխադարձ բարեկամութեանը: Գիտնալով որ Քրդաստանում մատուցեալ նուէրը մերժելը մեծ վիրաւորանք է համարւում, հիւպատոսը համաձայնուեց պայմանաւ որ նուիրատութիւնը փոխադարձօրէն կատարուէր: Աշընելեան սովորական սալամները փոխանակուելուց յետոյ մինք դուրս եկանք սենեակից և վար իջանք ճանապարհորդութեան պատրաստութիւն տեսնելու:

### Ականատես

(Կը շարունակուի)

## ԱԳՐԱՐԱՑԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

### III

Նախորդ համարում մենք ցոյց տուինք, որ շնորհիւ օրէնքի մի քանի թերութիւններին և վերապահումներին, ուստի գիւղացիութեան մի ստուար մասը, ճորտութիւնից ազատուելուց հենց սննմիջապէս յետոյ, ունէր հողի այնպիսի նուազական քանակութիւն, որը չէր կարող ապահովել գիւղացունոյնիսկ ամենաանհրաժեշտ պիտոյքները, իսկ գիւղացիութեան մի ուրիշ մասը բոլորովին զրկուեց հողից:

Հասկանալի է որ գնալով հողաբաժիններով անապահով գիւղացինների թիւը պէտք էր աճի, մի կողմից իբրև հետևանք ազգաբնակութեան աճելուն, իսկ միւս կողմից շնորհիւ այն հանգամանքի, որ ազգաբնակութիւնը աճելով, հողաբաժինները պէտք է մանրանային և, հետևապէս, այն գիւղացիններից, որոնք 60-ական թուականին ստացել էին քաւարար հողաբաժիններ, մի յայտնի մասը պէտք է այժմ անցնէր հողով անապահովների շարքը:

Գիւղացիններին ճորտութիւնից ազատելու օրից արդէն անցել է ամբողջ 45 տարի: Եւ այս քառասունընթինդ տարուայ ընթացքում գիւղական ազգաբնակութիւնը համարեա կը կնապատկուել է:

Այսպէս՝ 1860 թ. գիւղական ազգաբնակութիւնը կազմում էր 50 միլ. հոգի (երկու սեռի), իսկ 1900 թ. 86 միլ. հոգի, այսինքն աւելացել էր  $72^{\circ}/\text{o}$ -ով: Եթէ ինկատի առնենք Ռուսաստանում ազգաբնակութեան աճ-

ման աստիճանը՝ պէտք է կարծել որ այս վերջին 5 տարում այս թիւը աւելացել է առնուադն 7—8 միլլ. հոգով. այսինքն, համարեա կրկնապատկուել է: Բայ այնմէ էլ, իհարկէ, և կրճատուել է ամեն մի շնչին ընկնող հոգաբաժնի չափը: Այսպէս օրինակ, կենդրոնի ուժասպառման յանձնաժողովի տուած թուերից երեսում է որ 1860 թ. ամեն մի շնչին ընկնող միջին հողաբաժինները եւրոպական Ռուսաստանի 50 նահանգների համար կազմում էին. կալուածտուիրական զիւղացիների համար՝ 3,2 դես., պետական զիւղ.՝ 6,7 դես և թագաւորական տան (ուղելնից), 4,9 դես., իսկ 1900 թ. միջին հողաբաժննը ամեն մի շնչին բոլոր տեսակ զիւղացիների համար կազմում էր 2,6 դես.: Իսկ այժմ այս վերջին թիւը, իհարկէ, աւելի ևս պակասել է:

Եթէ հողաբաժինների այսպիսի կրճատում մենք տեսնում ենք բոլոր տեսակ զիւղացիների համար, հասկանալի է որ այն զիւղացիները, որոնք դեռ 60-ական թուականներին ստացել էին հողաբաժիններ անբաւար չափերով (որբական նագելներ ստացողներ և այլն) այժմ կամ բոլորովին հողագուրել են և կամ ունեն անքան հող որ սուս զիւղացու տոելով «ու կորից հեկու վայստիտե»\*): Եւ իսկապէս, վիճակազրական տեղեկութիւններից երեսում է որ շատ նահանգներում այդ տեսակ զիւղացիների հողաբաժինները մանրանալով հասել է 0,2—0,4 դեսեատինի:

Այս տեսակ «հողատէրերից» պահանջել զիւղատնտեսութեան կատարելազործուած եղանակ առնուազն կուրութիւն և սննեթեթութիւն է: Խոշոր հողատիրութեան իդէօլոգները և զանազան սպաշտոննեանները ճգնում են ազրարային հարցը և թէ զիւղացու առհասարակ տնտեսական անհախանձելի դրութիւնը բացատրել ոչ թէ սակաւահողութեամբ, այլ զիւղացիական կեանքում զիւղատնտեսական տեխնիկայի սոոր աստիճանով: Մենք բոլորովին

\*) Հաւ գուրս բերելու տեղ էլ չկայ:

միտք չ'ունենք ժխտելու այս վերջինիս մեծ ազգեցութիւնը զիւղատնատեսութեան արդիւնաբերութեան և, ուրեմն, նաև զիւղացու գրութեան վրայ։ Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է որ զիւղատնատեսական կատարելագործուած ձևերի մասին կարող է խօսք լինել միայն այն ժամանակ, երբ զիւղացին կ'ունենայ հողաբաժնի այն ամենափոքր չափը, առանց որին ամսկարելի է ոչ միայն որևէ է կատարելագործութեան, այլ նոյն խոկ որ և է անստեսութեան մասին խօսել։

Բայց, հարցից շշեղուելու համար, թողնենք այս մասին մի ուրիշ անգամուայ, իսկ այժմ աշխատենք պարզել թէ ինչ գրութեան մէջ է ոռւս զիւղացիութիւնը՝ հոգով ապահովուելու տեսակէտից։

Այս հարցի վրայ մանրամասն կանգ առնելը մեզ շատ հեռու կը տանիէր և կ'ընդհատէր մեր այս զվարում աչքի առաջ ունեցած նիւթի քննութիւնը, այնպէս որ այստեղ մենք մի քանի նկատողութիւններով միայն կը բաւականանանք, նա մանաւանդ որ այս հարցին մենք դեռ կը վերադառնանք ապադայում, երբ խօսք կը լինի ազրարային հարցի լուծման համար առաջարկուող դաշնագան նախագծերի մասին։

Պրոֆ. Մանուկյանի հաշուով միայն իգական սեռի ազգաբնակութեան այն մասը, որ ունի 1—2 գես. հոգ՝ հասնում է 2,706,000 հոգու, իսկ մի գեսեատինից ոչ աւել հող ունեցողների թիւը հասնում է 995 հազ. հոգու։ Պրոֆ. Ա. Ի. Չուպրովի և Ա. Ս. Պոստիկովի<sup>1)</sup> շատ հետաքրքիր կրուածքից երեսում է որ նադէլ հողերի քանակութիւնը շատ դէպքերում բաւական չի նոյն իսկ զիւղացիութեան մննդի կարիքները (քրուածքի հոգուն ատարին 19 փութ հաց։

Հաշուելով ամեն մի հոգու համար իբրև նորմա 20

<sup>1)</sup>) Вліяніє урожаєвъ и хлѣбныхъ цѣнъ на русское народное хозяйство. 1897, 1 стр. VI.

փութ հաց և ամեն մի ձիռ համար 40 փութ վարսակ, «կենդրոնի ուժասպառման» առիթով հրաւիրուած մասնաժողովը (коммисія объ оскудѣніи центра) դալիս է այն եզրակացութեան, որ ամեն մի հոգու ընկնող դաշտային բերքի քանակութիւնը (աչքի առաջ ունենալով միջին բերք) համառմ է 16,6 փ., այսինքն նորմայից (չափից) 17  $\frac{0}{0}$  պակաս, իսկ ամեն մի ձիան համար 23,6 փ., այսինքն 41  $\frac{0}{0}$  նորմայից պակաս:

Շատ հետաքրքիր թուեր է տալիս նոյնպէս պ. Գ. Լոխտին իւր «Состояніе сельскаго хозяйства въ Россіи» գրքում (եր. 246): Նա Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգները բաժանում է հետեւեալ 4 մասերի: Այդ 50 նահանգներից 18-ը չունեին (1892—1897թ.) բաւարար քանակութեամբ հաց, 12 ունեին սեփական գործածութեան համար բաւարար (17—22 փ.), 9 ունեին մի փոքր աւելորդ հաց (22-27 փ.), իսկ 11 նահ. աւելի մնացորդ (27 փ. աւել):

Այս բերած բոլոր թուերը ցոյց են տալիս, որ ռուս գիւղացիութեան համարեա կէսը, գոնէ այժմուայ հանդամանքներում, չունի այնքան հող որ ինքն էլ է գոնէ կուշա հաց ուտէր:

Այժմ տեսնենք թէ ինչպէս է աշխատել կառավարութիւնը մինչև այժմ թեթևացնել գիւղացիութեան այդ ծանր դրութիւնը:

Գիւղացիներին ճորտութիւնից ազատելուց յետոյ ոռուաց կառաւարութիւնը հողով ապահովելու գործում իր կատարելիք գերը վերջացած համարեց, և թողեց այնուհետեւ այդ ուղղութեամբ գործել իրանց գիւղացիներին և կալուածատէրերին: Այսուհետեւ առաջինները կարող էին աւելացնեն իրանց հողը միայն կալուածատէրերից զնելու միջոցով: Միայն այս բանը հեշտացնելու համար կառավարութիւնը իւր կողմից 1882 թուին, ֆինանսների մինիստրը Բունգէի ժամանակ, բաց առեց գիւղացիական հողային բանկը, որի նպատակը պէտք է

լինէր սակաւահող գիւղացիներին հող ձեռք բերելուն  
նպաստել:\*)

Կարողացաւ արդեօք այս հիմնարկութիւնը ծառայել  
նպատակին: Ո՞վեր էին գիւղացիական բանկով օգտ-  
ուողները, ահա հարցեր, որոնցով մենք այստեղ կը  
զբաղուենք: Նախ և առաջ պէտք է նկատել որ այս մի-  
ջոցով գիւղացիների հող ձեռք բերելը շատ դանդաղ է  
առաջ ընթանում, և նա մենակ անկարող մասամբ իսկ  
բաւարարութիւն տալ և լուծել հողի սովը Ռուսաստա-  
նում: Եւ իսկապէս. 20 տարուայ ընթացքում գիւղացիկան  
բանկի միջոցով գնուել է մօտ 7 միլլ. դես. հող: Եթէ  
նոյն իսկ համարենք որ այս բոլոր հողը ընկել է գիւղա-  
ցիների ձեռքը (բայց ինչպէս մենք յետոյ կը տեսնենք  
այդ չափազանցութիւն է), այն ժամանակ էլ գիւղացու հո-  
ղատիրութիւնը կ'աւելանար միայն 3,5<sup>0</sup>, մինչդեռ  
այդ ժամանակամիջոցում, ինչպէս մենք վերև տեսանք,  
գիւղացու հողաբաժինը համարեա կիսուել է:

Բայց միայն այս դանդաղութիւնը չէ, որ ստիպում  
է այս հիմնարկութեան գործունէութիւնը ուսումնախ-  
րողներից շատերին՝ վերաբերուել գէպի բանկի գործունէ-  
ութիւնը աւելի շատ բացասական, քան գրական կերպով:  
Այս կարծիքին է նաև հողագործութեան և երկրաշի-  
նութեան նախկին զլխաւոր կառավարիչ Ն. Ն. Կուտ-  
լերն, որ մի քանի տարիներ վարել էր Գիւղացիական  
բանկի գործերը:

Գիւղացիական բանկի գործունէութեան զարգացու-  
մը, ասում է կուտլերը, առաջ բերեց գիւղացիների զա-  
նազան խաւերի, սակաւահողատէրերի և հողով աւելի  
ապահովուածների, աղքատների և ունիորների մէջ մը-  
ցման շնորհիւ՝ հողերի զների բարձրացումը: Այս կուտում  
յաղթութիւնը, իհարկէ, աւելի ուժեղների կողմն էր:

\*) Փետրուարի 15 ից Թիֆլիսում բացուել է այս բանկի  
բաժանմունքը Անդրկովկասի համար:

Բանկի փորձերը՝ անցնել աւելի կարիք ունեցողների կողմը՝ չը բերեցին ցանկացած հետևանքի:

Այսպէս ուրեմն, բանկի ծառայութիւնով օգտւում էին մեծ մասամբ ոչ նրանք, որոնք աւելի կարիք ունեին իրանց հողաբաժնների մեծացնելու մէջ, այլ հեղինակի ձեռնհաս կարծիքով՝ սակաւահող և աղքատ դիւղացիները ձեռք էին բերում հող իբրև բացառութիւն, իսկ աւելի յաճախ սրանց հարկաւոր հողերը զնում էր գիւղացիների ունեւոր մասը, դրանով աւելի ևս վատթարացնելով սակաւահողների դրութիւնը:

Առհասարակ բանկի գործունէութիւնը պարզելու համար, հարկաւոր է իմանալ այն ուղղութիւնը, որը նա ընդունեց իւր գոյութեան հենց առաջի օրից: Գիւղացիական բանկը հիմնելիս կառավարութիւնը նրա գործունէութիւնը սկսելու համար առեց մի յայանի գումար, որը նա պարտաւոր էր վերադարձնել և այնուհետեւ շարունակել իր գոյութիւնը իր սեփական միջոցներով: Այսպիսով հենց սկզբից բանկին արուեց մասնաւոր հիմնարկութեան կերպարանք: Այս բռնած դիրքի շնորհիւ է որ բանկը սկսեց գործել առանց յայանի հասարակական սկզբունքի, աչքի առաջ ունենալով միմիայն իր շահերը և օպերացեաների ապահովութիւնը: Եւ որպէս զի նա կարողանայ շուտով յետ դարձնել կառավարութիւնից ստացած գումարը և այնուհետեւ ստահովել իր գոյութիւնը, բանկը հենց սկզբում ստիպուած եղաւ բաց թողնել  $5^{1/2}0/0$  վկայաթղթեր:

Այսպիսի թանգ նպաստը հենց սկզբից այնպէս վատ աղղեց, որ գիւղացիներից շատերը ստիպուած էին յետ կանգնել Գիւղացիական բանկի միջոցով առած հողերից: Մինչև 1894 թ. նպաստ ստացողները պէտք է տարեկան վճարէին  $8^{1/2}0/0$  (եթէ նպաստը  $24^{1/2}$  տարով էր) և  $7^{1/2}0/0$  (եթէ նպաստը  $34^{1/2}$  տարով էր): Այս  $8^{1/2}$  և  $7^{1/2}$  տոկոսներից  $10/0$  հաշըւում էր իբրև վարչական ծախս  $20/0$  (առաջի գէպքում) և  $10/0$  (երկորդ գէպքում) պարագը հանդցնելու համար (ոգաշենի): Այս տոկոս-

ները շնորհիւ մի շարք բարեփոխումների կամաց կամաց պակասեցրուեց և 1898 թ. հասցրուեց  $5\frac{1}{2}\%$ : Այդ ժամանակ էլաւելացրուեց նպաստով օգտուելու ժամանակը, հասցնելով  $55\frac{1}{2}$  տարուայ:

Մինչդեռ եթէ մենք համեմատելու լինենք նոյն թուականների Ազնուական Հողային Բանկի տոկոսները, մենք կը տեսնենք որ վերջիններում նրանք երբէք  $5\%$  աւել չեն եղել:

Գիւղացիական Բանկի գործունէութեան ամենամեծ դարկ տուեցին 1895 թ. բեֆորմները, որոնց շնորհիւ ընդայնացաւ այս հաստատութեան գործունէութեան ասպարէզը: Այս բեֆորմներով նա իրաւունք ստացաւ իր սեփական հաշուով էլ հողեր գնելու, յետոյ մասմաս գիւղացիներին ծախելու համար, զրտւ վերցնել գիւղացիների կալուածները, որոնք գնուած էին առանց բանկի օգնութեան, նպաստ տալ հողի արժողութեան  $90\%$  քանակութեամբ, նոյն իսկ բոլոր արժողութեամբ և այլն:

Այս ժամանակից յետոյ բանկի օպէրացիաները շատ ընդայնացան, որ երեսում է հետեւեալ աղիւսակից\*):

Թուական.	Առած հողի բանակ.	Արժէքը հազ. ր.	Նպաստ հազ. ր.	Մի դեռ. արժէքը
----------	---------------------	-------------------	------------------	-------------------

Մինչև բեֆորմ.

1891	162,840	6,338	4,439	39
1892	148,018	6,631	4,555	45
1893	157,298	7,887	5,176	50
1894	180,965	8,828	5,744	49
1895	183,242	9,541	6,305	52

Բեֆորմից յետոյ

1897	356,314	25,443	20,895	71
1898	590,229	44,775	36,473	76
1899	717,382	55,682	44,569	78
1900	817,365	67,592	53,515	83
1901	774,251	70,681	54,270	90
1902	595,514	74,804	55,738	108

\*) Проф. М. Герцейнштейнъ «Націонализация земли, крестьянскій банкъ и выкупная операция.»

Այս աղիւսակից մենք տեսնում ենք. առաջինը որ բեֆորմներից յետոյ Գիւղացիական բանկի գործունէութիւնը զգալի կերպով լայնանանում է և երկրորդը որ հողի գները գնալով աւելանում են. Որ հողի գների աճումը առաջ է եկել բանկի գործունէութեան շնորհիւ երեսում է առաջինը նրանից, որ ոչ մի տեղիք չը կայ կարծելու, որ բանկը հետզհետէ սկսել է աւելի լաւ հող ձեռք բերել կամ որ գիւղատնտեսական տեխնիկան այնքան բարձրացել է, որ հողերը սկսել են աւելի արդիւնք տալ և հետևապէս թանգանալ: Իսկ երկրորդ՝ Գիւղացիական բանկը բոլոր բանկերից թէ աւելի թանգ է գնահատում հողը և թէ ամենամեծ նպաստն է տալիս: Նոյն յօդուածում, որտեղից մենք բերեցինք վերեւում զետեղուած աղիւսակը, կայ մի ուրիշ տղիւսակ որ հաստատում է մեր վերե ստածը: Այսպէս, միջին գնահատութիւնը մի գես. զրաւ դրած հողի համար բոլոր ակցիօներական բանկերի համար կազմում է 50 ր., իսկ փոխատութիւնը (սառողան) 28 ր., բոլոր բանկերի համար (և պետական) առաջի թիւը 63 ր., իսկ երկրորդը 37, իսկ Գիւղացիական բանկի համար գնահատութիւնը 71 ր., իսկ փոխատութիւնը 54 ր.: Եւ այդ հասկանալի է: Մուսասատանում ծախուղ հողերի մեծ մասը անցնելով զանազան մարդկանց ձեռքերով, վերջիվերջոյ ընկնում է գիւղացու ձեռքը:

Գիւղացին է որ մշակում է այդ հողը և նրա արդիւնքով պահպանում իր և իւրայինների կեանքը: Հողը միւս կողմից նրա համար միակ միջոցն է իր և ընտանիքի անդամների աշխատանքը գործադրելու համար: Նոյնից չի պահանջում առանձին օգուտ: Նատ դէպքերում հողից ստացած արդիւնքը նոյն իսկ չի հատուցանում նրա աշխատանքը, բայց և այնպէս նա մշակում և բաւական է մնում, եթէ նրան յաջողւում է հողից ստացած արդիւնքով ծայրը ծայրին հասցնել:

Այլ կերպ է նայում հողին կալուածատէրը կամ վաճառականը և այն: Սրանք հողին նայում են զուտ առեւրական տեսակէտից: Եւ հասկանալի է որ ոչ մի վա-

ճառական հողին չի տալ այնպիսի բարձր գին, ինչպիսին ճարանատեալ պէտք է տայ գիւղացին։ Միւս կողմից հասկանալի է որ հողը որքան մեծ կտորով է ծախւում այնքան ամեն մի դես. էժան է նստում։ Այս առիթով շատ հետաքրքիր թուեր է բերում պըռփ. Ա. Ֆ. Ֆորտունատովը իր գասախօսութիւնների մէջ\*):

Այսպէս 1893 թ. ծախուած հողակառընների գներն են.

Մինչև 10 դես. ամեն մի դես. 156,0 ր.

10—20	67,9
20—50	58,2
50—100	55,0
100—500	51,1
500—1000	45,1
1000—5000	38,8
5000—10000	23,1
10000-ից աւել	9,9

Այս թուերից պարզ երկում է թէ ինչ ահագին զանազանութիւն կայ հողերի գների մէջ, նայած թէ ինչ մեծութեան է ծախուող կտորը։

Մի կողմից այս, իսկ միւս կողմից այն հանգամանքը, որ Գիւղացիական բանկը անխտիր նպաստներ է տալիս բոլոր հող աւճել ցանկացողներին, չքննելով, թէ ի՞նչ նպատակով է դնուում հողը, առեղծեցին Ռուսաստանում մի բաւականին մեծ դասակարգ գիշատիչ հարստահարիչների։ Փողովրդի պարագիտները այս օպերացիաների շնորհիւ գիգել են և շարունակում են գիգել ահագին հարստութիւններ։ Նրանք գնում են, օգտուելով բանկի նպաստից, մեծ կալուածներ, նրանց մէջ գտնուող անտառը կտրում ծախում են, գրանով հանելով իրանց տուած գինը. յետոյ կալուածքի ամենալաւ և ամենայարմար մատը պահելով իրանց՝ մնացածը, մանր կտորնե-

\*) А. Фортунатовъ, лекціи стр. 46.

րի բաժանելով, լաւ գնով ծախում են գիւղացիներին։  
Իսկ գիւղացին այսպիսի հարստահարիչներից աւելի  
հեշտութեամբ է գնում, քան բանկի միջոցով, որովհետեւ  
նրանք նրա հետ «եօլայ» են գնում, չեն պահանջում  
զանազան ձևականութիւններ և այլն։ Մենք արդէն վերեսում  
յիշել էինք, որ Գիւղացիական բանկը հենց սկզբում  
բռնեց սխալ և վտանգաւոր ուղղութիւն, կանգնելով վա-  
ճառականական տեսակէտի վրայ։ Եւ որպէսզի աւելի ա-  
պահովի իր գոյութիւնը և չենթարկի նրան բիսկի, նա  
մտցրեց լրացուցիչ վճարների սիստեմը։ Ուրիշ խօսքով,  
բանկը նախատ է բաց թողնում հողի արժեքի ոչ ամ-  
բողջի քանակութեամբ, այլ միայն մի մասը ( $60^{\circ}/_0$   $75^{\circ}/_0$ ),  
իսկ արժեքի մնացած մասը պէտք է ինքը գիւղացին  
հոգայ։ Մրանով բանկը ուղում էր գիւղացիութիւնը ա-  
ւելի հաստատ կապել գնած հողի հետ, որ նա չկարո-  
ղանար աննպաստ պայմաններում յետ կանգնել նրա-  
նից։ Այսպիսով բանկը իւր ձեռնարկութիւնները ազա-  
տում էր բիսկից և գնում հաստատ հիմունքների վրայ։

Այս լրացուցիչ վճարները ձեռնուու էին բանկի հա-  
մար, բայց շատ փաստակար գիւղացիութեան, նամանա-  
ւանդ նրա աղքատ և սակաւահող մասի համար։ Յայտ-  
նի է, որ հողի պահանջը գիւղացիութեան մէջ այնքան  
մէծ է, որ գիւղացին ամեն ինչ պատրաստ է ծախել  
կամ ամեն միջոցով փող ձեռք բերել, որպէսզի կարո-  
ղանայ միայն հող գնել։ Եւ այս լրացուցիչ վճարները զըտ-  
նելու համար գիւղացին շատ դէպքերում դիմում է այն-  
պիսի միջոցների, որոնք աւելի են քայլայում նրա տըն-  
տեսական դրութիւնը։ Այսպէս նա ստիպուած է լինում  
ծախել իր լծկան տաւալը, ձին, կովը, տան կահկարա-  
սիքի մի մասը և այլն, գիմել վաշխառուների օգնու-  
թեան և նրանցից ահազին տոկոսով փող վերցնել։ Զըր-  
կուելով այսպիսով հող մշակելու գլխաւոր միջոցներից,  
մի կողմից նա ստիպուած է լինում աւելի վատ մշակել  
իր հողը, իսկ միւս կողմից շուտով, բանկի և վաշխա-  
ռուի տոկոսն ու փողը վճարելու և նրանցից աղասե-

լու համար, գիւղացին ստիպուած է գոնէ առաջին մի քանի տարիները իրար վրայ նոր գնած հողը ցանել։ Այսպիսով թէ ընկնում է բերքի քանակութիւնը և թէ հողն է ուժասպառ լինում։

Ինչ կողմից էլնայելու լինինք Գիւղացիական բանկի գործունէութեան, կը տեսնենք, որ նա աւելի նըսպասուած է միջակ և նոյն իսկ ունեոր գիւղացիների հող գնելուն, քան աղքատ և սակաւահողերին։

Բացի այս, Գիւղացիական բանկը չի կարող հասնել իր նպաստակին, այսինքն դիւրութիւն տալ հողազուրկ կամ սակաւահող գիւղացիներին հող ձեռք բերելուն, և այն պատճառով, որ նա, ներկայանալով միմիայն իբրև միջնորդ հող վաճառողի և գնողի մէջ, կարող է գալ գիւղացուն օգնութեան միայն այստեղ, ուր կայ ծախու հող։ Ուրիշ խօսքով նրա գործունէութիւնը սահմանափակուած է և, այսպէս ասած, տարածութեան կողմից (որոշացնեած է)։

Եթէ օրինակ, մի տեղում տիրում է նոյն իսկ հողային սով և նրա չորս կողմը ահագին քանակութեամբ կալուածքներ կան, բայց վերջինները չեն ծախսում, բանկը չի կարող ոչ մի կերպ օգնել գիւղացուն։ Ուշադասէրերը ծախսելու լինեն հողը, որ գիւղացիական բանկը կարողանայ նպաստել այդ հողը գիւղացու ձեռքը անցնի։

Այսպէս է ընդհանուր գծերով այն հիմնարկութեան գործունէութիւնը, որը իր բացուելու հենց սկզբից շատ շատերին ներշնչում էր մեծ հաւատ և յոյտ հողային հարցն լուծելու խնդրում։ Բայց այդ մարդկանց հիմնարկութիւնը անհասկանալի չը պէտք է թուայ։ Այսպէս է կեանքում այն բոլոր հիմնարկութիւնների և մարդկանց գործունէութիւնը, որոնք ուղում են միաժամանակ երկու տէրերի ծառայել և հաշտեցնել երկու հակառակ հսկացողութիւններ...

Գիւղացիական բանկը հիմնուած լինելով յայտնի պետական գաղափարով իրաւունք չունէր ընդունել մա-

անաւոր և վաճառականական հիմնարկութեան բնաւոր-  
ութիւն, իսկ ստանալով այդպիսի բնաւորութիւնը նա  
պէտք է բաւականանայ իր այդ դերով և պրետենզեա  
չունենայ հասարակական հիմնարկութեան պատուաւոր  
կոչում կրելու վրայ:

Ճիշտ է անկասկած որ Գիւղացիական հողային  
բանկը նպաստել է մի յայտնի չափով գիւղացիութեան  
հող ձեռք բերելուն: Բայց ընդհանուր առմամբ նա գոր-  
ծել է տւելի ի նպաստ հող ծախողների քան գնողների:  
Իսկ սակաւահող և հողագուրկ գիւղացիներին տուած օգու-  
տը նման է այն օգտին, որը տալիս է պարանը կախ-  
ուածին: Եթէ այսպէս գանդաղ և անբաւարար է գոր-  
ծում այս միջոցը՝ հապա տեսնենք թէ ինպէս է գոր-  
ծում կառավարութեան մինչեւ այժմ հողային հարցը վըճ-  
ռելու համար առաջարկած երկրորդ միջոցը—զաղթա-  
կանութիւնը:

Թէ ռուսաց օրէնսդրութիւնը և թէ ադմինիստրա-  
ցիայի վերաբերունքը գէպի զաղթականութիւնը ընո-  
րոշում է մշտական տատանումներով: Մինչև XIX դա-  
րու կեսը գաղթականութեան վրայ նայում էին միմիայն  
քաղաքական տեսակետից: Յանկանալով Ռուսաստանի  
զամադան ծայրերը բնակեցնել «հաւատարիմ» տարբե-  
րով, ուսւ կառավարութիւնը հովանարում էր զաղթա-  
կաններին:

XIX դարու սկզբում առաջ է գալիս նոր տեսակէտ  
զաղթականութեան վերաբերմամբ: Կառավարութիւնը  
սկսում է նայել նրան իբրև մի կորրեկտիվ, որը կարող  
է թուլացնել իիտ ազգաբնակութեամբ նահանգները:

Բայց այդ ժամանակ գիւղացիութիւնը, գտնուելով  
ճորապութեան մէջ, չէր կարող առանց իր տիրոջ թոյլ-  
տուութեան թողնել իր տեղը և զաղթել նոր երկիր,  
այսպէս որ de facto միայն պետական գիւղացիներն էին  
կարող օգտուել այդ միջոցից:

1861թ. բեֆորմների ժամանակ կալուածատէրերը, վա-  
խենալով որ շնորհիւ զաղթականութեան նրանց տնտեսու-  
թաբա. 1206.

թիւնները կը զրկուեն բանուորական ուժից և միւս կողմից կը թանգանան այդ վերջինները, կարողացան ազգել կառավարութեան վրայ այն մտքով, որ նա սկսեց արգելել և դժուարութիւններ գնել գաղթականութեան առաջ: Բայց և այնպէս բոլորովին դադարեցնել գաղթականութիւնը կառավարութիւնը անկարող եղաւ, և նա ստիպուած 1881 թ. նորից թոյլ տուեց գաղթականութիւնը, միայն՝ նրան թուլացնելու համար՝ դրեց մի շարք խոչնդստներ՝ գաղթելու թոյլտութիւն ստանալու նրկատմամբ:

Այդպիսի դիրք էր բոնել կառավարութիւնը դէպի այս երեսոյթը մինչև 1892 թ., երբ սկսուեց Սիբիրեան երկաթուղու շինութիւնը:

Այս դժի շինելը հիմնովին փոխեց կառավարութեան քաղաքականութիւնը դէպի այս հարցը: Նա սկսեց նպաստել այս շարժման զարդացման և այդ ժամանակից է որ գաղթականութիւնը սկսեց ընդունել փոքրի շատէ խոշոր բնաւորութիւն:

Բայց յամենայն դէպս գաղթականութիւնը չի կարող երբէք այնպիսի չափեր ստանալ, որ նա կարող լինի, նոյն լակ ամենայն տարուայ աւելացցած ազգաբնակութիւնը դուրս բերել դէպի գաղթավայրերը:

Այսպէս ամբողջ 16 տարուայ ընթացքում (1885—1901 թ.) Ռուսաստանից գաղթել են ընդամենը 1,207,000 հոգի, այսինքն աւելի քիչ քան ազգաբնակութեան իւրաքանչյիւր տարուայ աճումը (մօտ 1,250,000): Գաղթականութեան ամենափայլուն շրջանում գաղթականների թիւը երբէք չի անցել 200,000 հոգուց:

Սպասել թէ այսուհետեւ նա կարող է մեծ չափով զարգանալ՝ չկայ ոչ մի հաւանականութիւն և ահա թէ ինչու: Մի կողմից պակասում է այն ազատ հողերի քանակութիւնը, որոնք ծառայում են գաղթականութեան համար, միւս կողմից, այդ հողերի ամենալաւ և ամենայարմար մասերը արդէն բռնուած լինելով, կառավարութիւնը ստիպած պէտք է լինի դիմել այնպիսի հողե-

րի, որոնց բնակչութեան ծառայացնելու համար պէտք է մի շարք դժուար և ահազին ժամանակ ու փող պահանջող բարենորոգութիւնների ենթարկել (օր. ցամաքացնել ճահիճները, ջուր գուրս բերել, լաւացնել աղոտ տեղերը (սոլոհչակի) և այլն): Այսպիսի պայմաններում գաղթականների համար մեծ քանակութեամբ հող պատրաստելը տարէց-տարի դժուարանում է: Ինչպէս յայտնի է գաղթականութիւնը գըլխաւորապէս ուղղուած է դէպի Սիբիր, Կովկաս և Թուրքեատան: Այս վերջիններում, բացի վերև յիշած դժուարութիւնները, առաջ է գալիս հողերի ոռոգման հարցը, որը ինքն ըստ ինքեան դնում է գաղթկանութեան գարգանալու առաջ յայտնի սահմաններ:

Այս բոլոր հանդամանքները ցոյց են տալիս որ գաղթականութիւնը իտկապէս կարող է, այսպէս ասած, տեղական նշանակութիւն ունենալ: Եթէ օրինակ մի գաւառում կամ շատ շատ մի նահանգում հողի սակաւութիւն է և չկան ուրիշ հողեր (կալուածատիրական, ոլետական և այլն), այդ դէպքում գաղթականութիւնը ամենաէտական միջոցն է կարելի համարել ազգաբնակութիւնը նոսրացնելու համար: Այս դէպքում էլ, իհարկէ, գաղթականութիւնը պէտք է գրուած լինի յայտնի հիմունքների վրայ:

Նախ և առաջ պէտք է լաւ ուսումնասիրուի այն տեղը, որտեղ պէտք է գաղթեն: Գաղթականութեան համար տեղեր որոնելիս ոլէտք է ի նկատի առնուեն և տեղական ազգաբնակութեան շահերը, գաղթականութիւնը պէտք է այնպէս զրուած լինի որ այս բանով օգտնուեն միայն կարիք ունեցողները և այլն: Մինչդեռ մինչև այժմս այս պահանջներից և ոչ մէկը աչքի առաջ չի տռնուել: Յայտնի են շատ դէպքեր, երբ չնորհիւ առաջի պահանջի զանցառութեան ամբողջ գիւղեր են կործանուել: Կովկասի համար մասնաւրապէս յայտնի է որ գաղթականները յաճախ հիւանդանում են ջերմով և մասամբ կոտորւում, իսկ մասամբ թողնելով ամեն բան

փախչում են Ռուսաստան։ Եւ այդ հասկանալի է։ Գաղթող գիւղացիներից շատերը հրապուրուելով կառավարութիւնից նպաստ և մեծ հողամաս ստանալու յոյսով, յիմնուելով միայն մի ծանօթի նամակի կամ այդ նոր երկրների մասին պատմած՝ զանազան առասպելների վրայ, ծախում են ամեն բան, հաւաքւում են և ճանապարհ ընկնում։ Բայց որքան մեծ է լինում նրանց հիասթափումը երբ այս տեղերում նրանք մեղքի գետերի և ոսկի սարերի տեղ, տեսնում են ամայի լեռներ, ջերմ և այլն։

Ռուս գիւղացու գաղթականական տաղանդի մասին (Կոլոնիզատօրսկի՝ Ռալանտ) շատ շատերը մեծ կարծիք ունեն և մի ժամանակ այդ կարծիքը շատ տարածուած էր նոյն իսկ գրականութեան մէջ։ Բայց դառն իրականութիւնը և փորձը եկաւ խորտակելու շատ ուրիշ առասպելների հետ ոռւս «մուժեիկի» մասին և այս հրաշապատումը (լեգենդա)։

«Գաղթականական ընդունակութիւնների մասին կարելի էր խօսել, ասում է ոռւս գաղթականութեան ամենակոմպետան մասնագէտ Ա. Ա. Կառուֆմանը, — երբ գաղթականութեան էլն դիմում իսկական բահվիրաները և, որը աւելի կարևոր է, երբ բնակեցնում էին այն տեղերը, որոնք շատ նման էին ծննդավայր երկրներին։ Բայց կարելի է արդեօք խօսել այդ գաղթականական տաղանդի մասին, շարունակում է Կառուֆմանը, եթէ նոյն իսկ այնպիսի մի գաղթական էլգորադոյում, ինչպէս Սլուայր, նամանաւանդ կիրգիզի սևահող տափաստանը, ամենալայն, իսկ շնորհիւ կապալով տուող հողերի հեշտութեան, նաև անսահման ընդարձակութեան, երբ սովը և նրա սովորական ուղեկիցներ՝ ցընդան (հիւանդութեան տեսակէ), տիֆը, մննդական նպաստները (продовольственная ссуда) և աշխատական օգնութիւնը (трудовая помощь) նոյնպիսի սովորական հիւրեր են, ինչպէս և որևէ է Կուրսկի կամ Տուլսկու նահանգում»\*):

\*) Переселение и переселенческая политика

Ծանօթ չը լինելով տեղական պայմանների, հողագործութեան եղանակի, կլիմայի և այլնի հետ և միւս կողմից չունենալով բաւականին գիւղատնտեսական պատրաստականութիւն, որպէս զի շուտով յարմարուի նոր տեղերի պայմանների հետ, գաղթականներից շատերը ստիպուած են լինում վերադառնալ հայրենիք։ Այսպէս 1895 թ. Սիբիր գաղթած ընտանիքներից 10,1% վերադարձել է հայրենիք, 1897 թ. այսպիսիների թիւը հասնում է 38,2%, և 1900 թ. 28%\*):

Հեշտ է ասել «վերադառնալ»։ Վերադառնալը գողթականի համար հաւասար է բոլորովին քայքայման։

Նոր երկիր տեղափոխուելիս, գիւղացին ծախում է իր հողը, տաւարը, տունը, մի խօսքով իր եղած չեղածը, և այս բոլորը նաղդ փող շինելով, Աստծոյ անունը տալիս է և ճանապարհ ընկում նոր երկիր։ Երևակայեցէք նրա դրութիւնը, երբ այդ նոր երկրում չգտնելով այն ինչ որ սպասում էր, նա ստիպուած է լինում, ինչպէս ուռան է տառում՝ «ՀԻ ՍՈԼՈԽՈ ՊՈԽԼԵԲԱՎԱՆ» վերադառնալ հայրենիք։

Գաղթականութիւնը կազմակերպելիս, ինչպէս վերև յիշեցինք, պիտի ուշադրութեան առնուի և տեղական ազգաբնակութեան շահերը։ Մինչդեռ մինչև այժմ, ինչպէս յայտնի է, գաղթականութիւնը մի քանի տեղերում (Անդրկովկասում և Թուրքեատանում) բռնում է այնպիսի հողեր, որոնք անհրաժեշտ են տեղական ժողովուրդի համար։ Այսպիսի տեղերում գաղթականութիւն հաստատելով, կառավարութիւնը խախտում է իր միւս հպատակների շահերը։ Այդ կէտի վրայ մենք կանգ չենք առնում, որովհետեւ այս առիթով մեզ մօտ շատ դրուել ու խօսուել է։

Եւ վերջապէս, եթէ մենք նայենք ոռւս գաղթականութեան վիճակագրութեան, կը տեսնենք որ գաղթականների զիմանը կազմում է գիւղացիութեան

\*) Էնցիկլոպ. русск. сельск. хоз. т. ҮІстр. 1072.

միջակ մասը և ոչ թէ սակաւահողերը կամ հողագուրկերը:

Կառավարութիւնը որքան էլ որ դիւրութիւն լինի տալիս գաղթականներին, բայց և այնպէս գաղթելու համար պահանջում է միջոցներ, գոնէ ճանապարհի և սկզբնական կահարման ծախսերի համար: Այսպէս ոլ Գրիգորեվի տուած թուերից երկում է որ Ռեալանի նահանգից գաղթած ընտանիքների միայն 21% ունէր 50-ը, 38%-ը ունէր 50—150 ը., 22%-ը 150—300 ը., 16%-ը 300 ը.—800 ը., 3%-ը 800 ը.-ուց աւել: Բացի այդ, գաղթականներութիւնը շատ ժամանակ ստանում է տարերային, հօտային երեսյթի բնաւորութիւն: Բաւական է մի անաջող բերք, կամ հրդեհ կամ մի ուրիշ բան, որ համարեա ամբողջ գաւառն վերկենայ տեղից և գաղթի նոր երկիր:

Կառավարութիւնը չի կարող, իհարկէ, արգելել միջին կամ ունենոր զիւղացիների գաղթականնութիւնը, բայց դնելով թէ գաղթականների հող կամ նպաստ տալու կամ նրանց տեղափոխելու և ուրիշ օգնութիւն ցոյց տալու գործը յայտնի հիմունքների վրայ, կարող է զարկ տալ մէկին և կրծատել միւսը:

Աւելի մանրամասն կամգ առնել գաղթականնութեան վրայ մեր նպատակից դուրս է:

Յամենայն դէպս վերև բերած գաղողութիւններն էլ բաւական են ցոյց տալու համար որ այս միջոցն էլ ինչպէս և Գիւղացիական հողային բանկը, անկարող են լուծել հողային հարցը Ռուսստանում:

Խեղուող զիւղացու վզից այսպիսով վերցնուում է ծանրութեան միայն մի չնչին մասը, թողնելով այնպիսի ծանրութիւններ, ինչպէս են սակաւահողութիւնը, իրավագրկութիւնը և տղիտութիւնը, և զիւղացին շարունակում է դէպի յատակ գնալ:

Ինչ է արել մինչև այժմ ուսւ կառավարութիւնը գիւղացու կուլտուրական գրութիւնը բարուոքելու համար: Ոչինչ:

Աւելին կասենք, ոռւս բիւրոկրատիան ամեն միջոց գործ է դրել, սաեղծել է մի շարք խոչնդուներ, որպէս զի գիւղացւն պահի կուլտուրական ստորագիւմնի վրայ:

Ամբողջ 45 տարուայ ընթացքում գիւղից հեռացըռուել է զիւղի ամենակենառակ և ամենաբանիմաց մասը: Ամբողջ 45 տարուայ ընթացքում գիւղից հալածուել է ամեն մի զիւղ, ամեն մի լրազիր, որը կարող էր բաց անել գիւղացու աչքը, և զիւղ է մտել այնպիսի գրականութիւն, որը զրուել է կամ երեխաների կամ յիմարների համար: Խոչնդուներ է զրուել զիւղովոյի, ագրոնոմների, գիւղակոն ուսուցիչների, բժիշկների գործունէութեան առաջ: Մի խօսքով գիւղացին զոնւում էր երկաթի ճընշիչի մէջ, որը աւելի և աւելի էր ճմլում նրան:

Պարզամտութիւն չէ արդեօք տալ ժողովրդին անչափահասի, աւելին կատենք, անասունի իրաւունք, և պահանջել նրանից հասունացած և խելացի մարդու գործունէութիւն!

Այսպէս է աշխատել լուծել ագրարային հարցը Ռուսաստանում կառավարութիւնը մինչև այժմ, և ինչպէս երկում է այսպէս է մտադիր նա շարունակել և այսուհետեւ:

Տեսնենք այժմ թէ ի՞նչպէս են ուզում լուծել ագրարային հարցը զանազան քաղաքական կուսակցութիւնները: Բայց դրա մասին յաջորդ համարում:

Երուանդ Սարգսեանից

## ԿԱՐԵ ՄԱՐՔՍԸ ԵՒ ՄԱՐՔՍԻԶՄԸ \*)

### I

Մարքսի կեանըը, սոցիալ-քաղաքական, հրասկարակախօսական գործունէութիւնը եւ զրական վաստակները:

Segui il tuo corso e lascia dir le genti!

Հետեմիր ճանապարհիդ, և թող  
մարդիկ խօսեն, ինչ ուզում  
են:

Դանեսէ:

### 7.

Մարքսի յեղափոխական գործունէութիւնը.—Նրա տակտիկան.—Դատական պրօցես Մարքսի գէմ և նրա տուած իրաւաբանական-փիլիսոփայական բացատրութիւնները.—Ընդհանուր բէակցիան յամաքայլն նւրոպայում.—Յեղափոխականների էմիգրացիան.—Մարքսն ու Ֆնգելը Լոնդոնում, նրանց նոր օրգանը.—Մարքս-Ենդելսի պատմական տեսութիւնը յեղափոխութեան մասին.—Մարքսի աշխատութիւնը «Դասակարգային կոփէները Ֆրանսիայում».—Պատճառների բացատրութիւնը մատերիալիստական տեսակէտով:

Մեր անցեալ յօդուածի վերջին գլխում համառօտ ուրուագծեցինք Մարքսի հրապարակախօսական գործունէութիւնը 48—49 թուականներին, յաճախ նմուշներ բերելով նրա շանթահարող յօդուածներից, վայլուն տաղանդի լիարժէք արդիւնքներից: Մենք շատ տեղեր դիտաւորութեամբ ենք իրան՝ Մարքսին խօսեցնում, իր սեփական լեզուով, որպէսզի նրա ուժեղ արտայտութիւններից ու սուր, կծու ոճից որոշ գաղափար կազմէ ընթերցողը, որպէսզի չնսեմանայ նրա մտքերի թափն ու ներգործութիւնը:

Մարքսը չէր բաւականանում միայն իր թերթի էջերում

\*) Տես «Մուլճ» № 1 և 2.

Ներքին ու արտաքին քաղաքական խոշոր երևյթների վերլուծութեամբ և ծանրակշիռ խնդիրների քննադատական լուսարանութեամբ: Մարքսը յեղափոխական հրապարակախօս էր—խօսքիս լաւագոյն իմաստով: Հուենոսեան յառաջադէմ ու քաղաքակիրթ երկրի ծոցում ծնուած զաւակը մաշում էր այժմ իր յեղափոխականացած հայրենիքում իր երիտասարդութեան ամենավառվուն բոպէները:

Հուենոսեան երկիրը դարձել էր կոմունիստների և գեմոկրատների մի կենտրոն, և այդ նոյն կենտրոնում գործուէութեան ղեկավար գերը ծանրացել էր Մարքսի վրայ: Կոմունիստներն էին, ամենից առաջ Մարքսը, որնք իրանց գաղափարական բարձրութեան վրայ կանգնած ամենամեծ աջակցութիւնն էին ցոյց տալիս գերմանական բռնկուած յեղափոխութեան: Միայն Բեռլինում ամբողջ գեմոկրատիան (պրոլետարական) ունէր երեք մեծ խմբեր, որոնց բոլոր հոգմն ու գործնական աշխատանքը կազմում էր յեղափոխութեան յաջող պսակման գարեւալը:

Յեղափոխական ուժեղ ու անդադար պրոպագանիզը համարուել է «Neue Rheinische Zeitung»-ի ամենաէական գերերից մէկը:

Իւնկեր-աբսոլիւտիստական ոլետական բէժիմի անհետ խորտակումը և միակազմ ու միաձոյլ Գերմանիայի վերականգնումը՝ «կարմիր հասարակապետութեամբ»—կազմել է շարունակ հազարաւոր մարդկանցից բաղկացած այն ոգեսորուած ժողովների հրապարակական, բարձրակոչ լոգունգը, ուր այնքան յաճախ խօսում էին Մարքսը, հնգելսը, Վիլհելմ Վոլֆը, Շապերը և մի վառվուն ու կրակոտ ակիդատոր Դիւսելդորֆից-Ֆերդինանդ Լասալը:

Յեղափոխութիւն in Permanenz—դա էր բանուորական գեմոկրատիայի մերձաւոր նպատակակէտը. այսինքն մի յամաս ու արմատական յեղափոխութիւն, որով փաստապէս իրականանայ յեղափոխութեան մասնակցող ամենայառաջադէմ ու ծայրայեղ կուսակցութեան ծրագրային մինիմումը:

Իսկ այդ օրինակ թափ ու ներգործութիւն ունեցող յեղափոխական շարժումը անկարելի էր գլուխ բերել լիբերալների և բուրժուական գեմոկրատիայի մեղմ ու չափաւոր խորհուրդներով, այլ անհրաժեշտ էր ճակատ առ ճակատ կոիւ մղել, յեղափոխական ցոյցեր անել, դիմել զինուած ապստամբութեան. պէտք էր ջլատել աղմինիստրացիայի ոյժը, անգործութեան մատնել պետական վարչական մեխանիզմը, յեղափոխականացնել դօքը և զրաւել մասսայի կողմը. անհրաժեշտ էր ձը-

գել ու մնանկացնել պետական ֆինանսական ոյժը, իսկ զրո համար կարենոր էր ամենից առաջ, որ ամբողջ ազգաբնակութիւնը հրաժարուէր հարկեր ու տուրքեր վճարելուց և անպարտելի գիմադրութիւն ցոյց տար կառավարութեան:—Ահա այսպիսի կոչ էր ուղղում Մարքսի օրգանը, շարունակ յորդորելով ժողովրդին, մանաւանդ բանուրութեան, ոտի ենելու և յանուն իր ազատազրութեան՝ կործանելու ինքնակալ միապետութեան բռնակալ բէժիմը:

Գերմանիայի 1848 թուականը Ռուսաստանի 1905—1906 թուականն է, ուստի հասկանայի է, թէ ինչու մեծ ուսուցչի՝ Կարլ Մարքսի, քաղաքական այս դաւանանքը, յեղափոխական ազգանշանն ու կոռուի մեթոդը իրենց մնայուն արժեքով ու հարազարութեամբ ժառանգել և գործազրում է այժմ համառուսական կեանքի ամենաարժատական և իսկական յեղափոխական կուսակցութիւնը—սոցիսլդեմոկրատիան համայն Ռուսաստանի:

Մարքսը ունէր մի հեռատես ու խելամիտ տակտիկա— բոլորվին խուսափել պարտիզանական կռուից, զդուշացնել յեղափոխական ակտիւ ոյժերին ապստամբութիւնից ամեն զէպրում, երբ ամբողջ երկրում, մանաւանդ երբ երկրի կենտրոնական մասերում, կազմ ու պատրաստ չէ յեղափոխական բանակը, որպէսզի կարենոր բոլէներին ապստամբութիւնը դառնար ընդհանուր ու կատարեալ, թշնամուն հասցրած հարուածը՝ ներգործից ու մահացու: Ինքը՝ յեղափոխական կոիւը ըստ ինքեան մի արուեստ է, որին ձեռնարկելն ու յաջողութեամբ պատկերու ջանքերը պէտք է պայմանաւորուած լինեն բոլոր պարագաների սւսումնասիրութեամբ ու նախատես կշւագատութեամբ: Պէտք է քննել ու չափել բէալ ոյժերի յարաբերութիւնները, պէտք է ուշադրութեամբ դիմել ու չափել թշնամու ոյժն ու կարողութիւնը և ունենալ նոյնիսկ բաւարար շանսեր ձեռնարկուած յեղափոխական ակցիօնի յաջող ելքի նկատմամբ: Իւրաքանչիւր անհեռատես ու սխալ քայլ յեղափոխական կռուի ընթացքում, կարող է խոշոր պիասակար հետեանքներ բերել իր հետ:

Երբ Վիեննայում կրկն բռնկւում է յեղափոխութիւնը՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Neue Rheinische Zeitung» գըրում է հետեւալ էպիլոգը (վերջաբանը) «Այժմ խաղացուեց Վիեննայում այն զրամայի երկրորդ գործողութիւնը, որի առաջին գործողութիւնը խաղացուեց Փարիզում «Յունիոն օրեր» անունով: Փարիզում՝ ոտքի կանգնած զօրքը, Վիչննայում՝ կրօնաները—երկու տեղն էլ զինուած ու կաշաւաւած մուրացիկ պրոլետարիատը զուրս է բերուած աշխատաւոր ու մուածող պրո-

լետարիատի դէմ: Շուտով կը տեսնենք մինք Բերլինում դրամայի հրբորդ գործողութիւնը<sup>26)</sup>)

Եւ հէսց որ Բերլինում գումարուած ժողովը վերջապէս վճռում է մերժել հարկատւութիւնը, Քեօնի զեմոկրատական յանձնաժողովը՝ Մարքսի, Շապերի և Շնայդերի ստորագրութեամք մի թոռցիկ է բաց թողնում, ուր պահանջում է ժողովրդից զինուած դիմադրել հարկահաններին, եթէ նրանք ոյժ գործ դնեն. կազմակերպելու զինել ազգաբնակութեան. չունեւորներին զէնք ու պաշար հայթհայթել համայնքի հաշուով և կազմ ու պատրաստ զուրս ելնել թշնամու տուած:

Այդ թոռցիկի համար Մարքսը և իր ընկերները դատի են ենթարկում 1849 թ. փետրուարի 9-ին Քեօնում: Դեռ այսօր էլ խոր հիացմունք են պատճառում այն բացատրութիւնները, որ տուել է Մարքսը գատաստանական ատեմնի առաջ: Նա դատում էր հին, Կախայեղափոխական շրջանում (1848 թ. ապրիլի 6 և 8-ին), Փէօդալ-իւնկերական լանտապի (պարլամենտ) մէջ մշակուած օրէնքով: Մարքսը բողոքում է զրա դէմ և իրաւաբանական-վիլլիստիայական բացատրութեամը ապացուցանում, որ հին Թէօդալական հասարակութեան յօրինած օրէնքը չի կարող երրէք կենսական արժէք ունենալ մօդերն ըիւրդերական հասարակութեան համար, որի կամքի և ոյժի իրական արտայայտութիւնը հէսց ինքը յեղափոխութիւնն է: Իրաւաբանական ֆանտազիայի արդիւնք է միանգամայն, կարծել, որ հասարակութիւնը կրթնում, խարսխում է օրէնքի վրայ. ընդհակառակը, ինքը օրէնքն է հիմնուած հասարակութեան վրայ. օրէնքը պէտք է հասարակական մարմնի համայնտական, նրա նիւթական արդիւնաբերութեան ժամանակակից եղանակից առաջացած շահերի ու կարիքների արտայայտութիւնը լինի՝ ընդգէմ առանձին անհատների կամայականութեան: Օրինակ Նապոլէօնի կոգեքսը չէ, որ արաւագրել է արդի ըիւրդերական հասարակութիւնը, այլ 18-րդ դարում ծնունդ առած և 19-րդ դարում զարգացած ըիւրդերական հասարակութիւնը գտնում էր այդ կոգեքսի մէջ օրինական արաւայայտութիւններ: Հէսց որ նա չհումապատասխանեց այլևս հասարակական յարաբերութիւններին, պէտք է դառնայ կենսազուրկ թղթերի մի կոյտ:

«Սա քաղաքական կոնֆլիկտ չէ—առում է Մարքսը, շօշափելով հին ու նոր հասարակութիւնների հակառակ յարաբերա-

<sup>26)</sup> Fr. Mehring. «Die Geschichte der deutschen Sozialdemokratie» հատուի, եր. 126

կան կողմերը—առաջացած միեւնոյն հասարակութեան երկու ֆրակցիաների մէջ. սա կոնֆլիկտ է երկու տարբեր հասարակութիւնների մէջ. մի սոցիալական կոնֆլիկտ, որ ստացել է քարաքական կազմատորում։ Սա մի կոիւ է հին ֆէօդալ-բիւրոկրատական հասարակութեան և նորագոյն բիւրգերական հասարակութեան մէջ. կոիւ ազատ մրցութեան և կղզիացած կատայականութեան մէջ. կոիւ կալուածատէր հասարակութեան և ինդուստրեայի տէր հասարակութեան մէջ. կոիւ հաւատի (կրօնական) հասարակութեան և գիտութեան հասարակութեան մէջ»։<sup>27)</sup>

Այս և սրա նման շատ իրաւարանական-վիխիսոփայական քննադատական բացատրութիւններ է տալիս Մարքսը դատարանական ատեանի առաջ, որոնք իրանց պատմական արժեքով և հասարակական նշանակութեամբ միշտ և ամենուրեք արժանի են յիշատակութեան։

Այդ բացատրութիւններից յետոյ Մարքսը իր ընկերներով ազատում են դատարանից։

Շուտով այլ ընթացք է ստանում Մարքսի կեանքի անիւը։

1849 թուականի կէսից սկսած վրայ է հասնում ցամաքացին Եւրոպայում մի ընդհանուր, ուժեղ բէակցիա։ Յեղափոխութիւնը զեռ չէր յանգել իր վախճանին, նա ճնշուեց, խեղդուեց իր դարգացման միջին ֆազիսի մէջ։ Դերժանիայում աւելի, քան այլուր, բուռն ընթացքով և անդիմադրելի ծաւալով թեաւորուեց բէակցիան։ Նա անմիջապէս զիմեց հալածանքի և տարագրութեան քաղաքականութեան, դուրս բշուցին կրկրից յեղափոխութեան բոլոր յայտնի թէ անյայտ ներկայացուցիչները։ Նորից սկսուեց գախտական գաղթականների մի խիստ ուժեղ հոսանք—Փերմանիայից դէպի Շվեյցարիա, Ֆրանսիա և Անգլիա։ Շուտով յայտնուեց, սակայն, որ հալածուածների եւ հայրենազուրկների մշտական ապաստարանն—Շվեյցարիան—չէ հիւրընկալում այլևս իր ազատ ծոցում գերմանացի էմիգրանտներին։ Այսպէս, պրուսական կառավարութիւնից տրուած հրահանգներից ճնշուած, ազատ Շվեյցարիայի կառավարութիւնը գուրս է անում երկրի սահմաններից 11000 գերմանացի գախտականների, որոնցից մեծագոյն մասը չւում է Ամերիկա, իսկ մնացածը՝ Անգլիա։ Ֆրանսիան և հետեւում է Շվեյցարիայի օրինակին։ Մարքսը ազատ ապաստան չգտնելով Ֆրանսիայում, տեղափոխուում է Անգլիա և այնուհետև ընդմիշտ մնում

<sup>27)</sup> Ibid, եր. 131.

Լոնգոնում. շուտով գալիս են նրա մօտ էնդելսը և միւս յայտնի կոմունիստները:

Այդ թուականից սկսած արդէն Մարքսը թհակոխում է իր կեանքի մի այլ շրջանը:

1850 թուականի յունուար ամսից սկսած Մարքսն ու էնդելսը լոնգոնից շարունակում են հրատարակել Համբուրգում «Neue Rheinische Zeitung» օրգանը, բայց ոչ որպէս օրաթերթ, այլ իբրև քաղաքական-տնտեսական ամսաթիրթ: Այդ հանդէսից լոյս է տեսնում ընդամենը վեց համար:

Առաջին երեք համարների մէջ զետեղուած է գրեթէ բացառապէս այն քննադատական խորաթափանց վերլուծութիւնն, որ արել են՝ Մարքսը ֆրանսիական յեղափոխութեան մասին, և էնդելսը՝ զերմանական անաջող ապստամբութիւնների մասին:

Նրանք, իրեն խորագէտ բէալիստներ, օդն էին ցնդեցընում իլլիւդիօնիստների բոլոր վարդապոյն յոյսերը, առանց, սակայն, խորասուզուելու անպտուղ պեսսիմիզմի մէջ: Նրանք, իբրև խորագգաց յեղափոխականներ դիտում, նշմարում էին իւրաքանչիւր կայծ, որ կարող է նորից բռնկեցնել յեղափոխական կըսակը: Նրանք գետ չեին հաւասարում, որ յեղափոխութեան փոթորիկը բոլորովին սպառուել է:

Մարքսն ու էնդելսը փորձեցին ժամանակակից պատմութեան այդ բովանդակալից հատուածը—յեղափոխութեան շրջանը—պատմական մատերիալիզմի տեսակէտից հետազոտել և լուսաբանել: Նրանք հրապարակ հանեցին դասակարգային կըսիւը իր ամբողջ մերկութեամբ, որի շուրջը պտտում են ժամանակակից քաղաքական խոշոր երկոյթները: Էնդելսը քննութեան տոնելով Դերմանիայի քաղաքական և հասարակական դարբացման տոտիճանը, ցոյց է տալիս, թէ ինչու ձեռնարկած ապստամբութիւններն անաջող անցան, ինչու յեղափոխութիւնը վիժեց Դերմանիայում:

Անհամետառ կնճռու խնդիր է շօշափում և փարթամ ու մանուածապատ նիւթի հետ գործ ունի Մարքսը յանձինս-ֆրանսիստկան յեղափոխութեան: Վերջինս թւում էր իդէալիստ քաղաքակէտներին ու պատմարաններին որպէս մի կատարեալ խառնափնթորութիւններ, մի անլուծելի հանելուկ:

Այլ կերպ է հասկանում երեսյթը Կարլ Մարքսը: Ֆրանսիստական յեղափոխութեան այդ շրջանի հեաազօտութիւնը առաջին փորձն էր, որով Մարքսը պատմութեան այդ հատուածը պիտի վերլուծէր պատմական մատերիալիզմի տեսակէտից: «Կոմունիստական Մանիֆեստի» մէջ թէօրիան ուրուազել էին մեծ կոմունիստներն իր ընդհանուր և հիմնական գծերով, մինչ-

գեռ այստեղ Մարքսը քննական լուսաբանութեան նիւթ է գար-  
ձնում կուտարուած կոնկրետ երեսով իր ներքին պատճա-  
ռակցութեամբ, այսինքն նա քաղաքական դէպքերի ու ակտե-  
րի ծագման բացառակի ազբիւրն որոնում է տնտեսական հողի  
վրայ:

Մարքսը ցոյց է տալիս այդ յօդուածների մէջ (որոնց ժո-  
ղովածուն լոյս է տեսել 1895 թ. էնգելսի հրատարակութեամբ  
և ներածութեամբ, կրելով «Die Klassenkämpfe in Frankreich  
1848 bis 1850»—«Դասակարգային կումսերը Ֆրանսիայում  
1848-ից մինչև 1850 թ.» վերնագիրը) որ 1847 թուականին ե-  
ղած համաշխարհային առնւտրական ճգնաժամը (կրիզիս)  
կազմել է իսկական մայր ազբիւրը ֆրանսիական փետրուա-  
րեան-մարտի յեղափոխութեան. յեղափոխութիւն, որ ուժեղ  
արձագանք տուաւ Վիեննայում, Միլանում, Բերլինում, Դրեզ-  
դենում և սասանեցրեց ամբողջ Եւրոպան մինչև ոռուական  
ոսհմանները: Սակայն 1848 թուականի կէսից սկսած հետզին-  
տէ ծագկող և 1849—1850 թ. կատարեալ բարգաւաճման հա-  
սած ինդուստրիան և առնետրական-տնտեսական ընդհանուր  
յաջողութիւնը (սլրոսպերիտետ) կրկին ոյժ ու կենդանութիւն  
ներշնչեց Եւրոպական բէակցիային և ամրապնդեց նրա տեսական  
գոյութեան հիմքերը: Մինչդեռ նոյն յօդուածների մէջ Մարքսը  
յոյս ու ակնկալութիւն է յայտնում, որ շուտով պիտի նորից  
հզօրանայ յեղափոխական էներգիան ցամաքային Եւրոպայում.  
Նոյն ամսահանգէսի վերջին համարում, 1850 թ. աշնանը (հոկ-  
տեմբեր ամսին), Մարքսը նորից կշապատելով տնտեսական  
ֆակտորների զարգացման ժամանակակից դրութիւնը, մի պատ-  
մական-քաղաքական տնտութեան մէջ ընդ միշտ «վերջ է տալիս  
այդ իլլիւզիանէրին» և գալիս այն համոզմունքին, որ «մի նոր  
յեղափոխութիւն հսարաւոր է միայն մի նոր կրիզիսի շնորհիւ:  
Բայց նրա զալուստը նոյնքան ապահով է, որքան և վերջինս»:  
Դա միակ փոփոխութիւնն է, որ Մարքսն անում է իր հանգէ-  
սի № 6-րդում, №1—3-ում գրածների նկատմամբ. մնացածը, իր  
ըոլոր պատճառակցական փաստական դիտողութիւններով, պահ-  
պանում է իր ճշգրիտ արժէքը:

Որքան յաճախ յաջողւում է Մարքսին տոհասարակ և  
և մասնաւորապէս իր այդ աշխատութեան մէջ, մի քանի ուղ-  
մուած նախադասութիւններով աւելի խոր միտք ու պարզաբա-  
նուած հասկացողութիւն տալ որևէ խոշոր ինսդրի մասին, քան  
այդ յաջողուել կարող է սովորական տաղանդներին:

«Եթէ յունիսեան՝ ապստամբութիւնը—ասում է Մարքսը  
առաջին գլխի վերջում—ցամաքային Եւրոպայում ամենուրեք

բարձրացրեց բուրժուազիայի ինքնազգացումը և նըան բացէ ի բաց շաղկապեց ֆէօդալական թափառորութեան հետ մի սերտ դաշնակցութեամբ, ով հզաւ, այնուամենայնիւ, այդ գաշնակցութեան առաջին զոհը.—ինքը ցամաքային Եւրոպայի բուրժուազիան։ Յունիսեան յեղափոխութեան վիճումը (խորաակումը) արգելեց բուրժուազիային՝ ամբացնելու իր դասակարգային տիրապետութիւնը և միւս կողմից ժողովրդին միխեց բիւրգերական յեղափոխութեան ամենաստորին աստիճանի վրայ՝ կէս գոհունակ և կէս անմիաբան ու զայրացած վիճակի մէջ։—Յունիսեան այդ վիճումը, շարունակում է Մարքսը, մատնեց Եւրոպայի բանակալ պիտութիւններին այն գաղտնիքը, որ ֆրանսահան պէտք է բոլոր պայմաններում արտաքուստ ապահովէ խաղաղութիւնը, որպէսզի կարողանայ ներքուստ առաջ վարել քաղաքացիական կոխւը։ Այսպէս այն ժողովուրդները, որոնք կուում էին յանուն իրանց ազգային անկախութեան, զոհ գնացին Ռուսաստանի, Աւստրիայի և Պրուսիայի գերագոյն ոյժին։ բայց միենոյն ժամանակ այդ ազգային յեղափոխութիւնների վիճակը (ճակատագիրը) հնթարկուեց պլոտետարական յեղափոխական նակարագրին (նոտրգրերը մերն են)։ Նրա ազգային յեղափոխութեան թուացող ինքնանկախութիւնը յափշտակուեց սոցիալական մեծ յեղաշրջութիւնից։ Զեն կարող ունեցաւ լինել, քանի շարունակէ բանուորը սարուկ մնալ։<sup>28)</sup>

Մինչև որ արմատապէս վերջ չտրուի կապիտալիստական արդիւնաբերութեան նդանակի գոյութեան, բուրժուազիայի գասակարգային տիրապետութեան, այսինքն մինչև որ վախճանապէս չլուծուի սոցիալական հանգոյցաւոր կոնֆլիկտը, այնքան էլ չի կարող խօսք լինել ճնշուած ու ըսնաբարուած ազգերի ու ժողովուրդների իսկական ազատութեան մասին—այդ է նշանակում Մարքսի ասածների իմաստը։

Դրբի երկրորդ գլխի մէջ Մարքսը խօսելով վետրուարեան սահմանագրութեան մասին, ասում է ի միջի այլոց հետևեալը. «Սահմանագրութեան առաջին օրինագծի մէջ, մշակուած յունիսեան օրերից առաջ, զտնւում է մի անյաջող կէտ՝ «droit au travail», —իրաւունք աշխատանքի վրայ. ուր ամփոփուած են պլոտետարիատի յեղափոխական պահանջները։ Դա վերածուեց droit à l'assistance—իրաւունք հասարակական ինամատարութեան վրայ. որ նորագոյն պետութիւն չէ կերակրում այս կամ այն ձեռով իր պառապերներին։ Իրաւունք աշխատանքի վրայ,—

28) K. Marx, «Die Klassenkämpfe in Frankreich» 4p. 41

դա բուրժուական մտքով մի անմտութիւն, մի թշուառ ու բարեպաշտ ցանկութիւն է. բայց այդ իրաւունքի յետև կանգնած է բռնի ոյժը կապիտալի վրայ, իսկ այդ ոյժի յետև կանգնած է արդիւնաբերութեան միջոցների խրացումն, այդ միջոցների հնթարկումը խմբակցուած ու միաբանած բանուոր դասակարգին, այսինքն վարձու աշխատանքի, կապիտալի և Կրանց փոխադարձ յարաբերութիւնների վերացումը»:<sup>29)</sup>

Ալստեղ ահա առաջին անգամ ձևակերպւում է այն միտքը, որով նորագոյն բանուորական-սոցիալիզմը սուր ու անհամակերպելի գծերով տարբերում է սոցիալիզմի այն բոլոր խայտարդիտ տեսակներից, որոնք են՝ ֆէորալական, թիւրգիրական, մանր թիւրզերական, ինչպէս և այն ուտոպիական-նախապատմական բանուորական կոմունիզմից, որ վարդապետում է բարիքների համայնականացման շփոթ ուսմունքը: Աւելի ուշ Մարքսը արդիւնաբերութեան միջոցների հասարակականացման վրայ աւելացնում է նաև փոխանականութեան միջոցների հասարակականացումը, որպէս լրացումն իր առաջադրած գլխաւոր թեզիսի:

## 8

Բէակցիայի աղբեցութեանը յեղափոխական-կոմունիստական շարժման վրայ՝ — Տարածայնութիւնը կոմունիստական դաշնակցութեան մէջ և նրա պառակտումը: — Կոմունիստների հալածանքը Գերմանիայում: — Կոմունիստական պրոցեսը Բիօնում: — Մարքսի գրուածքը դրա մասին: — «Բնաւագարտել 18-ին Բրիւմերը»: — Դասակարդային կոուի և մատերիալիստական հասկացողութեան սկզբունքը «Բրիւմեր» մէջ: — Մարքսի մի այլ գրուածքը «Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը Գերմանիայում»: — Անհրաժեշտ նախապայմանները: — Յեղափ. Վիեննայում և Բերլինում: — Մարքսի սուր կրիտիկան:

Քանի գնում, այսքան աւելի ու աւելի պարզ նկատում էր, որ ընդհանուր եւրոպական (ցամաքային) յեղափոխական շարժումը անզօք ալիքներով զարնուում էր բէակցիայի հզօրացող ժայռերին, պարտուած ու վհատուած յետ նահանջում: 1850 թուականի ամառուայ ընթացքում նկատում էր այդ երկոյթը իր ուժեղ արտօայալութեամբ:

Փրանսիայում՝ ոչնչացրուեց ընդհանուր ձայնաւութեան իրաւունքը, առանց պրոլետարիատը սուբի կանգնելու: Վճռական որոշումը մնացել էր հետամտող կուի Բոնապարտի և միապետական-բէակցիօնէր ազգային ժողովին: Գերմանիայում

29) K. Marx Ibid., Եր. 48—49

դեմօկրատական ժողով քաղաքացիները ձեսքերը ուղած ուղաւսողական վիճակի մէջ էին. լիբերալ բուրժուազիան խարւում էր պրուսական կառավարութիւնից, ինքը Պրուսիան խարւում էր առատրիական կառավարութիւնից, իսկ երկուսը միասին պարուժ էին ուստական բոնակալովթեան վշած սրինդով:

Այդուս, հակայեղափոխական այդ ուժգին հարուածի աւերիչ ներկործութեան տակ չէին կարող ցամաքային եւրոպացի կենարօնական քաղաքներում պատսպարուած կոմունիստական խմբերը պահպանել իրանց գոյտթիւնը: Բելգիայում գրեթէ ամբողջապէս խեղդուել էր կոմունիստական դաշնակցութիւնը. Ֆրանսիայում նաև կատարելապէս կազմալուծուել էր. Գերմանիայի մի քանի քաղաքներում՝ Համբուրգ, Լայպցիդ, Բրեմեն, Քիոն և այլն, շարունակուժ էին մի քանի բանուորական ու գիւղացիական խմբակցութիւններ իրանց կիսախարիսուլ գոյտթիւնը:

Ոչ ոք, բացի Մարքս ու Էնգելսից, չէր կարսպանում այնպիսի խորութեամի՞ ու նշզըլիս նետենողութեամի՞ բժբանել քաղաքական այդ կրիտիկական զրութեան էութիւնը և բացատրել նրա տռաջացման պատճանները (որի մասին խօսեցինք 7-րդ գլուխմ): Մարքս-Էնգելսի անողոր կարծիքը՝ որ առժամանակ ըէ-ակցիոն, հակայեղափոխութիւնը հարուածել և վերջ է զրել յեղափոխութեան գոյութեան, — գուր չէր զալիս կոմունիստներից իլլիւզիօնիստ անդամներին, որոնք չէին հրաժարուած սպասելիքներ ունենալուց՝ յեղափոխական անյոյս ապստամբութիւններից: Հին յայտնի կոմունիստներից շատերը և նոր ոյժերից տչքի ընկնողները, ի միջի այլոց Վիլհելմ Լիբլիսիստը, անպայման բաժանուած էին Մարքս-Էնգելսի կարծիքները: 1850 թ. սկսակեմբերից 15-ին կենարօնական վարչութեան ժողովում բացարձակ ընդհարւում են այդ հակառակ կարծիքները: Մեծամասնութիւնը անցնուած է Մարքս-Էնգելսի կողմը: Մարքսը բնորոշուած է այդ երկուստեր հակառակութիւնը հասեեալ գեղեցիկ տողերով.

«Մինատլատական հայեացքի փոխարէն, փոքրամասնութիւնը առաջագրուած է դոզմնատիկական հայեացք, և մատերիալիստականի փոխարէն՝ իդէալիստական հայեացք: Փոխանակ իրական յարաբերութիւնների, նույ յեղափոխութեան մղիչ անփւը համարուած է սոսկ կամքը: Մինչդիս մէնք բանուորներին տառմ էնք՝ գուր պէտք է 15,20,50 տարի շարունակ քաղաքացիական կուիւ և ժողովրդական պայքար մղեք, որպէսզի ոչ միայն փոխէք իրական յարաբերութիւնները, այլև փոխէք ինքններդ ձեզ և ընդունակ դառնաք համանելու բաղարա-Մարտ, 1906.»

կան տիրապետութեան, նա (հակառակորդ փոքրամասնութիւնը), ընդհակառակը, ասում է՝ կամ պէտք է մենք խսկոյն տիրապետութեան հասնենք, կամ թէ չէ հանգիստ քննեաք: Մինչդեռ մենք մասնաւորապէս գերմանական բանուորներին մատնացոյց ենք անում գերմանական պրոլետարիատի անզարզացած վրութեան վրայ, իսկ նա շօյում է ոմննազուհիկ ձևով նրանց ազգային զգացմունքը: Ինչպէս որ գեմոկրատները մողմուրդ խօսքը դարձրել են մի սրբացրած էտկ, այնպէս էլ դուք սրբացրել էք պրոլետարիատ խօսքը: Ինչպէս գեմոկրատիան, այնպէս էլ գուք, յեղափոխական գարզացուիլը խառնում էք յեղափոխութեան հետո»:<sup>30)</sup> (Եռարգրերը մերն են):

Այս աստիճան սուր հոկառակութիւնների մէջ՝ գաղտփառ րական հողի վրայ, չէր կարող, անտարակոյս, հաշտութիւն կայանալ: Փոքրամասնութիւնը զատում է Մարքու-էնգելսին հաւատարիմ մնացած բանակից և կուլ զնում իր անպատուզ իւլիզաններին: Դրանից յետոյ կոմունիստական դաշնուկցութեան կենտրոնական վարչութիւնը Լոնդոնից տեղափոխուում է և հաստատուում Քեօլնում: Այդպէս ամբողջ բունդը բաժանուում է երկու մասի Մ'արքու-էնգելսի Փրակցիան և Վիլլիլս-Շապերի Փրակցիան: Վերջինս հետզհետէ աւելի էր սուուարանում և ուժեղանում չնորդիւ այն հանգամանքի, որ շատ նորեկ երիտասարդ կոմունիստներ իրենց տաքարինութեան և յեղափոխական ֆանտազիային գոհացում էին տալիս Վիլլիլս-Շապերի իւլիզիօնիուտ բանակի մէջ:

Սակայն կարճ ժամանակ անցած բոլորովին լսաց է դըրլում՝ առհասարակ կոմունիստական գործունէութեան վրայ, մանուանդ Գերմանիայում: 1851 թ. մայիսի 10-ին Լոնդոնից ուղարկուած գաղտնի պատուիրակը՝ կոմունիստ Նոտիւնգը, ձերբակալուում է Լայպցիգիում: Ուստիկանութիւնը գտնում է նրա մօտ մի քանի գաղտնի գոկումնեները: Ի միջի այլոց և «Կոմունիստական Մանիֆեստ»: Բոնուած նամակների և մի շարք հասցէնների ցուցանքներով պրուսական կառավարութիւնն անզուլ եռամսդով հետեւում է ամենուրեք ամբողջ իրողութիւնը մերկացնելու համար: Քեօլնում ձերբակալուում են ըոլոր յայտնի կոմունիստները: Այդտեղից սկսում է կոմունիստների յայտնի պրօցեսի պատմութիւնը Քեօլնում: Պրուսական ոստիկանական կառավարութիւնը ժանդարմերիայի և դաւադիր շպիօնների մի անխնայ ցանց է պատում Փարիզում և Լոնդոնում՝

30) Fr. Mehring «Geschichte der deutschen Sozialdemokratie» հատ. II, էլլ. 190.

մերկացնելու ամրող գաղտնիքը և իր ձեռքը ձգելու հսարաւութին չափ շատ դոկումենտներ ու «յանցապարտ» կոմունիստների: Մեղաղբուու էին, ինարկէ, նու Մարքսն ու Էնդելսը, և եթէ կոմունար պլուստական կառավարութիւնը դուրս քաշել նրանց ազատ Անգլիայից, որոնց համար յատուկ լրտեսներ էին ուղարկուուծ Լոնդոն, շատ գոհ կը լինէր նա իր նենդամիտ ձեռնարկով: Պրուսիայի ինսկեր-բիւրօկրատական կառավարութեան թւում էր, թէ մի ինչոր բարձր ու խոշոր գաւադրութիւն կայ մէջ տեղը, որի իրագործման համար հիմնուել էին այդ կոմունիստական ընկերութիւնները: Այդպէս կարծելով և այդ ուղղութեամբ զործելով, Պրուսիայի գատարանական առուանը երկար տարիների բանտարկութեան է գատապարտում ձերբակալուած կոմունիստներին: Քիօլնի այդ պրոցես տեսում է գրեթէ մի ամրող տարի և վերջանում 1852 թ. նոյեմբերի 12-ին: Յաջորդ տարին Մարքսը լոյս է ընծայում (միաժամանակ Բազելում և Լոնդոնում) «Էնթիլլունգեն über den Kölner Kommunistenprozess» («Մերկացութեներ կոմունիստների պրոցեսի մասին Քիօլնում») վերնագրով մի հետաքրքրական բրօշիւր, ուր ուր ու խայթող գրչով ամօթի ու խայտառակութեան պատին է մեխում բոնակալ Պրուսիային:

Մարքսը կենդանի փաստերով մերկացնում է կառավարութեաննենդամտութիւնն ու խարգախութիւնը, թէ ինչպէս նա կեղծ դոկումենտներով աշխատել է ապացուցանել, որ կոմունիստական կազմակերպութիւնը երգուեալ ու դաւադիր յեղափոխականների մի ընկերութիւն է: Մինչդեռ Մարքսը գրա հակառակ պարզ պատկերացնում է մեզ կոմունիստական բունդի ֆիզիօնոմիան: Կոմունիստական կամ պրոլետարական կուսակցութիւնը չունէր որևէ այլ հսարաւորութիւն լեդալ հողի վրայ գործելու միւս բուրժուական կուսակցութիւնների նման, բայց եթէ գործելու գաղտնի կազմակերպութեամբ: Անպայման եղել են խմբեր այդ կազմակերպութեան մէջ, որոնք գիտաւորութիւն ունէին խորտակելու գոյութիւն ունեցող պետական բէժիմը, իսկ իրեն այդպիսին, նրանք պէտք է երդունալ յնդափոխականներ լինէին: Մակայն գա միայն մի փոքրիկ էպիզոդ պիտի կազմէր այն միծ ու յարածուն կոռւի պրոցեսի մէջ, որի վախճանական յանդումը պիտի լինի ոչ միայն խորտակումը Եւրոպայի տիրանների և զեսպոտների, այլ և ամենահզօր ու զարհուրելի ոյժի աիրապետութեան—կապիտալի տիրապետութիւնն աշխատանքի վրայ:

«1848. 49 թ.—տառւմ է Մարքսը—յեղափոխութեան գործնական հետեանքները ճշտեցին թէօրիայի այն գիտողութիւնն

ները, որոնք յանգում են այն եղանակցութեան, որ նախ պէտք  
է բուրժուական դեմոկրատիան հասնէ տիրապետութեան, նախ  
քան կոմունիստական բանուոր զասը սպասել կարող է, տես-  
պէս ոյժին տիրանալու և վարձու ստրկութեան սիստեմը խոր-  
տակելու, որ նրան հնմտարկում է բուրժուազիայի լծին»: 31)

1852 թ. Մարքսը լրյու և բնծայում մի այլ հետաքրքրա-  
կան գրքոյկ «Der 18 Brumaire des Louis Bonaparte» («Լ. Բո-  
նապարտի 18-ի Բրիւմերը») վերնագրով: Այդ գրուածքը շա-  
րունակութիւնն է կազմում Մարքսի «Դասակարգային կոիւնե-  
րը Ֆրանսիայում, 1848—49 թ.» աշխատութեան, որի մասին  
մենք խօսեցինք վերև:

«Բրիւմերը» վերաբերում է Ֆրանսիայի կարճ ժամանա-  
կեայ պատմական յեղյեղուկ շրջանին, որի վերլուծուած ու  
փաստալից լուսաբանուած նկարագիրը տալիս է մեղ Մարքսը:  
Դա ֆրարսիական յեղափոխութեան շրջանն է, սկսած 1848 թ.  
փետրուարի 24-ից մինչև 1851 թ. զեկուեմբեր տմիսը: Մարքսը  
բաժանում է այդ ամբողջ շրջանը երեք բնորոշ աստիճանների  
(Փազերի): 1. Փետրուարինե աստիճան՝ 1848 թ. փետր. 24  
—4-ը մայիսի: 2. Հանրապետութեան նիմենալութեան կոմ  
ազգային նիմեսովի ժողովի աստիճան, մայիսի 4-ից մինչև  
1849 թ. մայիսի: 3. Սահմանադրական հանրապետու-  
թեան կամ ազգային օրէնտվի ժողովի աստիճան, 1849 թ.  
մայիսի 29-ից մինչև 1851 թ. զեկուեմբերի 2-ը:

Այդ կարճաժեայ շրջանում Ֆրանսիայի քաղաքական բաղ-  
զը հնմտակայ էր արագնթաց փոփոխութիւնների, նայած հա-  
սարակական ոյժերի և քաղաքական ֆակտորների յարարելու-  
թիւններին և նրանց զատուորութեան: Ուրան յեղափոխական  
շրջանի առաջին աստիճանի վրայ պրոլետարիատը զրական  
մասնակցութիւն ունէր ժամանակաւոր կոստավարութեան մեջ  
և ունէր իր յատուկ խօսքն ու ազգեցութիւնը քաղաքական մե-  
խանչզմի մէջ, այնքան նաև յետ է մղում առաջին շարքերից  
երկրորդ աստիճանի վրայ և տեղի-առլիս բուրժուազիայի,  
մասնաւորապէս ֆինանսական տրիստօկրատիայի բացառակի  
տիրապետութեան ազգային նիմեագիր ժողովում: Եւ որքան  
յեղափոխական շրջանի երկրորդ աստիճանի վրայ Ֆրանսիայի  
քաղաքական կամքի վրայ իշխում էր բուրժուազիան, այնքան  
էլ երրորդ աստիճանի վրայ Ֆրանսիայի քաղաքական ճակա-  
տագիրը գարձել էլ խաղալիք աւանափարիստ Լ. Բոնապարտի

31) K. Marx, «Der Kommunistenprozess zu Köln» (տես Մարքսի «Revolution und Komfre-Revolution in Deutschland», XX գլուխ էլ. 135).

և աղքային օրէնսդիր ժողովի—այդ մոնարխիստական-բէակցիօնէր մարմինի—ձեռքին:

«Կոմունիստական Մանիֆեստից» յետոյ Մարքսը իր բոլոր յետագայ գրական երկերի մէջ, ինչպէս մենք այդ տեսանք և գեր յաջորդարար կը տեսնենք, իրական զործազրութիւն է տալիս իր այն բոլոր թէօրիոններին և տեսական ոկզունքներին, որոնց համառօտակի ձեւակերպումները տուել է նա «Մանիֆիտափի» մէջ: Շատ յաճախ ենք հանդիպում մանաւանդ, նրա պատմափիլիսոփայական խորհրդածութիւնների մէջ, դասակարգային կոուի ու տիրապետութեան և մասներիալիստական հասկացողութեան ոկզունքներին: «Բրիւմերի» մէջ, օրինամել, պարզ նկատում է Մարքսի հիմնաւորած մեծ օրէնքը պատմական շարժման և նրա կիրառումը: «Այն օրէնքը—ասում է Մարքսը—որ իւրաքանչիւր պատմական կոփւ, լինի նա քաղաքական, կրօնական, փիլիսոփայական թէ մի որևէ ուրիշ իդէոլոգիական սահմանում, իրավէս կազմում է լոկ արտայայտութիւնը հասարակական դասակարգերի փոխազարձ կոռուի, և որ այդ դասակարգերի կեանքը, հետեապէս նաև նրանց միջն եղած կոնֆլիկտները (պայքար), իրանց կողմից որոշում հնա տնտեսական կազմի դարձացման աստիճանով, նրանց (դասակարգերի)՝ արդիւնաբերութեան մէջ, և դրանով պայմանաւորուած փոխանակութեան մէջ խաղացած գերի ընաւորութեամբ»: 32)

1851—1852 թուականին Մարքսի գրչի տակից դուրս է գալիս մի այլ ուշագրաւ աշխատութիւն: Այդ երկու տարիների ընթացքում նա «Revolution und Kontre-Revolution in Deutschland» («Յեղափոխութիւնն և հակայեղափոխութիւնը Գերմանիայում») գիրնագրով մի շարք ընդարձակ յօդուածներ է զետեղում «New-Jorker Tribune» թիրթի մէջ: Այդ յօդուածների սերիան տուանձին գրքով հրատարակում է Մարքսի աղջիկը՝ էլեանոր Մարքս-Աւելինը, իսկ 1896 թ. անգլիերէնից փոխադրում է գերմաններէնի Կարլ Կառլցին:

Ինչպէս Մարքսի վերջին յիշատակած երկու աշխատութիւնները (Ֆրանսիայի վերաբերեալ), այնպէս և այս մէկը (Փերմանիայի վերաբերեալ) կազմում են տեսական անալիզներով ամփոփ լուսաբանուած պատմական մեծարժէք երկեր այն յեղափոխական կարճամեայ շրջանի մասին, որ ունեցել են այդ երկու երկրները 40-ական թուականի վերջին:

32) K. Marx, «Der 18. Brumaire des Louis Bonaparte» ել. 9, (ռուս. թարգմ.):

«Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը Դերմանիացում» վերնագրով գրքի մէջ Մարքսը յաջորդաբար և ըննտուտատական շեշտումներով թւում է այն թէ յեղափոխութեան և թէ հակայեղափոխութեան, ըէակցիայի յաղթական անհրաժեշտ նախապայմանները Գերմանիայում և Աւստրիայում. այն հասարակական կազմը և մանաւանդ գասակարգային յարաբերութիւնները, որ գտնւում էին այդ երկու երկրներում յեղափոխութիւնից առաջ, նրա ընթացրում՝ և վերջում: Արգիւնաբերական միջոցների և զրանցով պայմանաւորուած անտեսական ֆակտորների թոյլ զարգացումը ժամանակակից Գերմանիայում և նրա հետ միացած Աւստրիայում, չուժեղացրին և յեղափոխականացրին տեղական բուրժուազիային—բլուրզերական երրորդ դասին—այն աստիճանը, որ նա խաղար մօտաւորապէս այն գերը, ինչպիսին խաղացել է Քրանսսիական ոլուկով բարձր կանգնած բուրժուազիան: Միւս կողմից Գերմանիայի անգամահատումը՝ մանր-մունը միապետութիւնների, մեծ խոչնորա է գարձել՝ Փարիզի և Լոնդոնի նման խոշոր կենտրոններ ստեղծելու, ուր միայն բարբառում է ամերող երկրի քաղաքական կեանքի սիրալ և որ միայն վճռական արժէք ու նշանակութիւն ունի յեղափոխական այս կամ այն ակտը իր զրական թէ բացասական հետեանքներով:

Բերլինն ու Վիեննան էին կենտրոնական և յեղափոխութեան բնթացք տուող քաղաքները:

Եւ մինչդեռ Վիեննայում մարտի 13-ի (1848 թ.) յեղափոխական ապստամբութեան ժամանակ տեղական բուրժուազիան—բացառութեամբ Փինանսական արխտօնարադիայի՝ բանկիրների և բօրսայի սպեկուլանանների—ձեռք ձեռքի տուած մանր քաղաքացիութեան և բանուոր զասակարգի հետ կուռում էր միապետութեան դէմ, Բերլինում չկատարուեց մարտի 18-ի յեղափոխութիւնը նոյն կերպ:

Փարիզի վետրուարեան յեղափոխութիւնն սարսափեցրեց Պրուսիայի բուրժուազիային: Այդտեղ կործանուել էր կառավարութեան այն ձեւը, որ ուզում էր պրուսական բուրժուազիան հիմնել իր սեփական երկրում: Փարիզի բանուորութիւնը յայտարարել էր բուրժուազիան ըէժիմի խորտակումն և բանուորի էժանսիլացիան (աղատագրութիւնը): Բերլինի բանուորութիւնը եւ կարող էր նոյն խաղը խաղալ բուրժուազիայի գլխին. և թէև վերջինս շատ լաւ զգում էր, որ ինքը առանց բանուորութեան գրական աջակցութեան մին մենակ ոչինչ չի կարող, այնուամենայնիւ պակասում էր նրա մէջ գասակարգային արիութիւնը, նու երկիւղ ունէր պրոլիտարիատից, ուստի և նա

ինքը գտաւմանեց իրան, երբ օդնեց կառավարութեան գտաւուներում շարժումը գաղարեցնելու համար և աշխատեց թերթնուունակատութիւն վերականցնել, հինգ օր պալատի շուրջը խըռնուած բազմութեան խաղաղացնել, տուն ուղարկել:

Մարքսը սուր, խայթող գրչով և արդարացի պաթոսով քննադատում է յեղափոխութիւնից յետոյ ֆրանկուրտ գումարուած ամբողջ Գերմանիայի ազգային ժողովը իր լոլոր ըէակցիոնիք որոշումներով: «Ազգային ժողովը—առում է Ներկայանար որպէս միակ օրինական արտայայտութիւնը դերմանական ժողովրդի առվիերէն (գերիշխան) կամքի և դրանով իր որոշումներին օրինական ոյժ տար: Նա պէտք է ամենից առաջ մի կազմակերպուած ու զինուած ոյժ ունենար իր տրամադրութեան տակ, որպէս զի կարևոր դէպքում կառավարութիւնների դիմապրութիւնը ճնշել կարողանար: Սակայն զա աւելի քան շատ է պահանջել մի ժողովից, որի մեծամասնութիւնը բազկացած էր լիրերալ փաստարաններից և պրոֆեսօրներից. մի ժողովից, որ իրաւ յաւակնութիւն ունի իր մէջ մարմացներից. գերմանական ոգու և գիտութեան լրիւ ու կենդանի արտայատութիւնը, որը, սակայն, իրապէս ուրիշ ոչինչ չէր, բայց թէ մի կոսմիկական խաղ, ուր հին, վերակեաց քաղաքական բնաւորութիւններն ի ցոյց էին զրել իրանց մտածողութեան ու գործնէոթեան անընդունակութիւնը: Պատաւ կանանցից բազկացած այդ ժողովը իր զոյութեան առաջին օրից սկսած աւելի շատ էր հրկեւզ կրում ամենաչնչին ժողովրդական շարժումից, քան թէ գերմանական բոլոր կառավարութիւնների երգուեալ ըէակցիոնից...»:<sup>33)</sup>

Այնուհետև Մարքսը կանգ է առնում հոկտեմբերեան յեղափոխութեան վրայ Վիեննայում, ազգատամբական փորձերի վրայ Գերմանիայի զանազան մասերում: Մարքսը խիստ յարձակողական առնով է խօսում Աւստրիայի ուլառնիների (բայց սութեամբ լեհերի), մանաւանդ չիթերի, կրօտաների մասին: Այդ պանուածնիստ յիստապէս տարրերը, որոնք իրանց թշուառ զոյութեան ապահնը որոնում են ուստական կնութիւն հովանու ներքրոյ, եղան ամենամեծ զարկ տուողներից մէկը հոկտեմբերեան յեղափոխութեան անաջող վախճանի, Վիեննայի անկանանոյեմբերի մէկին, զինուած ժողովրդի դէմ կուռւմ էր կայսրին հաւատարիմ մնացած չիս զօրքն ու զօրավարը:

Մարքսը քննադատելով յեղափոխականների, մանաւանդ ազգային ժողովի սխալ տակտիկան, բնորոշում է ապստամբու-

33) K. Marx, «Revolution und Kontre-Revolution in Deutschland», 4p. 53.

թեսն ահսական հիմքերը և նրա գործական հետեւթիւնները հետեւալ կլասիք խօսքերով. «Ապստամբութիւնը մի արուեստէ, ինչպէս պատերազմը և միւս արուեստները, և հնթակաց է որոշ կանոնների, որոնց անուշաղիք թողնելն առաջնորդում է կուսակցութեան դէպի կործանում։ Այդ կանոնները, որպէս արամարանական հետեւթիւններ՝ բղիած կուսակցութիւնների և նրանց յարաքերութիւնների էութիւնից, այնքան պարզ ու հասարակ էն, որ 1848 թ. կարճ ժամանակեաց փորձառութիւնը գերմանացիներին բաւարան ծանօթացրել է դրանց հետեւակից չերէք է երբէք խալզալ ապստամբութեան հետ, եթէ հաշուի չեն առնուած այդ խաղի ըոլոր հետեւանքները։ Ապստամբութիւնը մի հաշուէտեւութիւն է վերին աստիճանին անորոշ մեծութիւնների հետ, որոնց արժեքը կարող է իրաքանչիւր օր փոխուել. կուուի այն ոյժերը, որոնց դէմ պէտք է մաքասել իրանց կողմն ունեն կազմակերպութեան, դիսցիպլինայի և աւանդական հեղինակութեան ըոլոր օգտակար կողմերը։ հանդէս չըերել գրանց դէմ մեծ հակառակ ոյժեր, նշանակում է պարտուել ու ոչնչանալ։ Երկրորդ, եթէ մի անգամ ընդ միշտ սկրսուել է ապստամբութիւնը, ապա պէտք է կործել ամենայն վճռականութեամբ և յարձակողական դիրքով։ Յետ նահանջումը մահ է նշանակում իրաքանչիւր դիմուած ապստամբութեան համար. վերջինս կը տապալուի նախրան իր ոյժերը չափելու թշնամու հետ։ Պէտք է յանկարծակի վրայ յարձակուել, քանի հակառակորդի գնդերը ցրուած են, պէտք է օրէցօր, թէկ փոքր, յաջողութիւններ ձեռք բերել. պէտք է ամուր ըռնել բարոյական գերազանցութեան գիրքը, որ կը բերէ առաջին հետեւողալից ապստամբութիւնը. պէտք է գրաւել այն տատանուած սրտերը, որոնք հետեւած են ամենաուժեղ մղումին. պէտք է բանադատել թշնամու յետ նահանջելու, նախ քան իր ոյժերը ի մի համախմբելու. կարճ ասած Դանուօնի—մինչև օրս յեղափոխական տակարգայի ամենամեծ վարպետի—խօսքերի համաձայն de l'audace, de l'audace, encore de l'audace—Համարձակութիւն»:<sup>31)</sup>

Թէ ըէալ բաւարար ոյժերից և թէ յեղափոխական խելահասութիւնից հեռու էր գերմանական գերմանական, որպէս զի կարողանար այդ տակտիկայի թէկուզ հեռաւոր նմանութեամբ գործէր։

34) K. Marx. Ibid. Կ. 117—118

9.

Լմիզգանատների և մասնաւորապէս Մարքս-Էնդհայսի կարծիքը յեղափոխութեան մասին:—Մարքսի ծանր վիճակը պանդիտութեան մէջ:—Մարքսի աշխատավայրութիւնը չարտիստական և ամերիկական թերթերում: Նրա քանի տարուայ հրապարակախօսութիւնը «Երիսուա»-ի մէջ:—Մարքսի կարծիքը Թիւրքիայի մասին:—Մարքսի կորինետային զրադառնութները:—Մարքսն ու Էնդհայսը իրարից բաժանուած:—Մարքսի լոնկերական շրջանը լոնդոնում:

Յիսուսնկան թուականների սարսափելի բէակցիան միանգամայն անհնարին է, զարձնուած կոմոնիստական պրոպագանդան ու յեղափոխական գործունէութիւնը ցածաքային Եւրոպայում: Բոլոր կոմոնիստական ընկերութիւնները կազմալուծուել, յեղափոխականները տարագրուել էին դէպի Անգլե-սաքսոնների հայրենիքը նոյնիսկ այնպիսի երկրից, ինչպիսին Շվեյցարիան է: Նոյնիսկ զրաւոր պրոլագանդան անհնարին էր: Անտանելի էր հալածուած էմիզրանատների վիճակը: Տարագիր կոմոնիստներն ու յեղափոխականները, սակայն, դեռ չէին յուսահատուել. նրանք երազում էին տրմատական յեղափոխութեան մօտալուս գալուստը, առանց պարզ հաշիւ տալու իրանց այդ երազների իրականացման հնարաւորութեան մատին:

Այլ կերպ էին ժամանուած Մարքսն ու Էնդհայսը: Նրանք ոչ յուսահատում և ոչ իլլեզիաններով մաշում էին իրանց ուղեղը: Նրանք լինելով բէալիստներ և առաջին կարգի պատմական մատերիալիստներ, ըննում էին տրուած իրն ու զրութիւնը իրանց բէալ, շօշափելի յարաբերութիւնների մէջ: Նրանք գիտէին, որ պատութիւնը առաջնապէս չի որոշում՝ մարդկանց դիտարութիւններով, այլ տնտեսական յարաբերութիւններով: Այդ տեսակէտից Մարքսն ու Էնդհայսը մի կողմից ուսումնասիրեցին ժամանակակից յեղափոխական շարժման անաջողութեան պատճառները, իսկ միւս կողմից տնտեսական ֆակտորների զրութիւնն ու յարաբերութիւններն և եկան այն պարզ եզրակացութեան, որ սկսուած և արգէն որոշ ընթացք ունեցած յեղափոխութեան շրջանը փակուած է. այլիս չկայ հաւանականութիւն նրա նորից բոնկման մինչև անհախատեանելի ապագայ:

«Մենք գիտենք այսօր,—ասում է Կառւցկին,—որ Մարքսն ու Էնդհայսն իրաւացի են եղել: Բայց դան ճշմարտութիւններ խոստովանելը ամեն մէկի բանը չէ: Նրանք բոլորը, որոնք կարծում էին այն ժամանակ, որ յեղափոխութեան համար ուրիշ ոչինչ կարիք չկայ, բայց եթէ մի փոքրիկ կտոր բարի կամք.

նրանք բոլորը, որոնք կարծում էին, թէ կարելի է յեղավորուսութիւն առաջ բերել ըստ հանոյթի, եթէ կայ դրա համար ցանկութիւն, մի խօսքով. Անգլիա տպաստանած յեղափոխական փախստականների խիստ մեծագոյն մասը, որոնք ներկաւանում էին այն ժամանակ բիւրգերական արժատական բանակը ընդդէմ երրորդական բէտակցիայի, ոչ միայն չբաժն չբաժնեցին Մարքսիսկելումի կարծիքը, այլև թշնամացան, հակառակեցին մեծ կօմունիստներին:»<sup>35)</sup>

Բոլոր տարտպուած էմիգրանտներից ամենածանր ու գառնալից վիճակը բաժին է ընկնում Կարլ Մարքսին, իր բէտակցիայի ամենավասնպաւոր ու մահացու թշնամուն: Ոչ միայն Համբուրգ հրատարակուող «Neue Rheinische Zeitung» հանդէսը կորցնում է իր ընթերցողների շրջանը Փերմանիայում, այլև նրա գաղարումից յետոյ բացարձակապէս անկարելի է զանում Մարքսի, ինչպէս և էնգլիսի, համար մի տող գրել իրանց հայրենիքում: Նրա առաջ փակում են բոլոր տպարանատէրերն ու գրավաճանները իրանց գոնիրը. Կոյն իոկ ամենաարժատավական հրատարակիչները խորշում ու երկիր էին կրում Մարքսի գրածներից: Ռէտակցիան կատարեալ էր, մինչ իր ամենաարձակ առաջանը:

Մարքսը իր ոչ սակաւանգամ ընտանիքով, գատապարտւում է ամենաավատ նիւթական վիճակի: Մի կողմից պարապելու, ուսումնասիրելու անյազ տենչը, միւս կողմից իր հայրենիքի արզելատիթ պայմանները, իսկ երրորդ կողմից տնտեսական չքանորդ որութիւնը—այս երրակի ծանր պարագաների մէջ միայն երկաթէ մարդը կարող էր յաղթահարել բոլոր երկրորդ գական թէ գլխաւոր խոչնպատճներին և անձնուրացութեան չափ դաշտէի դեիպին—հետեւի ճանապարհի և թող մարդիկ խօսնն, ինչ ուղում են—զա եղել է Մարքսը, անհողգողի, ժայռամուր Մարքսը:

Մարքսը հարկազրուած էր իր նիւթական միջոցները հայթնայթելու օտարազգի թերթերին աշխատակցելով: Նա հունդուզով աշխատակցում է չարտիստական թերթերին, որոնք զես շարունակում էին իրանց դոյութիւնը, չնայելով որ չարտիզմը ընկել էր 48 թուականին: Մարքսը սուր ոճով պարստուած

35) K. Kautsky, «Friedrich Engels», Եր, 19

է լօրդ Պալմերստօնին, նրա ցարիզմին ցոյց տուած սիրալիք ծառայութիւնների համար:

Եթէ Մարքսը կարելիութիւն չունէր անմիջապէս մատչելի լինելու գերմանական ընթերցող հասարակութեան, եթէ գերմանական ղեմօլրատիան բոյկոտ էր հրատարակել նրա դէմ, իսկ գերմանական մամուլը փակել էր իր էջերը նրա առաջ. եթէ Մարքսը, ասում էնք, 50-ական թուականներից սկսած մինչև սոցիալգեմոլրատական օրգանների երեսն դալը Գերմանիայում, ոչինչ չի հրատարակել գերմանական թերթերում, բացի Բրեմենում լոյտ տեսնող «Neue Oderzeitung» թերթում գետեղուած (1855 թ.) մի քանի թղթակցութիւններից, ապա նոյնքան ազատ էին նրա առաջ անգել-սարսերի օրգանների էջերը:

Յիսունական թուականներից սկսած մինչև Ամերիկայի քաղաքացիական կոխւը, զրեթէ քոսն տարի շարունակ, Մարքսը աշխատակցում է «New York Tribune» ամերիկական յայտնի թերթին և դասնում նրա եւրոպական խմբագիրը: «Tribune» օրգանը այսօր մի հասարակ բուրժուական թերթ է, մինչդեռ սկզբնիրում նա այն աստիճան արտատական—զեմօլրատական ուղղութիւն ունէր, որ նոյն իսկ Մարքսի հմտն մարդու մտաւոր արտադրութիւններն էր հիւրնկալում իր էջերում: «Սոցիալ գեմօլրատիան, մեզնից ամեն մէկը՝ ով զիտէ գնահատել Մարքսի համձարը, նա պարտական է և ամեն առիթ ոնի շնորհակալութեամբ՝ յիշելու այն մարդուն—«Tribune» թերթի շէֆ խմբագիր Չարլս Դանային,—որ պահպանել և նիւթապէս ապահովել է այդ համձարին ամենավառն ըովէններին, որ էմիգրացիայի այդ սարսափելի ճգնաժամին միջոց է տուել Մարքսին ոչ միայն իր ապրուատը հոգալու, ոչ միայն զործնէութեան մի նոր ասպարէզ գանելու, այլ և ստեղծագործելու մի աշխատութիւն, որ այսօր կաղմաւմ է գերմանական հոգու ամենավառունիղ ու խորագննին արդիւնքներից մէկը»—իրաւմամբ նկատում է Կ. Կառուցկին:<sup>36)</sup>

Կ. Մարքսի ամերող քսան տարուայ հրատարակախօսական գործնէութիւնն արտայայւում է «New-York Tribune» օրգանի էջերում, ուր նա հրատարակում է բաղմաթիւ սոցիալ-քաղաքական և տնտեսական բնաւորութեամբ յօդուածներ: «Ճեղափոխութիւնն և հակայեղափոխութիւնը Գերմանիայում» զիրը, որի մասին մենք խօսեցինք վերև, մաս-մաս հրատարակում է

36) K. Kautsky «Vorrede» եր. ԽՆ (առև «Revolution und Kontre-Revol. in Deutschland» Մարքսի):

այդ օրգանի մէջ: Այսուեղ յիշենք նաև Մարքսի կարծիքը Թիւրքիայի մասին, որ նա մի մեծ յօդուածի մէջ արտայայտել է Հրիմի պատերազմի առթիւ:

«Թիւրքիան—ասում Մարքսը—կաղճում է լեզիտիստ Եւրոպայի մի վիրաւոր իէտը: Լեզիտիմիստ և միապետական կառավարութեան սխոտեմի անընդունակութիւնը՝ սկսած ֆրանսիական առաջին յեղափոխութիւնից, արտայայտուել է մի հայկականութեան մէջ՝ «ուղիղ և անխաղտ պահել՝ Status quo-ն»: Այդ ընդհանուր համաձայնութեան մէջ—այն է թողնել իրերը այնպէս, ինչպէս նրանք որևէ պատահականութեամբ առաջացել են—կայանում է արտապետող պետական ոյժերի անզօրութեան և աղքատութեան այն ապացոյցը, որ նրանք կատարելազողէն անընդունակ են զարկ տալու յառաջադիմութեան և քաղաքակարգութեան»: «Թիւրքիան փառում է—ասում է Մարքսը յօդուածի մի այլ մասում—և պիտի շարունակէ զես իր փառածութիւնը քանի գոյութիւն ունի «Եւրոպական հաւասարակշռութեան» ներկայ սիստեմը և status-quo-ի անխաղտ դիրքը, և հակառակ բոլոր կոնգրեսներին, արձանագրութիւններին և ուլտիմատումներին, նա պիտի իր ամեն առանց բաժինն ունենայ դիպումատիկան կնճառու գժուարութիւնների և միջազդային յուղող վաթորիկների մէջ»: 37)

Մարքսի 50-ական թուականներին արտայայտած այս նույտատեսումը պահպանել է աւելի քան իէս դար շարունակ իր բոլոր թարմութիւնն ու այժմէութեան արժեքը:

Մարքսի այդ շըջանի ամբողջ հրապարակախօսութիւնը՝ ամերիկական թերթում, չունի, անապայման, այն մեծ արժէքը, ինչպէս նա ունեցել է իր խոկական հրապարակախօսական կոչման շրջանում, երբ խմբագրում էր «Neue Rheinische Zeitung»-ը: Լոնդոնում 50-ական թուականներից սկսած մինչև «ինտերնացիոնալի» հիմնադրութիւնը Մարքսը աւելի մնանազէտ զիտնական էր, կարինետի գործիչ, քան հրապարակի մարդ: Մինչդեռ Բեօնում նրա մէջ եսում էր հրապարակական գրաւոր թէ բանաւոր գործնէութեան ջիզը:

Անզիայում—տեխնիքական յեղաշրջումների և կապիտալիզմի զարգացման կասիք միջնավայրում, այսուեղ, ուր կապիտալիստական տնտեսութիւնն առաջին անգամ վերածուեց զիտական սիստեմների և հիմք գրուեց տնտեսագիտութեան կլասիք գպրոցին,—այդ նոյն Անգլիայուն Մարքսն իր ժամա-

37) K. Marx, «Die Nationalitäten in der Türkei beim Beginn des Krimkrieges» (տես «Neue Zeit», XV տարի Էր. 69—70)

նակի մեծագոյն մասը նույիրել է տնտեսական ձեերի և տնտեսական գիտութիւնների ճշգրիտ ուսումնասիրութեան: Լոնգոնի զրագարան-մալզումի անրաժան այցելուն էր Մարքսը: Եւ իթէ մի կողմից զերժանական բնդհանուր բէտակցիան զրկել էր Մարքսուն որևէ հնարաւորութիւնից տաք մասնակցութիւն ունենալու ֆիբանիայի քաղաքական-հասարակական ընթացիկ կեանքին և առնասարակ գիրմաներէն արտայայտուելու, ապա անուբանալի է, որ այդ հանգամանքը միւս կողմից նպաստել է Մարքսի ակադեմիական ինտենզիւ զբաղմունքներին, այսինքն հրազդարակի մարտնչող վիճուորը դասնում է կարինեաի խորազնին գիտնական:

Այդ ժամանակ Մարքսն ու Էնգելսը միմիանցից բաժանուած էին ապրում: 50-70-ական թուականներն էնգելսն ապրում էր Մանչեստրում, վարելով այնտեղ իր հօր առևտրական գործերը. նշանակում է զրեթէ ամբողջ բան աարի նրանք միմիանցից բաժանուած էին: Սակայն և այնպէս չէր խզուած նրանց մտաւոր կապը: Նրանք անգաղար նամակագրութեան մէջ էին. ժամանակակից տնտեսական, գիտական և քաղաքական կեանքն ու ինպիրներն էին նրանց շարունակ զբաղեցնուու: Եւ այն ժամանակամիջոցում, երբ մեծ մատածողներից տւագ ընկերը ցամաքային եւրոպայի աղմէայցյզ շարժութների անսիջական մասնակցութիւնից հեռացած՝ լոնգոնուու մտաւոր ինտենզիւ աշխատանքով էր զբաղուած, որի արդիւնքն եղաւ այն նոկայ երկունքը, որ տնտեսական գիտութիւնների մէջ նոմանը չտեսնուած դարագլուն կազմեց, նոյն ժամանակամիջոցում կրտսեր ընկերը, նստած Մանչեստրում, ամենին չէր կլանուել տնտերական գործերով: Դրանք միշտ երկրորդական տեղ էն զբաւել էնգելսի համար: Նոյն տարիներուն էնգելսը հուանդով ուսումնասիրում էր պատերազմի պատմութիւնը, ոսկմական գիտութիւնները, ապա համեմատական լեզուարանութիւն՝ որ վաղուց ի վեր նրա սիրած գիտութիւնն է եղել, և տնտեսական ու ընտեսական գիտութիւնները:

Մարքսի կարինեատային զբաղմունքները չէին խանգարում առնենին, որ նու կենցանի յարաքերութեան մէջ մտնէր տեղական յայտնի անձնաւորութիւնների հետ: Օտար երկրներից, մանաւանդ Գիբրմանիայից, Անգլիա ապաստանող շատ կոմունիստների և յեղափոխականների մշտական այցելատունն եղել է Մարքսի բնակարանը, և բոլորի խորհրդատուն ինքը Մարքսը:

Այնպիսի յայտնի անձնաւորութիւններ, ինչպէս են Անգլիայի բանուորական շտրժան ականաւոր ներկայացուցիչները՝

իւլիան Հարնայ, էրնսո Զոնս—քայրայուած չարտիզմի վերջին շառաւիղները, ապա ծերունի Բորերդ Օվենը, ուտոպիստական սոցիալիզմի ամենասրամիւտ ու գործնական ներկայացուցիչը —դրանք և նման շատ մարդիկ կազմում էին Մարքսի ընկերական մտերիմ շրջանի անբաժանելի անդամները։ Ամենահետաքրքրական ծանօթութիւնը, սակայն, որ Մարքսն ունեցաւ Լոնգոնում, դա Դաւիթ Ռերբարտի հետ էր։ Այդ նշանաւոր քաղաքագէտը բացառակի մարդն էր, որ այնքան խոր ծանօթութիւն և նուրբ հասկացողութիւն ունէր սուսական դիպլոմատիայի և «Արևելիան հարցի» մասին։ Մի հեղինակութիւն առաջին կարգի—առում է Լիբկնիեխտը—նոյն իսկ ամենաբարձր հեղինակութիւնը, որի իւրաքանչիւր ասածն ու դրածը Ռուսաստանի և Թիւրքիայի մասին ունէր իր խոշոր արժեքը։ Ռուսարտը մի զիպլոմատիական տաղանգ էր, որ քայլ առ քայլ հետեւում էր Ռուսաստանի քաղաքականութեան մերձաւոր Արևելքում։ Ռուբարտի շնորհիւ մենք (Մարքսի ընկերական շըրջանին է վերաբերում խոռը Բ. Ի.) զիպլոմատիական խընդիրների բուժնութիւն հասկացողութիւնից անցանք բէալիսաական հասկացողութեան սահմանը։ Եւ ինչ որ ես—աւելացնում է Լիբկնիեխտը—մեր կուսակցական մամուլի և գրականութեան մէջ, ապա բայխոստագում ասել ու գործել եմ գերմանական դիպլոմատիայի և ռուսական տաւրառու նուռագական քաղաքականութեան դէմ, դրանով ևս ամենից առաջպատական եմ Ռուբարտին և նրա զրուածքներին»<sup>38)</sup>։

Ռուբարտի միջոցով է նաև, որ Մարքսը մօտ ծանօթանում է «Արևելիան խնդրի» և սուսական քաղաքականութեան հետ և Դրիմի պատերազմից առաջ «New York Tribune» թերթի մէջ ընդարձակ ու լուսարանուած յօդուած է զրում Թիւրքիայի բոլոր ժողովուրդների, իրա՞ Թիւրքիայի, և միջազգային քաղաքականութեան մասին, որից մենք իրեւ նմուշ գրանի կէտեր յիշատակեցինք վերև։

Բ. Իշխաննեան

(Կը շաբունակուի)

<sup>38)</sup> W. Liebknecht. «Karl Marx zum Gedächtniss» Էր. 56—57.

## ՍԻՄՎՈԼԻԶՄԸ ԴՐԱՄԱՅՑԻ ՄԷջ \*

Համաշխարհային ընդարձակ կեանքը անցնում է այսօր մարդկային պատմութեան ամենամռայլ ու ամենածանր շրջան-ներից սինը. մտային վրդովմունքի, թափառումների, անյայտ ապագայի նկատմամբ տածած հիւսնդագին զուցէ և անպառուղ բանկումների մի արիւստ գարեշքան: Ամենասարսափելի ու ժահացու օրեր, որոնք երրիցէ ազրել է մարդկութիւնը... Թւում է թէ փոթորիկների ու մրրիկների նախերգանքն ենք լալիս, թւում է թէ ալխուր յայտնագործութիւնների նախազգացումների մէջն ենք զովզողում... Մի ծանր ու անյաղթելի սարսափ է նոտած մեր սրտերի վրայ. բոլոր մտքերին ու բոլոր հոգիներին տիրում է մի մթին արամազրութիւն, որ կարելի է արտայայտել այսպէս՝ արհաւալրի նախօրեակ: Քաղաքական կեանքի հորիզոնը մթագնած է անեղ, անհեթեթ, խոշոր ու խորհրդաւոր ոգով, որ իր գերազոյն անյունութիւնն մէջ՝ կամենում է աւերել ամեն ինչ, կործանել հասարակական ու պետական բոլոր կարգերն ու օրէնքները, ոմբակոծել հնագոյն եկեղեցիներն ու նորագոյն պարլատնաները հաւասարապէս. մի ոգի, որ անգիտանում է ամեն սահման, որ մերժում է ամեն կառավարութիւն, որ հեկնում է թունաւոր անտարբերութիւնը ժամանակակից բոլոր բարոյական ըմբռնումները. մի ոգի, որի անունն է անիշխանութիւն:

Ու այն, ինչ կեանքի մէջ հազիւ է զգացւում՝ զրականութիւնն մէջ արդէն գործում է: Այդ տեսակէտից չափազանց հետաքրքրական է բննութիւնն ենթարկել «զեղարուհատական» անիշխանութիւնն» այն քայլերը, որոնք գիտում են իրը ամենազօրեղ ըմբռսացում բոլոր հին սկզ-

\* ) Յօդուածն կազմելիս ի նկատի եմ ունեցել հետեւալ ազբիւրները. — «La poesie nouvelle». A. Beaunier, «Les jeunes» Daumier, «L'impression de théâtre» Lemaître, «Mercure de France» ամսագիրը, «Вѣстникъ иностр. литер.» սուսական ամսագիրը, «Le trésor des humbles» Maeterlinck, «Le Double jardin» Maeterlinck, «L'histoire de la littérature fran aise», «L'histoire de la litter. allemande» և այլ մանր յօդուածներ:

բունքների, անժամանակակից օրէնքների, ուշալիզմի, պուղիտիզմի, նատուրալիզմի դէմ... Սկզբունքներ ու տեսութիւններ, որոնք վերջին քառասուն տարուայ ընթացքում թագաւորում էին և բուպական գրականութեան մէջ: Նոր գրականների ձգտումները արտայատուում են աւելի գրականութեան ամենակենուական և ամենաթթվառուն ճիւղի՝ գրամայի մէջ: Այդ ճիւղն է համարւում լաւագոյն արտայայտիչը հասարակական նոր արամագրութիւնների ու երազանքների, որովհետեւ այդտեղ են անդիջապէս բնգհարւում միմիանց գրամատուրգ բանաստեղծն ու հասարակութիւնը: Այդ պատճառով սիմվոլիստները զէպի այդ ճիւղը լարեցին իրանց ռազմային հարուածները: Մետերլինկ՝ ֆրանսիայում, Հառովուման՝ Գիրմանիայում և Իրսէն՝ նորվեգիայում տարբեր ճանապարհով ու տարբեր արտայայտութիւններով գիտում են միենոյն նովատակին—քանգել ոչալիստական ու հին դասական հիմունքները ժամանակակից թարբոնի և վերստեղծել գրաման նոր խոհալիստական սկզբունքների համաձայն:

Քննադատներն ու թատրոնական ու ցէնզունուները վաղուց զգում էին գալիք վտանգը, զգում էին, բայց չին համարձակւում այդ մտուին խօսել: Վերջապէս Ռասինի, Կորնելի և Մոլիէրի համատարիմ պաշտպաններից մինչ վերդինանդ Յրինետիէր, ֆրանսիական ակադեմիկ ու քննադատ, գեղարուեստական անիշխանութեան ամենահետևողական իշխամին հարկ համարեց պաշտպանողական դիրք բոնել սիմվոլիստական և միատիք ներշնչումների դէմ... Նա սիրով համաձայնուում է նորերի հետ այն կէտում, որ բիմական սուելդագործութեան համար դոյութիւն չունի ոչ մի արտաքին օրէնքը: Ռասին և Կորնել գաստական երեք միութիւնների օրէնքը պահպանելով հանդերձ հասնում էին միենոյն հետեանքին, որին համուում էր Շէքսպիր առանց պահպանելու այդ օրէնքը: Սոփոլէս և Եւրիպիդէս խուսափում էին ծիծաղելիի ու սարսափելիի, ոզբերգականի ու կոմիքականի միութիւնից, մի բան որ Շէքսպիրի սիրած ձեւերից մինն է... Հարկաւոք է արդեօք բնաւորութիւնը ենթարկել հերոսի գրութեան՝ թէ դրութիւնը բնաւորութեան—բացառապէս միենոյն է, հսարաւոք է և մէկը և միւսը: Ամեն ինչ կախուած է բանաստեղծի անձնականութիւնից, խառնուածքից:—

Այդպէս ուրիմն-եզրակացնում է Բրիւնտիէր—ոչ մի արտաքին օրէնք չկայ: Բայց դա տակաւին չէ նշանակում. թէ գոյութիւն չունի նաև ներքին օրէնքը, գեղարուեստական սկզբունք: Խոչչումն է կայանում թարբոնի այդ հիմնական ու

անհրաժեշտ օրէնքը. (La loi du théâtre), Քննադատի կարծիքով դրամայի ամբողջ հութիւնը հերոսի կամքն է. «Փլխաւոր ու կարևոր բանը, որ մենք պահանջում ենք գրամատիքական բոլոր երկերից՝ ցուցազրութիւնն է կամքի, որ ձգտում է մի նպատակի և որ գիտակցում է ինքն իրան: Վէպն ու զրամանոչ թէ միայն միենոյն բանը չեն, այլ և տրամագծօրէն հակառակ են միմիանց իրանց գեղարուեստական խնդիրներով: Վէպի հերոսը իր վրայ ընդունում է շրջապատող դէպքերի գործողութիւնը, իսկ զրամայի հերոսը ամենից առաջ ինքն է գործում, նրա կամքը յազդում է խոչնդուներին, նա պիտի սեփական բախտի ստեղծագործողը լինի...» Բրիւնտիէրի կարծիքով ֆրանսիական նատուրալիստական դպրոցի ամենամեծ մոլորութիւններից մինը կայանում է նրանում, որ նա շիոթեց վէպը զրամայի հետ:

Այն խոչնդունները, որոնց դէմ կուռում է հերոսի կամքը, սահմանում են ըեմական ստեղծագործութեան յատկութիւնն ու տեսակը: Եթէ խոչնդունները անյաղթելի են ու հերոսը պիտի մեռնի վարած կոռուի մէջ առաջ է գալիս ողբերգութիւն: Եթէ խոչնդունները ու հերոսի ոյժը հաւասարակշիս են ու ելքը անյայտ է՝ առաջ է գալիս դրամա: իսկ եթէ խոչնդուններն անզօր են հերոսի կամքի առաջ և յաղթութիւնն անկասկած ծելի՝ առաջ է գալիս կոմիղիա:

Եւ այսպէս գրամայի էռթիւնը գիտակցական կեանքի կոիւն է արգելքների գէմ... Բրիւնտիէր եռանդուն կերպով աշխատում է ապացուցանել այս միտքը թատրոնի պատմութիւնից վերցրած բազմաթիւ օրինակներով: Բոլոր գարերում ու բոլոր ժողովուրդների մէջ զրամատիքական արուեստը հասնում է ամենակատարեալ ծաղկման՝ հերօսական կոռուի, ժողովրդական կամքի մեծ լարման շրջանում: Իզուր չէ յունական ողբերգութիւնը ժամանակակից համարւում մեղական կոիւներին, երբ եւրոպան առաջին անգամ յազդեց Ասիային: «Պրամէթէոսի» անմահ ստեղծագործող էսքիլէսը կուռում էր պարսիկների գէմ ու Սալամինայի ճակատամարտի օրը ծնւում է եւրիպիդէս: Սերգամտէս, Կալ'զերոն պատկանում են այն զարհշրջանին, երբ իսպանիայի կամքը օրէնք էր ամբողջ եւրոպայի և նոր-Աշխարհի համար: Իսկ Ռասինի և Կորնելի ստեղծագործութիւնների մէջ արտացոլում է ազգային մեծ ոյժի հմայքը 16-րդ դարի վերջում, երբ Ֆրանսիան դիմում էր գէպի պետական միութիւն և երբ տեղի ունէր Հենրիխ IV-ի, Բլլէլէօի, Մազարինի փառահեղ քաղաքական գործունէութիւնը: Եթէ ֆրանսիական ողբերգութիւնը իսպանական դրամայի նը-Մարտ, 1906.

ման պատկանում է մի քիչ յետոյ եկող դարեցը ջանի, լիովին ճշտութեամբ չէ զուգադիպում ժողովրդական կամքի մեծ լար- ման վայրկեանին՝ այդ էլ առաջանում է այն համագամանքից, որ ոչ ամեն ժամանակ մեծ պատճառների զործողութիւնները ակնթարթապէս արձագանք են գոնում գրականութեան մէջ։ Հարկաւորում է յաճախ մի փոքր ժամանակամիջոց, որպէսզի զործողութիւնը ամբողջովին լուսաբանուի։ Անկասկած է, որ Գէօթէի և Շիլէրի հանճարեղ դրամաները սերտ կերպով կա- պուած են գերմանիայի աղքային վերածնութեան՝ Ֆրիդրիխ Մեծի դարեցը նին։—Եւ լնգնտկառակը, այն ժամանակ, երբ մարդկութեան կամքը թուլանում է և զարգանում է աւելի կրաւորապէս՝ բարեյանող կերպով է ծաղկում վէոլը, որի էու- թիւնը զործողութեան և արտաքին աշխարհի ազգեցութեան արտայայտացումն է հերոսի վրայ։ Ահա ինչո՞ւ համար վէպի զարգացումը երբէք չէ զուգատիպում գրամայի զարգացման։ Արևելքում, ուր մարդկային կամքը շարունակ ճնշուած է եղել՝ գոյութիւն ունին բազմատեսակ վէպեր, բայց ոչ մի զրամա։

Բոլոր այս գատառողութիւնները ուղղուած են ըստ կու- թեան մի նպատակի համար, — լուսաբանել ժամանակակից ֆրանսիական թատրոնի անկման պատճառները, այսպէս ա- նուանուած «Քենաւկան տագելավ», որից շարունակ գանգատ- ում են քննադատները, անգամ իրանը գրամատուրիները։

Երեսոյթի հիմնական պատճառը Բրինտիէր գտնում է ժամանակակից քաղաքակիրթ մարդկութեան կամքի թուլու- թեան մէջ։ «Փիլիսոփաներն ու նոյն իսկ սովորական մտա- ծողները գանգատուում են, որ մարդկային կամքի զավանակ- ները թուլացել են, աւելի ու աւելի կորցնում են իրանց ամ- րութիւնը և ծածկում ժանգով»...

Մենք չենք կարողանում կամենալ, չենք կարողանում կռուել արգելքների դէմ։ Մենք անձնատուր ենք լինում արտա- քին կեանքի հոսանքներին։ Այս ցաւոտ երեսոյթին քիչ չէ նպաս- տում նաև ժամանակակից գիտական գետերմինիզմը\*), որ նման ասիական ճակատագրականութեան՝ (Փատալիզմի) մարդկու- թեան կամքը ոչնչութեան է հասցնում։ Իսկ այնուղի, ուր չկայ ժողովրդական հերոսական կամքի մեծ լարումը՝ չէ կարող լի- նել և մեծ դրամա։ Ահաւասիկ ինչպէս է բացատրում Բրին-

\*.) Իւրաքանչիւր երեսոյթ իր պատճառը ունի. մարդկային դորձո- ղութիւնները և կախում ունին արտաքին պատճառներից, ահա այդ ուս- մանքը փիլիսոփայութեան մէջ կոչում է դիտերմինիզմ։ Ծ. Խ.

տիէր ժամանակակից ֆրանսիական թատրոնական տագնապի  
(La crise théâtrale) պատճառները:

Ֆրանսիական մի ուրիշ տաղանդաւոր քննադատ Ժիվլ Ալ Մյելը նոյնպիսի թախիծով ու անհաւատութեամբ է վերաբեր-  
ւում գէպի գրամայի ապագան, ինչպէս Բրիւնափէր: Լը Մետրի  
կարծիքով թատրոնական նորագոյն միստիցիզմը ոչ այլ ինչ է,  
եթէ ոչ բարեպաշտութիւն առանց հաւատի, կրօնական հաս-  
տատութիւնների բռնի վերանորոգութիւն, կաթոլիկ դաւանու-  
թեան վերածնութիւն, նախապաշարմունքների վերադարձ—  
ահա ինչումն է կայանում գրական նոր շարժման էութիւնը:  
«Այդ բոլորը նորաձևութիւն է—գրում է քննադատը—ուրիշ  
ոչինչ, բայց եթէ ախորժելի խաղեր, որոնցով ձգուում են կրօ-  
նից հանել՝ իբր գեղարուեստական քաղցրութիւն՝ այն ամենը,  
ինչ որտաշարժ է, յուղիչ է, գեղեցիկ է ու զգայուն...»

Ապա պատմական ահսութիւն է անում, ցոյց տալու հա-  
մար, որ 17-րդ դարում ֆրանսիական գրամատուրքների սուեդ-  
ծագործութիւնների մէջ լիովին բացակայում էին բրիստոնէա-  
կան գաղափարներն ու կրօնական տարրերը: Փուցէ դա առա-  
ջանում էր վերածնութեան հեթանոսական ոգուց: Բաց կան  
նաև ուրիշ պատճառներ.—«Կորուլի և Մոլիերի ժամանակակի-  
ցները այնքան անկեղծ կրօնասէլքներ էին, որ չէին կարող  
հանդուրժել թատրոնի վրայ—աշխարհիկ զուարձութիւնների  
այդ վայրում—չափազանց ուղղակի, չափազանց բաց ցուցա-  
դրութիւնը իրենց ամենասրբազան զգացումների, իրենց բարո-  
յական էութեան... Հէնց այս առաքինի կրօնական ամօթիած-  
ութիւնն է բացակայում նորագոյն միստիցիզմի մէջ... և ահա  
թէ ինչու—եղբակացնում է քննադատը—ևս չեմ կարծում, որ  
միստիքական շարժումը երբեկցէ կարողանայ լուրջ նշանակու-  
թիւն և ապագայ ունենալ թատրոնի մէջ կամ գեղարուեստի  
միւս ճիւղերում»:

Սակայն լը Մետրը իզուր է կարծում, որ միստիցիզմի  
մէջ գոյութիւն ունի որևէ «քարեպաշտութիւնը առանց հաւա-  
տի». իզուր է կարծում, որ գրական նոր շարժման էութիւնը  
կաթոլիկ կրօնի և միջնադարեան միստէրի վերածնութեան  
մէջ է կայանում:—Նորագոյն միստիցիզմը շատ լայն և միան-  
գամայն տարբեր շարժում է: Նա կապ չունի առհասարակ որ-  
եւ եէ բարեպաշտութեան հետ՝ լինի կաթոլիկ թէ բողոքական: Այն-  
պիսի գրող՝ ինչպէս Մետրլինկ շատ ըարձր է կանգնած ծաղր-  
ուած կաթոլիկական բարեպաշտութիւնից: Նա անկեղծ, խոր-  
ուած միստիք է՝ առանց կաթոլիկ լինելու կամ առհասարակ

առանց կրօնական որևէ դաւանանքի պատկանելու։ Միթէ միստիքական քիչ տարրեր կան Գէօթէի մէջ, միթէ քիչ միստիքագմ ունի Շէկսպիր, որ ստեղծել է Համլետի տիպը, այդ մեծագոյն յարիտենական միստիքի տիպը՝ զերծ բոլոր կրօնական դաւանանքներից ու բոլոր սահմանափակ հաւատալիքներից...

Հետաքրքրական է սակայն, որ տաղանդաւոր քննազատը մշտապէս չնաց իր ծայրայեղորէն բացասական վերաբերմունքի մէջ։ Նոր շարժումը այնքան հրամայական պահանջ էր ամենքի համար, այնքան ներդաշնակ կապակցութիւն ունէր ժամանակակից մտքի ընդհանուր համակարգութեան հետ, որ նատուրալիզմի և ուշալիզմի ամենախոշոր ներկայացուցիչներն անգամ չկարողացան հաւատարիմ մնալ իրանց հանկացողութեան նոյնքան խիստ կերպով, ինչպէս առաջ։ Զոլան իր վերջին աշխատութիւնների մէջ չէ կարողանում այլևս հրապարակ գալ այն ծայրայեղ առարկայականութեամբ (օճեկտիվոս्त—օբյեկտիվութեամբ), որ սահմանաւորում էր ստեղծագործողի մահացութեամբ ու հոգու կամաւոր ինքնասպանութեամբ յանուն գիտակոն անաշառութեանն եւ Յօդիկի ակնարկած «մոռայլ անհետաքրքրականութիւնը» (la morne incuriosité) առևս կամաց-կամաց հեռանում էր նրա երկասիրութիւնների միջից՝ տեղի տարով յուղուող ու զգացող հետաքրքրականութեան...

Փիլ լը Մետր՝ վաղեմի գրական աւանդութիւնների մէջ ձուլուած ու մննդուած այդ ծերունի ըննադատը բացարձակապէս ու հիմնովին չփոխեց, ինարկէ, իր գեղարուեստական աշխարհանայեացը, սակայն մոռացաւ իր հինաւուրց ատելութիւնը և սկսեց հասկանալ նորերին։ «L'impression de théâtre» վերնագիրը կրող աշխատութեան ութերորդ հատորի մէջ խօսելով նոր շարժման ներկայացուցիչ Մետելինկի մասին՝ նագուում է ի միջի այլոց հստեեալը։ — «Անյայտը, ակաման, հոգիների համը հաղորդակցութիւնները; արտաքին նշանները, մարմնաւոր և բարոյական (moral) աշխարհների խորհրդաւոր յարաբերութիւնները, ապրելու ապշեցնող իրողութիւնը, մահուան երկիւղն ու նախազգացումները, մեր իսկ ամբողջութեան մեղանից ծածուկ մասերը, մեր ներքին խաւարն ու մթութիւնը, մի խօսքով անգիտակից կեանքը—ահաւասիկ մօտաւորապէս այն, ինչ որ Մետերլինկ արտայայտում է պատկերներով և խորհրդանշաններով... Այն. Մետերլինկ անգիտակցականի վըսեմի սարսափելի բանաստեղծն է... Բանաստեղծը ես՞ի մէջ թագնուած բոլոր ո՛չ-եաների։ Տեղատուած, թուլօրէն տեղաւորուած ժամանակի և տարածութեան մէջ՝ նրա դրամաները այնուամենայնիւ չեն անջատում այս նիւթական աշխարհից, ուր բու

լոր ոյժերը—նոցա հետ միասին և մեր կրքերը—իրանց թագ-նուած ծագութիւն ունին: Մետերլինկի բոլոր գործերում մի անձայր նրբութիւն, մի արցունքոս ողբերգականութիւն կայ...» Սիմվոլիզմի հինաւուրց երգուեալ թշնամին այսպիսի լեզուով է խօսում բելգիացի տաղանդաւոր միստիքի մասին:

Բրիւնտիերից և Ժ. Լըմեարից յիշոյ՝ գրական նոր շար-ժումը գառնում է ընդհանուր ըննադատութեան առարկայ: Ա-մեն կողմից սկսում են տարբեր հայեացքներով լուսաբանել սիմվոլիստական գալոցն ու նրա հետ կապուած փիլիսոփայա-կան—գրական արամագրութիւնները... Մենք կանգ կ'առնենք միայն մի քանիսի վրայ, որոնք այսպէս թէ այնպէս մեր առա-ջազբած նիւթի համար հետաքրքրականութիւն են ներկայաց-նում:

Պէտք է նկատել, որ բոլոր այդ քննադատութիւնների մէջ տիրապետող ողին ընդհանրապէս համակրական է: Ասես ամենքն էլ գիտակից մի մոռացուած ճշմարտութեան՝ կամե-նում են ամեն կերպ վաստարանել նրա իրաւունքները: Յոզնած թէալիստական աշխարհայեացքից, յուսախաբուած գրական փիլիսոփայութիւնից՝ նորա կամենում են մի ընդհանուր թձ-ուչքով թևակոփեկ հոգեկան և մտաւոր այն սահմանները, որ աւելի գիւրիւթեամբ են հետախուզում յաւիտենական ճշմար-տութիւններն ու տիեզերական գերագոյն օրէնքները...

Ֆրանսիական գրականութեան պատմագիրներից և նորագոյն քննադատներից մինը՝ Ռենէ Դումիկ (René Daumic) իր «les Jeunes» («Երիտասարդներ») վերնագիրը կրող ըննական ուսում-նասիրութեան մէջ այսպէս է ձևակերպում այն անձնական-ենթակայական (ցյնեկտիվ) ոգին, իր նորագոյն գրական շարժ-ման էական յատկանիշներից և տիրապետող գծերից մինն է: «Իդէալիզմը նոր գրականութեան հիմքն է կազմում. գեղ-արուեստական գրականութիւնն երազների բան է. գեղարուես-տագէտը երազող է... Մենք միայն մեզ ենք ճանաչում. մեր մէջ են եղել այն էակները, որոնց մենք մեկնել ենք մեր ձեռ-քերը և այն իրերը, որոց մենք կամեցել ենք զարնուել... Մեր մէջն է եղել ծաղիկների բուրմունքը... Եւ մթին հեռաւորու-թիւնների այն ուղին, ուր մոլորում էր մեր ճակատագիրը՝ չէր տանում ուրէշ ոչ մի տեղ, բայց եթէ գէպի մեր հոգին... Մարդկանց մէջ մի անքակտելի համերաշխութիւն (solidarité) կայ և ամեն մէկը մեղանից իր մէջ կըում է ընդհանուր մարդկութեան մի կայարանը, մի կտօրը... Մեր մէջ ուսումնասիրելով մեզ

մենք ուսումնասիրում ենք բոլոր միւսներին, մենք սովորում ենք ճանաչել մարդուն իր ամենալընդհանուր, էական և անփոփոխ գծերի մէջ... Մենք համաշխարհային ճակատագրի գիտակցութիւնն ենք ստանում: Այսպէս է, որ հոգին—զգացմունքների հանդարտութեան, կրքերի լուսական ու շահերի մոռացութեան մէջ—զաւնում է իր շուրջը և հիանում իր մէջ ապրող բացարձակութեան վրայ... Այս երազանքի արտայատութիւնը պիտի լինի նորագոյն գրականութիւնը և որանով է տարբերում նա բոմանտիզմից ու նատուրալիզմից...»

Սիմվոլիստական գրական գլուոցի ամենաէական սիւներից մէկն էլ վերոյիշեալ փիլիսոփայական ըմբռնումն է: Մինչ դեռ ամբողջ բէալիստական գրականութեան մեծագոյն սկլերունքը առարկայի առաջնութիւնն է, մինչդեռ այնտեղ ստեղծագործողը ջնջում է առարկայական գործերի մէջ՝ այստեղ և՛ի, ենթակայի սկզբունքն է առաջնակարգ տեղ գրաւում, այստեղ ստեղծագործողը տիրապետում է գործերի վրայ: Սիմվոլիստների ըմբռնումով աշխարհը մեր ես'ի և մեր հոգու ստեղծագործութիւնն է ու մեր հոգին միշտ ազատէ փոփոխութեան ենթարկել նրան՝ իր երեակայութեան և իր մտածումի համաձայն:

Դումիկ վերոյիշեալ աշխատութեան մի ուրիշ գլխի մէջ խօսելով ֆրանսիական գրականութեան աննախանձելի վիճակի մասին՝ տխրութեամբ նկատում է. «Եսատուրալիստ և բէալիստ տեսութիւնները երկար ժամանակ ծանրացել և այսօր էլ ծանրանում են տակաւին մեր գրականութեան վրայ: Մի քանի հին հեղինակներ՝ իւրաքանչիւրը իր տեսակէտով և իր ձեռով աշխատել են մեզ ազատել նատուրալիզմի կապանքներից... Այս շարժումն է շարունակում երիտասարդ գրողների մէջ փոքր ինչ այլ պայմանների տակ և այլ արտայայտութիւններով: Սրանց մէջ աչքի ընկնող տեղ է գրաւում Մետերլինկ, որի նշանակութիւնը լաւ հասկանալու համար՝ պիտի համեմատենք իրանից առաջ գոյութիւն ունեցող գրականութեան հետ: Փաստեր, գոկումնատներ, գիտական յատակնութիւններ, միջավայրի բացատրութիւններ և միջավայրով պատճառարանուած անհատական հոգեբանութիւն, մանրամասն դիտողութիւն և վերլուծութիւն արտօքին աշխարհի. այս բոլորը բէալական գրականութեան էական յատկութիւններն են. մի գրականութիւն, որ ձգտում էր գիտական հետազոտութիւնների գործիք դառնալ և որի մէջ իրականութիւնը հետաքրքրական էր այնքան, որքան մասնաւոր էր ու նիւթական: Մետերլինկի գրականութիւնը մի

ուժեղ պատասխան է բոլոր այս յաւակնութիւններին ու գեղարուենատական մոլորութիւններին»:

Այսպէս ուղիմմ Մետերլինկան զբական ու փիլիսոփայական աշխարհայեցողութիւնները պիտի հանէին զբականութիւնը սորվակական վիճակից, պիտի ազատէին նրան «առարկայական և անաշառ գիտութեան» իշխանութիւնից և պիտի տային նրան գեղարուեստական այն բարձրութիւնն ու անկախութիւնը, որին արժանի է նա:

(Կր. շաբանակուի)

Սիմեոն Յակոբեան

### ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆ\*)

I

Իշխանութեան ստիպողական գործառնութիւնը կամ ֆունկցիան, որի ամենախիստ արտայայտութիւնն է պատիժը—պէտք է մանրազնին երաշխիքներ ունենայ, որպէսզի ծառայի միայն և եթ իրաւունքին:

Երբ կառավարութիւնը քաղաքացուն մեղադրում է բրէական որևէ գործողութեան մէջ, երբ քաղաքացուն օրինակարգի պահպանութեան տեսակէտով սպառնում են ծանր պատասխանաւութիւններով, երբ այդպիսով վէճ է ծագում քաղաքացու և տէրութեան մէջ,—ո՞վ և ի՞նչպէս պէտք է վճռի այդ սուր և վերին աստիճանի կարեւոր հարցը: Անհրաժեշտ են երաշխիքներ, որպէսզի մեղադրուածի մէջ յարգուի անձնաւորութիւնը, անհրաժեշտ է որ այդ անձնաւորութիւնը ձանաշուի վիճող կողմ, որը վայելում է նոյն իրաւունքները, ինչպէս և նրա հակառակ կողմը՝ այսինքն կառավարութիւնը: Պէտք է երաշխիք լինի որ այդ վէճը կը լուծուի անաշառ երրորդ կողմից, որ միանգամայն ծեռնհաս է այդպիսի պատասխանատու նպատակ ստանձնելու համար:

\*) Օգոստել ենք պրիվ.-դաց. Թ. Պ. Միկայլովսկու «Շակազ. ու գործուածքը» («Ե. Փ. և Ա.» 1905):

Մարդկութեան գարեսոր փորձը՝ այդ վէճը կառավարութեան և քաղաքացու մէջ լուծելու համար՝ ստեղծեց կառավարական իշխանութեան առանձին մի օրգան—դատաստանը։ Պետութիւնը ունի երեք զլխաւոր փունկցիաներ. օրէնսդրութիւն, կառավարում (աղմինիսորացիա) և դատաստան։

Այդ երեք ոյժերը պէտք է նպաստեն կուլտուրային. Աղմինիստրացիայի կամ նեղ մտքով վերցրած կառավարութեան իշխանութեան գործունէութիւնը ուղղուած է ապահովելու ժողովրդի կուլտուրական զարգացումը, ապահովելու ամենանպաստաւոր պայցմանները, որոնք ըստ կարելոյն լիտակատար գոհացուն են տալիս նրա հոգեկան և նիւթական գոյութեան պահանջներին։ Աւելի պարզ է երկրորդ կուլտուրական ոյժի՝ օրէնսդրութեան գործողութիւնը. նա ամենալնդինուր դժերով միայն ցուցմունքներ է տալիս այն ահագին աշխատանքի ծրագրի մասին, որ պարտաւոր է կատարել աղմինիստրացիան. օրէնսդրութիւնը միայն ցոյց է տալիս ամբողջ պետական կենսնքի ընդհանուր սկզբունքները։ Առաջել ես պարզ է երրորդ կուլտուրական ոյժի—այսինքն դատաստանի գործունէութիւնը. Իրաւունքի պաշտպանութիւն—ահա նրա միակ և բացառիկ նպատակը։

Արդ ի՞նչ յատկանիշով է տարբերում դատաստանի գործունէութիւնը, որի նպատակն է իրաւունքի պաշտպանութիւնը, աղմինիստրացիայի գործունէութիւնից, որ ի միջի այլոց ունի նոյն տեսակ նպատակ։ Պրոֆ. Jousserandot դատաստանական իշխանութեան մասին գրած իր գեղեցիկ մոնոգրաֆիայի մէջ ասում է թէ յատկանիշը որով դատաստանական գործունէութիւնը տարբերում է միւսներից կայսնում է իրաւունքի վէճի մէջ։ Մինչև չի ծագում այդ վէճը՝ դատաստանի անելիք չունի։ Բայց հէնց որ վէճ է ծագում իրաւունքի մասին՝ մասնաւոր անհատների կամ մասնաւոր անհատների և պետութեան մէջ և որևէ մէկ կողմը պնդում է թէ իր իրաւունքները խախտուած են,—այն ժամանակ բեր է դուրս գալիս, այդ վէճը վերջնականապէս և հեղինակաւոր կերպով լուծելու համար դատաստանը։

Jousserandot-ն աղմինիստրատիւ արդարադատութիւնը (իստիցիա) անուանում է իրաւաբանական անհեթեթութիւն, որովհետեւ այդ զիստուածում իրաւունքի մասին վէճը դատաստանի իրաւասութիւնից հանւում է, վէճի առարկայի ստանձնայատուկ բովանդակութեան պատրուակով։ Մինչդեռ դատաստանի և աղմինիստրացիայի գործունէութիւնները տարբերող յատկանիշը առանձնայատուկ բովանդակութիւնն չէ կազմում, այլ վէճը։ Այսպիսով աղմի-

Նիստրացիան դատաւոր է գառնում իր սեփական գործի մէջ՝ անհատների իրաւունքների նկատմամբ աւելի վահանգաւոր բան բան այդ չի կարող լինել:

Կայ մի այլ կարենոր մոմենտ էլ, որ անհրաժեշտ է դարձնում գատառատանական իշխանութեան գոյութիւնը և որոշակի սահման է դնում գատառատանի և ադմինիստրացիայի գործունէութիւնների մէջ։ Այդ մնաննետը կայանում է իշխանութեան ստիպողական գործառութեան (Փունկցիա) կարգադրելու մէջ։ Միայն դատաստանը իրաւունք ունի կարգադրելու այդ գունկցիաներով։ Դատաստանի ճնոքում այդպիսով կննարունակում է ոյժի գործադրելու մենաշնորհ, ոյժի, որ պէտք է ծառայի իրաւունքներ։

Այդ բանին բոլորովին չի հականառում ոստիկանութեան գործունէութիւնը որոշ գէպերում։ Դատառատանական ստիպողականութեան մենաշնորհի սկզբունքը չի նշանակում, որ եթէ օրինակ, ոստիկանը նկատում է աւագակին, որ ուզում է մորթել մարդուն, պէտք է նախ զնայ գատաւորի մօտ և ստանայ հրաման կալանաւորելու աւաղակին։ ինքնըսախնքեան հասկանալի է որ ոստիկանութիւնը պէտք է ունենայ իրաւունք նաև ստիպողական միջոցներ գործադրելու յանցանքի առաջն առնելու համար։ Սակայն նախ՝ որ այդ բոլոր միջոցները պէտք է հասցրած լինեն նուազական չափերի և գործադրուեն միայն ծայրայել անհրաժեշտառութեան սահմաններում և պէտք է պայմանաւորուած լինեն մի շաբք երաշխիքներով։ Երկրորդ՝ և այդ ամենազլխաւորն է—այդ բոլոր միջոցները պէտք է ենթարկուեն դատաստանական վերահասուլթեան (կոնտրոլի)։ Այդպիսով նրանց վերջնական հաստատումը կախուած է դատաստանից, որպէս իշխանութեան միակ օրգանից, որ վագործութիւն ունի կարգադրելու օրինակարգի պահպանութիւնը ստիպողական միջոցներով։ Իբրև կլասիկ օրինակ թէ ինչպէս կարելի է հաշտեցնել գատառատանի ստիպողականութեան մենաշնորհը ոստիկանութեան լայն լիազօրութիւնների հետ՝ ծառայում է անզլիքական Habeas Corpus Act-ը լրացուցիչ կանոններով, որոնցով իւրաքանչիւր պաշտօնեայ պատասխանատու է գատաստանի առջև քաղաքացու իրաւունքի ամեն մի խախտման համար։ «Եթէ ներքին գործերի մինիստրը —ասում է հոչակաւոր Քայսին,—ապօրէն կերպով ձերբակալեր մէկին, ձերբակալութեան ադմինիստրատուր լնոյթը, քաղաքական նկատողութիւնները, մինիստրների զիրքը չին արգարացնիլ գատաստանի առջև նրան, ինչպէս և այն ոստիկաններին, որոնք կատարել էին մինիստրի հրամանը», բացի այն որ ա-

պօրէն կալանառուուածը Habeas Corpus Act-ի գօրութեամբ անլյապաղ աղատուած կը լինէր գատաստանի կարգադրութեամբ։

Ադմինիստրատիւ պատիժները անընդունելի են իրաւաբանական գիտութիւնից. «ամեն մի քան որ քաղաքացուն պատճառումէ տանջանք ֆիզիկական կամ բարոյական, —ասում է պրոֆ. Ա. Կիստեսկովսկիյ. —ամեն մի նեղում կամ աղատութեան ոահմանափակում, որոշ վայրում ապրելու ամեն տեսակ արգելքները, քաղաքից գիւղից կամ այլ տեղից չհետանալու հրամանը, ոստիկանութեան հակողութեան՝ յանձնելը, կշտամբանքը, նկատողութիւնը կամ նախազգուշացումը—այս բոլորը բատ էութեան լինելով պատիժներ, քրէական իրաւունքի հիմունքներից բացի ինչ հիմունքներ էլ է գնելու լինեն՝ կարող են որոշուել միայն և միայն դատաստանով, և ոչ ոքից, եթէ ոչ միայն դատաստանից»։

Ադմինիստրատիւ իշխանութեան պէտք է արուի բաւականաչափ աղատութիւն հասարակական կարգը պահպանելու և այն միջոցները գործադրելու համար, որոնք պահանջւում են ոկտութեան և հասարակութեան միահամուս շահերով, ոսկայն երբ ադմինիստրատիւ իշխանութիւնը ընդհարւում է քաղաքացիների իրաւունքների հետ, նա պէտք է գիմէ գատաստանի օգնութեան եւ իրանց կողմից էլ քաղաքացիները պէտք է իրաւունք ունենան գիմելու գատաստանի պաշտպանութեան ձնչումների գէպքում. այլապէս նրանք զոհւում են ադմինիստրատիւ կամայականութեան։

Ադմինիստրատիւ պատիժների սիստեմը կարող է գոյութիւն ունենալ պիտական կեանքի զարգացման միայն ոտորագոյն աստիճանների վրայ, երբ անձնաւորութիւնը գետ շատ ցած է գնահատուում, երբ ամեն ինչ զոհւում է իշխանութիւնը ուժեղացնելու սխալ հասկացած սկզբունքին։ Ադմինիստրացիային տալ իրաւունք պատժելու քաղաքացիներին, այսինքն տալ նրան դատաստանական կարևոր ֆունկցիաներ՝ համահաւասար է գատաստանի աւելորդութիւնը խոստովանելուն։ Իսկ այդպիսի խոստովանութիւն ստեղծում է իշխանութեան անսահման կամայականութիւն իր բոլոր ցաւալի երեսյթներով. բոլոր հասարակական յարաբերութիւնները դառնում են երերուն, անորոշ, ոչ որ չի կարող վստահ լինել վաղուայ մասին, կորցնուում է օրինակութեան զգացմունքը, զարգանում են ստորացում՝ և ստրկական բնազներ, բարքերը վայրանանում են, բոլորը սովորում են ապրել միայն ներկայով, չգարշելով ոչ մի միջոց՝ ուժեղների բարեացակամութիւնը գրաւելու համար, իդէա-

լական շահերը, մարդկային արժանապատռութիւնը գառնում  
են գատարկ հնչիւններ, իսկ պետութիւնը գառնում է մի չարիք:  
«Դատաստանը ասում, է ինքինզ, սկզբունքով պետական իշ-  
խանութեան ինքնասահմանափակում է, որ ծառայում է միայն  
այդ նոյն իշխանութեան ամրանալուն և նրա բարոյական ար-  
ժանաւորութեան բարձրանալուն»:

Միայն գատաստանի գոյութեամբ կարող են լիակատար  
վատահութեամբ և յարգանքով վիրաբերուել գէպի կատավարու-  
թիւնը, միայն դատաստանի գոյութեամբ այնպիսի ահոելի  
զէնը՝ ինչպիսին ալատիմն է, անվտանգ կը լինի անձի ազա-  
տութեան համար: Թաղաքայիները պէտք է վատան լինեն որ  
եթէ գործը գատաստան ընկաւ ոչ մի ազգեցութիւն ոչ վիրեկից,  
ոչ ներքեկից, հասարակական կամ պետական օգտին ոչ մի պատ-  
ճառաբանութիւն ոչ մի նշանակութիւն չեն կարող ունենալ  
գործը այս կամ այն կողմ վճռելու համար: Նա պէտք է հաւա-  
տացած լինի որ գատաւորների համար միակ և բացառիկ ֆակ-  
տորները կարող են լինել «օրէնքը, խիզճը և փաստերը». Նա  
պէտք է համոզուած լինի որ ի նկատի առնուած կը լինեն բո-  
լոր երաշխիքները, որոնք ապահովուած են ճշմարտութիւնը ե-  
րեան հանելու: Իսկ այդ բոլոր ապահովել գատաւորների իրականացման  
համար անհրաժեշտ է ապահովել գատաւորների անկախութիւն  
որևէ ազգեցութիւնից վերեկից թէ ներքեկից եկած: Դատա-  
ւորների առաջին և անհրաժեշտ յատկութիւնն է անաշառու-  
թիւնը, իսկ այդ հասրաւոր է միայն այն ժամանակ երբ նա  
լիակատար կերպով անկախ է ինչպէս վիճող կողմերից, այն-  
պէս և իշխանութիւնից, որ պահպանուած է հասարակական  
կարգը և հալածում նրա խանգարողներին:

Դատաւորը ենթառկում է միայն անհանգույրի օրէնքին  
և ինքը հանդիսանում է նրա առաջին պաշտպանը, առկայն ո-  
րովհետև օրէնքի կիրառութիւնը տրուած գէպի նկատմամբ  
միշտ անհատական բնոյթ ունի, ուստի գատավճիռը պէտք է  
լինի անօնական ներքին համոզմունքի արդիւնք: Ոչ մի իշ-  
խանութիւն իրաւունք չունի հրամանազքելու դատավճիռ, նը-  
ման այն բանի, ինչպէս հրամանագրուում է ստորին ազմինիս-  
տրատիւ օրգաններին այս կամ այն կերպ գործելու մալին:

Այստեղից հասկանալի է թէ որ աստիճան կարևոր է գա-  
տաստանի կազմակերպութեան հարցը, Միայն այդ կազմա-  
կերպութիւնը կարող է տալ գատաստան, որ բարձր կը լինի  
կանգնած բոլոր կուսակցութիւններից, բոլոր կըքերից թէ կա-  
ռավարողների և թէ կառավարուողների: Դատաստանը, ինչ-  
պէս Զիշերին է ասում, պէտք է լինի արդարադատութեան

բարձրագոյն օրգանը: Միայն դատաստանի կազմակերպութիւնը կարող է յատկացնել նրան բոլոր միջոցները նրա բարգ դժուար ու պատասխանատու նպատակին աջողութեամբ հասնելու համար:

Սակայն ո՞վէսպի այդպիսի դատաստանական իշխանութիւն կանգնած լինի իր բարձրութեան վրայ անհրաժեշտ են նաև շատ պայմաններ, որոնք վերաբերում են դատաւորի իրա անձնաւորութեան, որովհետեւ իրենքի խորիմաստ նկատողութեան համաձայն արդարագութիւն աջողութիւնը վերջ ի վերջոյ կախուած է միանգամայն դատաւորի անձնաւորութիւնից: Դատաւորը պէտք է ունենայ կատարեալ գիտական հըմառութիւն, փորձ և բարոյական յատկութիւններ, պէտք է գիտակցի որ արդարագութիւն զործադրութիւնը իր տեսակի մէջ մի սրբազն արարողութիւն է, որին անկարելի է մօտենալ չլուացուած ձեռներով: Միայն այն ժամանակ դատաստանը ի չար չի գործ դոիլ իր ահապին իշխանութիւնը, միայն այն ժամանակ նա կը լինի բոլոր ժողովրդի աշքում արդարագութեան բարձրագոյն օրգանը:

## II

Սակայն գեու բաւական չէ ստեղծել անկախ, գիտութեամբ, փորձով և բարոյական յատկութիւններով զինուած գործելու ամենայարմար պայմաններում զրուած դատաստան: Եթէ միայն բաւականայինք նրանով ինչ որ կարող է տալ միայն դատաստանի կազմութիւնը՝ միայն զործի կէսը արուած կը լինէր: Որքան և կարեոր է կազմակերպումը, սական մենակ նա բաւական չէ որ դատաստանը կանգնած լինի իր այզքան պատասխանատու նպատակի բարձրութեան վրայ:

Անհրաժեշտ է հանդիսանում դատաստանական գործունէութիւնը եսթարկել որոշ կանոնների և որոշ երաշխիքներով պայմանաւորել: Հէնց այդպիսի երաշխիքներ են դատավարութեան արարողութիւններն ու ձեռքը, որոնք դատաստանական գործողութիւններին տալիս են որոշ ծանրակշռութիւն, նոյնիսկ դանդաղաշարժութիւն, սակայն միաժամանակ միայն դրանց շնորհիւ դատաստանը կարող է ազատ լինել որեէ կառկածից: Եթէ դատաստանական գործունէութիւնը զրկել ձեռքից և արարողութիւններից (Փօրմ և օբրյօն), այդ գործունէութիւնը ոչընչով չի տարբերուի վարչական մարմինների գործունէութիւնից: և շուտով կը տոգորուի նպատակայարմարութեան այն ըսկըզրունքով, որ այնքան կարեոր է աղմինիստրացիայի կամ վարչու-

թեան մէջ և այն աստիճան հակասում է արդարագատութեան դորժադրութեան:

Դատաստանական դորժադրութեան ձեերն ու արարողութիւնները սուեղծում և մշակում են կուլտուրայի զարգացման հետ զուղընթացարք: Կուլտուրայի առաջնազաց ընթացքի հետ միասին մշակում են աւելի և աւելի կատարեալ, արդար և նպատակայարմար գատավարութեան ձեեր և արարողութիւններ: Զի կարելի ցոյց տալ սահման այդ շարժման: Գիտութիւնը դանդաղ, սակայն անշեղ առաջ է գնում և պէտք է գտնի աւելի և աւելի արդար և կատարեալ, անձնական ազգեցութիւններից աւելի ազատ միջոցներ՝ քրէական պրոցեսսի վերջնական նպատակին հասնելու համար: Քրէական պրոցեսսի գիտութիւնը իր երկու բաժիններում—գատավագմութեան և գատավարութեան—ձգտում է սուեղծել երաշխիքների ամենազլիսաւորը՝ որ ապահովում է ոյժի կերպարանափոխութիւնը իրաւունքի:

Պէտք է չմուանալ որ իրաւուրանական գիտութիւնը, ինչպէս և ամեն մի գիտութիւն, միայն այս ժամանակ կարող է կանգնած լինել իր նպատակների բարձրութեան վրայ, երբ նաև չի կորցնում կապը գիլիսոփայութեան հետ, առանց որի անկարելի է մշակել ամբողջացրած և ուղիղ աշխարհայիացք: Ճիշտ է ասում Զիշերինը, «Որքան էլ մենք ուսումնասիրենք ժողովրդական տնտեսութիւնը, իրաւունքը և պետութիւնը իրանց արտայայտութիւնների մէջ, մենք գրանից զեռ չենք հասկանալ՝ արդեօք համապատասխանում են այդ արտայայտութիւնները արդարութեան և բարեիքի այն ամենաբարձր սկզբունքներին, որոնք ընկած են մարդու հոգու մէջ, որոնք նաև ձգտում է իրագործել իր կեանքում: Այդ սկզբունքները կարող են պարզուել միայն գիլիսոփայութեան շնորհիւ, որ այդ պատճառով գալնում է բոլոր համարակական յարաբերութիւնների վեհագոյն չափը»: — Անձի բացարձակ արժէքը և նրա ազատութիւնը—ահա իրաւունքի հիմնական իդէալական սկզբունքը, որ բղխում է կանոնի գիլիսոփայութիւնից: <sup>1)</sup>

S.

<sup>1)</sup> Համեմատիք այս համարի «Պարբեր» հր.՝ բաժանմունքում սոցիալիզմի մասին գրուածքը: Հարկ ենք համարում ասել մեր ընթերցողներին որ այս ամբողջ յօդուածը առաջ բերելու շարժառիթը այն էր որ թիւրք-հայկական համագումարում աղմինիստրացիայի և գատաստանի մասին եղած վիճարանութեան ժամանակ և ոչ մի կողմի հետ համակարծիք չլինելով

## ՆՈՐ ԱՏԱՅԱԾ ԳՐՔԵՐ

- 1) ? «Ճապոնական Բուհո և Զուլիետտա, թարգմ. Վ. Փամբուխչեան, Թիֆլ., 1906 դ., 7 կ.
- 2) «Գիւլիստանցի, մկա վախ չունիմ», Թիֆլ., 1905, գ. 12 կ.
- 3) The Relations of the Armenians and the Franks During the Reign of Leon II, 1181—1219..., by Hovnan Hagopian, 1905.
- 4) Գ. Ղարաջեան, «Փունչ Զաւեկ», գրամտ 5 զործող, Թիֆլ., 1906, գ. 50 կ.
- 5) И. Алибековъ. Елисоветпольские кръззыые дни предъ судомъ общества; Зavravshijся «Публицистъ» и его об-щесвенные сподвижники, Тифлісъ, 1906, ц. 30 к.
- 6) А. Агаранянъ, Рожкодій: Кусочекъ хлѣба! Иѣтухд, перев. Бабіянца, Евпаторія, 1906, ц. к.
- 7) Ա. Քոմալեանց, «Ասունցի Յովնան», պատմական վէպ, Թիֆլիս, 1906, գ. 30 կ.:

---

մենք մեր կարծիքը չեինք արծարծել, որովհետեւ ոչ մեր աղմբնիստրացիան  
ոչ էլ դատաստանն է կանգնած պահանջած բարձրութեան վրայ: Հասարա-  
կական ներկայացուցչութիւնը վասներ որոշելու դէպում աղմբնիստրա-  
ցիան կը գարձնի Փիլցիա...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԺՑԵՎՈՐԾՈՒԹՅԱՆ

Տեղ. Ա. Զաքորյան, բանվառական հայց, թարգմ. Ս. Աբեղանիկ, Թիֆլիս, 1906, գ. 40 կ.

Վերջին ժամանակներս նկատելի կերպով աճել է մեզանուու տնտեսական-սոցիալական հարցերին նույիրած գրքոյկների հրատարակութիւնը: «Բանուորական հարցը» նոյն թարգմանչի երկրորդ գործն է, առաջնի մասին (Զօմբր. տնտեսական և սոց.-քաղ. հարցեր) տեղեկութիւն տուել էինք մեր ընթերցողներին անցեալ տարի: Նկատողութեանս վերնազրուատուած բերած գրքի թարգմանութիւնը աւելի ընդգրածակ աշխատութիւն է (մօտ 150 երես) և կարող է համարուել շօշափած հարցի մասին հեղինակաւոր գիտնականի խտացած ամփափում, որ օգտակար կը լինի փոքր և շատ է զարդարած հայ ընթերցողների համար, որոնց թիւը, գժրախտաբար մեզանուու շատ չէ... Յամենայն զէպս մեր աղքատիկ տնտեսական-սոցիալական գրականութեան մէջ դա ցանկալի մուտք է: Գրքին կցած է «Օտարազգի բառերի բացարութիւն»: Որպէս զի ընթերցողը գաղափար կաղմի գրքի բովանդակութեան մասին առաջ բերենք նրա բովանդակութեան հիմնական հարցերը. բանուորական հարցի ծագումը և նրա լուծելու փորձերը. պրոֆեսուորիօնալ-բանուորական մրցութիւններ, սպառողական կազմակերպութիւններ, աշխատանքի պաշտպանութիւնը ու բէնքով. բանուորական ապահովագրութիւն, բնակարանային սեփական:

И. Алибеговъ. Елизоветпольскіе кровавые дни предъ судомъ общества: Заврвашійъ „Нубианістъ“ и его общественные сподвижники, Тифлесъ, 1906, и. 30 к.

Տեղական իշխանութեան և թուրք «ինտելիգենցիայի» և բէկութեան յանցաւոր գերը թուրք-հայկական կոտորածների գործուժ գտել են փաստական ուժիդ գնահատում ա. Ալիբեկով

վի ոյդ գրուածքում. «թերահաւատաները» կարող են բուժում ստառապահն իրանց տատանումներից: Հետաքրքրական են մանաւանդ կառավարութիւնից հովանաւորուած զանազան Զափար բէկ Վեզիրովների, Ազիգեզալ բէկ Ազիգեօզալովների, Հուսէյն աղա Զէվանշիրների, Իրահիմ բէկ Հուսէյնրէկովների, Հասան: ալի բէկ Ասկերխանովների, Սաւըլի բէկ Մելիք-Ասլանովների, Թեսմիր բէկ Հուսէյն բէկովների, Խաս-Մամեդովների կենսագրական ուրուագծերը: Բանից գուրս է գալիս որ նախկին նահանգապիտ կուտցառն իր նահանգում գաւառապիտների պաշտօններ առաջիս էր հէնց այն թուրք բէկերին, որոնք դատուել և պատժուել են իրքն չարագործներ... Գանձակի կոտորածից յետոյ էլ Թեմիր բէկ Հուսէյնրէկով, Միքայիլ բէկ Խորաֆիլրէկով, Ալի Եարբէկով և այլն պատժուելու խոխարէն աւելի բարձր պաշտօններ են ստացել, իսկ հայ ծառայողներից մի քանիսը կամ արձակուել են պաշտօններից կամ նշանակուել այնպիսի զուտ թուրքաբնակ զաւառներում որ ստիպուած պէտք է հրաժարուելին...

Տակաշվիլու, Աւալեանիի Փիզիօնոմիաներն էլ բաւական պարզուում են այդ գրքում բերուած մի քանի պաշտօնական վեկուցումներից...

Տաւալին այն է որ կարուկ հրաժարում հին քաղաքականութիւնից չի ցոյց տալիս Կովկասիան բիւրօկրատիան, և զանազան Հուսէյնրէկովներին ձեռնոտու պաշտօններով գեռ խրախուսում է, դատաստանի ենթարկելու փոխարէն...

\*

ԴԵՌԱՀԱՍՆԵՐՆ ԻՆՉ ԿԱՐԴԱՆ \*

(Յ. Տէլ-Միրաբեանի)

138. Դէորգ Կրաքը: Օստրօգօրսկու ժողովածուից, թարգմ.  
Տ. Կոստանեանցի, Թֆլս, 1894. գինը 5 կոպ.

Ազօտ գոյներով թսուցիկ կենսագրութիւն է, որ և է մաս-  
յուն ապաւորութիւն դժուար է սպասել: Զգիտես էլ թէ խակա-  
պէս որ հասակի մանկոն սրաի հետ կարող էր այս գիրը խօ-  
սել:

139. Գէորգ Ոտլէստոն, հեղ (?). թարգմ. Աղանեանցի,  
(սպասուած):

Ամեն մի քայլափոխում պատահող արկածների ժողովա-  
ծու է, գեղարուեստական քիչ արժէք ունի:

140. Գթութիւն Ժիվ Լըմետրի, թարգմ. օր. Ն. Աղանեա-  
նցի: Հրատ. «Լումայի» խմբագր., Թֆլիս, 1904. 17 փոքրգ. եր.  
գինը 5 կոպ.

Մի պարոկական իշխան ողորմութիւն էր տալիս աղքատ-  
ներին և նրանց օգնում ահաճութեամբ ու զղանքով: Որմիզզը  
նրան երկրորդ անդամ կեանք է պարզեռմ աղքատի վիճակում:  
Երբ որ մի բարի աղջիկ նրան տանում սիրով խնամում է, այն  
ժամանակ նախկին իշխանը զգում է Որմիզզի առածը, որ բա-  
ւական չէ ողորմութիւն տալ, երբ սիրով չես կատարում  
այդ: Տպաւորութեան գործում է:

141. Դաւիթ Կոպսլէրֆիլոդ Զ. Դիկէնսի: Թ. Հ. Հ. Բ.  
թարգմ. Պ. Պ. 1897. գինը 1 ռ.

Թէև առաջնակարգ գրուածքի համառօտ փոխագրութիւն-  
ներից մէկն է, այնուամենայնիւ գեղեցիկ տպաւորութիւն է զոր-  
ծում: Այնքան հարուստ է բնագիրը, որ իր համառօտութիւնիցն  
էլ առատ բաժին հանել կարող է:

142. Երեւելի մանկութիւնը. մատենագարան դպրոցական և  
ընտանեան: Պոլիս, 1887. պատկերազարդ, 192 եր. գին.

\*.) Տես «Մուլճ» № 2.

Նշանաւոր 11 մարդկանց մանկական հասակի թռուցիկ կենսագրութիւններ են: Նրանց կեանքի հասուն լըջանը միքանի խօսքով յիշտակւում է ամեն մէկի կենսագրութեան վերքը: Գրուածքի տոնն էլ ընդունելի չէ. շատ աւելորդ գատողութիւններով խճողուած է: Այս զրբից շատ բան չի մնայ ընթերցապների յիշողութեան մէջ:

143. Զոհասի Բյուրասպի Աժդահակ: Ամրող վէպ Շահնամէից, Ֆրգուակ: Թարգմ Սամուէլ Գիւլզադեանցի, Շուշի, 1894. մեծադ. 70 եր. գին?

Աժգահակը կործանում է Զէշիդի թագաւորութիւնը, նրան հաշմանգամ շինելով, հալածում կորուստի է մասնում: Ապա կոռու մէջ բռնուում է Ֆրիգունից, կապւում ու բանտարկւում է Դիմաւէնտի կիրճում:

Դեի (օձ) կամ խաւարի անվերջ կոռու նկարագրութիւններից մէկն է: Ծանր լեզուով թարգմանուած, շատ տեղեր մնացել են մութը, առանց բացատրութեանց:

144. Իշմիածին: Արտատպ. «Դպրոցից»: Ժողովրդական գրակարան: 1886. 22 միջակ եր., գինը 5 կ.

Չոր ու ցամաք պատմական տեղեկութիւններ են. ոիբո չեն տաքացնիլ:

145. Թողուկ Ա. Դոգէի: Թարգմ. Հ. Տէր Միքայէլեանցի. 1881. Թփլւա.

Թղուկը մի անբազգ ու անանկ ընտանիքի պաւակ է, որ հմայիչ կերպով նկարագրում է իրանց թշուառ կեանքը:

146. Թողուկ Բոցարիս. ճշգրիտ անցք. թարգմ. (?) Մոսկուա. 1891. 31 փետր. եր. գին.

500 տարի առաջ Թ. Բացորիսը բորբոքուած իր և ուրիշների կրած սարսափելի գտղանութիւններից տաճիկների կողմէից՝ ժողովուրդը սաքի է հանում, ազատում է հայրենի կղզին: Յետոյ մի բանի վատ մրցակիցներ երեան են զալիս, չար նաև խամունք գրգուած՝ թովմասին ըրոջ հետ թունաւորում են և կղզին դարձեալ ընկնում է տաճիկների ձեռքը: Տպաւորիչ է:

147. Իշխաններ աղքատու, պատմ. վէպ Մ. Տուէնի: Թարգմ. Գ. Շահբուլգարեանի. 1893. 300 եր. գինը 1 ռ.

Մի հումարիստական գրուածք է, որ վեր է հանում անգլիական կեանքի ու կառավարութեան սոսկալի ու ծաղրալի կողմէրը: Այս ինչ որ նրանց համար հին բան է, տարալագդարը մեր կեանքում գետ ոյութիւն ունի, մեր իրականութիւնը կարծիք առաջ կենդանի պատկերներ են:

Արժէ կարդալ:

148. Խիղճը կորաւ Շչէզրինի: Թարգմ. Մ. Դաղարեանցի:

Թ. Հ. Հ. Բ. 1892. Այլ 2 վէպիկների («իդէալիստ ծածան» և «իմաստուն ծանծաղուկը») հետ 62 եր. գին. 15 կոպ.

Թղթի վրայ գրուած խիզճը ընկնում է զանազան տիտակով վարակուած սրտի տէր մարդկանց ձեռքը և նրանց վրայ տեսակ տեսակ աղղիցութիւն է գործում: Վերջը այդ խիզճը մի անմեղ սրտի մէջ է ընկնում, որտեղից ապագայի համար մեծ յոյս է տալիս:

Արժէ կարտաւ, շատ արժէ:

149. Կովկասի գերին Լ. Տոլստոյի: Թարգմ. Պ. Պ. Թ. Հ. Է. 1894 66 միջ. եր. գինը 20 կոպ.

Երկու ոռւս սպայ լեռնցի թուրքերի ձեռքը գերի են ընկնում, որոնք նրանց ոտքերը ցերեկը կոճդ են դնում, գիշերները հանում: Նրանցից մէկը խաղալիքներ շինելով գրաւում է թուրքի մատաղանաս աղջկանը: Մի անգամ պատը ծակում տղաւում են, բայց դարձեալ բանում: Վերջը մէկը փախչում է թուրքի աղջկայ օգնութեամբ, իսկ միւսը փրկանքով է աղաւում:

Տպաւորիչ է:

150. Հայ լիւցազնուուի մը: Հրատ. Մ. Փորթուգալեացի. 1885. 30 փքրդ. եր.

Մի անգիւացի ճամբորդ շոգենաւի մէջ մի հայ ուսեալ երիտասարդի հետ վիճաբանութեան բանուելով՝ իբրև ապացոյց հայութեան ապագայ յուսալի կեանքի պատմում է մի հայ գեղղջկունու իսանին կնութեան չգնալու անյողութե որոշումը: Այս աղջիկը ամեն տանջանք յանձն է առնում ու վերջը բանտի բարձր պատուհանից վայր ընկնելով կիսամեռ է լինում:

Թէհ գեղարուեստական գրուածք չէ, բայց իբրև հայկական կեանքից վեր առած իրողութիւն՝ արժէ կարդալ:

151. Հայոց մնձ վարլապն սուրբ Մեսրոպը. Կազմեց Մելեան: Պատկերավ: Թֆլս. 1883. գինը 25 կոպ.

Կարելի է յանձնաբարել, միայն թէ ի նկատի սլէտք է ունենալ, որ գրաբար աղբեւրներից քաղուած շատ բաներն ու գարձուածքները ծանրացնում են ընթերցումը:

152. Հայրենազուրկ Ի. Սպիրիֆ: Թարգմ. Դերմ. Ի. Յառութիւնեանցի. Թֆլս. 1896. 196 փքրդ. եր. գինը 50 կոպ.

Ռիկոն Իտալիայում զրկում է մօրից, Շուիցերիայում հօրից: Ապա դաժան ապականուհու ձևոքից փախչելով հայրենիք, այնանդ ջութակ ածելով իր զլուխը պահում է: Ապա իրան սիրելի Մանիկ աղջկանն էլ բերում տեղաւորում է մի հարուստ ընտանիքի մէջ իբրև հիւանդաղաւահ: Սիլվին երեխային: Երեքն էլ ջերմ սիրով կաղւում են: Վերջապէս տանտիկինը

իժանալով Բիկօյի ով լինելը յայտնում է, որ ու լ կալուածքի կէսը նրան է պատկանում: Մանիկն ու Բիկօն էլ իրար հետ ամուսնանում են:

Տպաւորութիւնը գեղեցիկ է:

153. Հայրենասէր տիկին, տիկ. և. Դանիէրի. Թփլս. 1897.

24 փռքրդ. եր. գին...

Ալզասի մի պատուական ընտանիքի պատմութիւն է: Ֆըրանսա-պրուսական պատերազմին զոհում է այրի կնոջ երկու սպայ որդիները, երրորդին էլ զոհում է կամաւոր գնալով մօր ցանկութեամբ: Նրանց ըոյըն էլ հարկադրուած է լինում մօր ցանկութեամբ մերժել զերանացի նշանածի ձեռքը, ապա մեռնում է: Մայրը երթեմն շէն դաստակերտը աւերակ թողած գաղթում է ֆրանսիա պրուսահպատակ չը լինելու համար:

Տպաւորիիչ է:

154. Հարսնացու(սերբիական կեանքից), թարգմ. Յովհ. Արաբաշիանցի, Ալքսանդրալ, 1893, № 1, հրատ. «Այգ»-ի: 83 միջակ եր. գինը 15 կոպ.

Նկարագրում է Սերբիայի ծանր լուծը, տանջանքները և ազատագրական ձգութիւնները: Իւո «հարամբաշին», անձնուելով կիպայի քաջ նշանածը, իր սէրը զոհում է թշուառ հայրենիքի ազատութեանը: Թէև հայրենիքը վերջն ազատում է, սակայն ինքն էլ զոհ է զնում և չի կարողանում միանալ կիպայի հետ, որ իրան մեծ վտանգի ենթարկելով նշանածին մի անգամ ազատած էր եղել:

Արժէ կարգաւ:

155. Հաւատարմութիւնը ասեն բանի յաղթում՝ ֆր. Գոֆմանի. թարգմ. Յարութիւն Առաքելեանի. Թփլս. 1877. 141 միջակ եր. գինը.

Հուգենօսների ժամանակից մի էպիզոդ է: Բողոքական Մոնֆէր գուքսին և սրա որդուն մեծ անձնուիրութեամբ ազատում է կորուստից նրանց ծերունի, հաւատարիմ ծառայ Բրեքետը:

Շատ շինծու բան է:

156. Մոլլա-Նասր-էդլին: Ժողովրդական առակներ: Հաւաք. ե. Լալայեանց: Թփլս. 1903. 246 միջ. եր.

Ըստրովի հաւաքածու է, որի միայն կէսը, պ. և. վերագրում է Մոլլային, իսկ մնացածը հայկական առակներ է համարում:

Զուարճալի հնա իբրև ժամանց:

157. Յովհաննա տ' Արգ կամ Օրլէանի օրիորդի պատ-

ԺԱՂՑԺԻՆԸ: Հ. Զկ. Վ. Տէրտերհանցի. Բ. ապ. Վիեննա 1893.  
97 միջ. եր. գինը 50 կոպ.

Այս լիւցազնուռն անձնաւորութեան ու տանջանքների  
պատմութիւնը հետաքրքրութեամբ կը կարդացուի: Տես ներ-  
քել «Օրէշանի կոյսը»:

158. Յովեաստանի ոստոցի Սովորատէսը, հեղ (?), թար-  
դմ. Տ. Կոստանեանցի. Թֆլս. 1898. 80 միջ. եր. գինը 20  
կոպէկ.

Այս իմաստունի բարոյական-կենսական սկզբունքները  
պարզ կերպով բացատրուած են:

Արժէ կարդալ:

159. Նելլոն ու Պատրաշը Ռէփախ, թարգմ. ոռւս. Թֆլս.  
1897. փոքրդ. 64 եր. գինը 10 կոպ.

Մի կաթնավաճառ (նաև նկարիչ) մանկան ու նրա շան  
սրտառուչ պատմութիւնն է: Խեղճ ու հալածուած Նելլոն միայն  
այն ժամանակի է գնահատուում, իբրև ազնիւ պատանի ու տա-  
ղանդաւոր նկարիչ, երբ որ իր շան հետ Ռուբէնսի պատկերի  
առջև եկեղեցում ձմրանը անշնչացած է լինում:

Շատ սրտառուչ է:

160. Ներսէս Մ'եծ: Ժողովրդական գրադարան: Թֆլս.  
1885. 13 միջ. եր. գին. 5 կոպ.

Այս կենսագրութիւնը քաղուած է գլխաւորապէս Հ. Դ.  
Յովհաննիսեանի «Մեծն Ներսէս» աշխատութիւնից:

Գէշ չէ:

161. Ոսկի բզէզ, եղգար Պօ'ի: Ժողովրդական վէպ. թա-  
րգմ. Գր. Շահբուրգաղիանց. Թֆլս. 1887. 57 միջ. եր. գինը 20  
կոպ.

Գրաւիչ կերպով պատմուում է, թէ ինչպէս լը Գրանը սրա-  
մը տութեամբ գտելէ աւազակների թագցրած գանձերը մի ծառի  
տակ:

Մեծ արժէք չունի:

162. Որը Աննան Կլ. Լուկաշեկչիչ: Թարգմ. ոռւս. Թֆլս.  
1904. փքրդ. 56 եր. գին 12 կոպ.

Գիւղից բաղաք հկած 16 տարեկան որբ աղջկայ կեան-  
քից է:

Սկզբները անխիղճ տանտիկիններից տանջւում, հիւան-  
դանում է, անտէր մնում: Ապա մի բարի տանտիկնոջ ձեռք է  
ընկնում, նրանից ու նրա երկու թոռնիկներից սիրւում:

Դժուար թէ շատ հետաքրքրութիւն շարժէ դեռահասնե-  
րի մէջ:

163. Որբերի արտասուբը: Հեղ (?), թարգմ. Յովհ. Ար-  
տբաջեանցի: Ալքոնդրալ. 1892. 16 փքրդ. եր. գին 2 կոպ.

Անխիղճ «մուժիկ» Դէնիսը հրդեհում է զրացու խրձիթը:  
Տէլն ու խրձիթը այլրում են, կնոջն ու որբուկներին անտուն  
անտէր թողնելով: Դ. տիրանում է այդ գետնին, զեղեցիկ խր-  
ձիթ շինում, բայց շուտով ինքն էլ իրար ետեից զրկուելով իր  
սիրելիներից՝ անբաղդանում է, զղջում է, մեղքը զիւղացիներին  
խոստովանում ու աքսոր է գնում՝ նախապէս իր բոլոր ունե-  
ցածները այն անտէր որբերին թողնելով:

Արժէ կարգալ:

164. Չալարիներ և. Մանուէլեանցի. պատկերներ վերջին  
ոռւշ-թրբական պատերազմի ժամանակից:

Գիւղական կեանքից վեր առած այս պատկերները հիմա  
տւելի ժամանակակից են: Այն ժամանակուայ թիւրիմացու-  
թեամբ առաջացած սարսափելի իրարանցումը այսօր իրօք տե-  
սանք:

165. Պայլայ մանուկը կամ՝ կապկացած երեխայ Ս.  
Վ. Նազարեանցի: Թֆլո. 1896. 32 միջ. եր գին 15 կոպ.

Հինգ տարեկան մանուկը ընկնելով կապիկների մէջ՝ վայ-  
րեսանում է, կապկանման դասնում անձանաչելի լինելու չափ:  
Վերջը երր բոնում է ու քաղաք տարւում խաղնելու հա-  
մար, մի թագուհի գնելով նրան պալատում պահում է: Այս-  
անու մարդկային ընկերութեան մէջ հետզհետէ մարդկային յա-  
տկութիւնները նրանում զարգանալով վերջապէս նա ճանաչելի  
վայէ դասնում վերջը իր արժանաւորութիւնների շնորհիւ: Պայ-  
կան արժանանում է մինչև անդամ թագուհու աղջկայ ձեռքին  
ու դահին:

Շատ կը հետաքրքրէ մանուկներին:

166. Պատմութինն Ռուպինոնի Քոլիզօէ: Հայր Մ. Վ.  
Բժիշկեանի, Վատկ. 1876. 5 տպը. 360 փքրդ. եր. գին. 1 ս.

Պատկերազրդ չէ, և թէկ օ տալազրտթինն է տեսել,  
ընտիր Խորիզնադ լինելոց շատ հետու է: Փոխանակ Ռոբինզոն-  
նի կուլտուրական ճիգերը, հսարագիտութեանց ձանապարհները  
հարանգիչ կերպով նկարագրելու, համորեա գրի առեն մի է-  
ջում նորից ու նորից վերագանում է կրօնական զեղուն զգա-  
ցմունքների արտայայման, որ հակառակ հետեանքի կարող է  
հասցնել: Քարոզում է այն միտքը, որ փորձանքները գալիս են  
մեր գլխին մեր մեղքերի համար և այն տատուածային դիտա-  
ւորութեամբ, որ հետեանքը որ և է բարիր լինի:

167. Ռոբինզօն Կրուզօի ճանապարհորդութիւնը և զա-  
նազան արկածները: Դանիէլ Դէֆօէի, թարգմ. Ս. Թառար-

հանցի: Պատկերազարդ, Թփլս. 1904, մեծողը. 286 էր, գինը 1 ռ. 25 կոպ.

Մի այսպիսի ընդարձակ և պատկերազարդ մորթնպոնի չափազանց ուժ պահանջ կար մեր մանկական զբականութեան մէջ: Այս պահանջը զգալի չափով լցուցանում է այս զիրքը: Այս փոխազրութեան մէջ էլ Ռ-ի ձեռքը շատ դործիքներ և այլ կենսական պիտոյքները են ընկնում ընկզմուած նաւից: Յանկաւլի էր որ այդ միջոցները մինիմումի հասցրած լինէին: Յանկաւլի է, որովհետև աւելի հետաքրքրական է այն մորթնպոնը, որ աւելի քիչ կուլտուրական պաշար է րերած լինում հետեւ: Այսպիսի վիճակի մէջ զբուած Ռ-ի ինքնազաշտոպանութեան ճիգերը աւելի շահեկան կը լինէին, աւելի հարցասիրութիւն կ'առաջացնէին գեռահաս ընթերցովների մէջ: Այս զբուած անհշան տեղ է տրուած ընկերական նոր կազմակերպող կեանքին անմարդաբնակ կզբու վրայ: Շատ հրահանգիչ էլ լինէր Ռուբաթին ու նրանց յետոյ մորթնպոնի չնորհիւ ապատուած վայրենի ու բազարակիրթ անձերից հետզհետէ կազմակերպուող ընկերական կեանք տեսնել այդ կզբում: Բացի այս՝ չզիտեմ արգէն կան այնպիսի մորթնպոնադներ, որ կինն էլ մասնակցութիւն ունեցած լինէր նորմէկանց կազմակերպուող այս ընկերական կեանքում: Մի այսպիսի թէե մինեսատուր, բայց տիպիկ պատեկերի շնորհիւ միայն մատակահաս ընթերցողին աւելի կը պարզուէր կուլտուրական կեանքի զարգացման վերին աստիճանի հետաքրքրաշարժ շաւիզը:

Յամենայն դէպս՝ պ. Թ. այս թարգմանած, մորթնպոնը արժանի է ամեն մի հայ մանկան՝ ընթերցանութեան սիրելի նիւթ գունալու:

168. Մորթնպոնի պատմութիւնը: Թարգմ. Գ. ք. Աղանեանցի: Թ. Հ. Հ. Ը. 1881, գինը 60 կոպ.

Այս մորթնպոնադում մորթնպոնի ձեռքը սկզբները ոչ մի գործիք չէ տրուում, բայց հետը նա ինարկէ րերած ունէր եւ լուսական կեանքից ու արհեստներից յիշողութիւններ: Յետոյ Ռուբաթն էլ շատ բաներ է սովորեցնում նրան, իսկ վերջը Թ. շատ գործիքներ է գտնում անգլիական նաւում: Նախընթաց մորթնպոնադի առիթով արածու դիտողութիւնն ի նկատի ունենալով՝ այս դասաւորութիւնը աւելի նպատակայարմար կը լինէր:

Արժէ այս փոխազրութիւնն էլ կարգալ տալ:

169. Սիստոշ, ամբողջ վէպ Շահնամէից Ֆրզուսի՛ի: Թարգմ. ընագիր պարս. Սամուէլ Գիւլզադեանցի: Շուշի 1894, 143 մեծդ. եր. գինը...

Շահնամէի հերոսներից Սիաւուշի ճակատագիրը ամենաածանըն է: Իր հօրից, իրանի թագաւորից, անարդարութեամբ նալածած ապաւինում է նա Թուրանի թագաւորին, որ պատուավ ընդունելով իր անհաշտ թշնամու որդուն, իր աղջկանը այս տարագիր թագաժառանգին կնութեան է տալիս, իսկ վերջը չարամիտ մարդկանց անսալով հաւատարիմ և տնձնուեր երիտասարդին յօշոտել է տալիս:

Ափսոս որ ահազին քանակութեամբ արևելեան իմաստալից խօսքեր, դարձուածքներ անհասկանալի կը մնան. Սիաւուշը թէկ Շահնամէի այլ դիւցազներգութեանց հետ այս հատուածի մէջ տուայ, բայց նաև բովանդակութեան տեսակէտով աւելի յանձնարարելի է 16 տարեկաններին ու աւելի հասունացածներին:

170. Վիլհէլմ Տէլլ Շիլլէրի, դրամա 5 արարուածով: Թարգմ. Գ. Բարխուդարեանցի: 1873. Հ05 միջ. եր.

Այս պատմական գրամայից ստացուած ապաւորութիւնները անջինչ կը մնան զեռահաս սերունդի սրտում: Կարդալ տալ 256-257 համարներից յետոյ:

171. Սիրտ է. Դէ. Ամիչիսի: Թարգմ: Փ. Վարդանեանցի: Թֆլս. 1889. գինը 1 ռ.

Շատ հիանալի և ազգեցիկ պատկերներ են աշակերտական կեանքից վեր տոած:

172. Յրինի Օստրօգորուկու: Սրգ. 1888. 61 փքրդ. եր. գինը...

Սուլթան Սուլէյման Բ. գերմանացոց հետ 1555 թւին ունեցած պատերազմի էպիզոդներից մէկն է: Սիզիդի բերդապահ Յրինիի, Նրա կնոջ, զստեր, փեսի և բոլոր քաղաքացիների անձնուեր ու քաջարի կեանքն է նկարագրում: Այս հերոսները մի ամրողջ ամիս զիմազրելով սուլթանի շաղարնոց զօրքին՝ նրան յուսահատեցնում են և ցասոյթից անշնչանում: Գեղեցիկ է նաև Բիլակին սպայի համարձակ պատասխանը սուլթանին:

173. Փաշան հովիւ Լաբուէի: Արևելեան զրոյց: Թարգմ. Դէ. Գրիգորեանցի. Թֆլս. 1896. 40 միջ. եր. գինը 10 կոպ,

Մի փաշա անգլիացիների հետ ընհարում ունենալով հարկադրումէ զրկուել ազգիւնաւոր պաշտօնից և աքսորւում է: Նա իր գեղանի դուստրը առնելով աքսոր է գնում: Այս աքսորուած փաշայի որդին սիրահարում այդ աղջկան, որ արածացնում էր իր հովիւ դարձած հօր ոչխարները: Բայց փաշայի որդուն մերժում է հովիւ փաշան առարկելով որ արհեստ չփիտեցող մարդուն աղջիկ չի տայ: Երիտասարդը այսպիսով արհեստ սովո-

բելուց յիսոյ միայն արժանանում է իր սիրածի ձեռքին։ Հովհանքային սուլթանը ներում է, բայց նա մերժում է նախկին գիրքը բանել, պատասխանելով որ իր կեանքը վտանգի ենթարկել այլ ևս չեր ցանկալ։ Սուլթանը գովելով նրան՝ միջոց է տալիս պարտիզանութեամբ պարապելու։

Կենդանի պատկեր է։

174. Փոքրիկ լրտես Ա. Դուրէի։ Պտր. 1890. գինը 2կ.

Փոքրիկ լրտեսի հայրենասիրական անձնութիռութիւնը շատ սրտառուչ է։ Միւս երկու անձերն էլ ազդու կերպով նկարուած են։

175. Ջինայի զիւտը, զրոյց։ Թարգմ. Օր. Մար. Ակիմեանի։ Մոսկա. 1889. 48 եր. գին...

Ամերիկայում ճնդիկները քինան գաղտնի էին պահում, որպէս զի իրանց խիստ ատելի եապօնացիք չկարողանալով տենդից բժշկուիլ, կոտորուին։ Այս գաղտնիքը բանալը մահուան պատժով արգելուած էր։ Զիւման ճնդիկ սպասուհին ծանր հիւանդ փոխարքառնուն սիրելով նրան գաղտնիքը հաղորդեց մահից ազատելու համար, բայց եապանացիները նրան մահուան դատապարտեցին, կարծելով թէ տուածը թոյն է եղել։ Վերջը ամեն բան պարզւում է։

Մի սրտաշարժ զրոյց է։

176. Օմուլ Կարմէն Միլվայի։ Թարգմ. Գր. Շահրուդաղեանցի։ Թֆլս. 1891. 32 միջ. եր. գինը 8 կոպ.

Թագաւորի որդին անհետանում է և հանդիպում մի ճպնառի, որի խրաները լսելով նրա կեանքը յեղաշրջւում է և շատ բարեգործութիմներ է անում։ Նա մինչև անգամ բժշկում է իր հիւանդ խորթ հղօրը, որ նրա փոխարէն թագաւորական գանը պէտք է գրաւէր։ Շատ տառապելուց վերջը յաջողւում է փախստական թագաժառանգին իր սիրած սրբ աղջկան առնել և գահին արժանանալ։

Տպաւորութիւնները շատ էլ խոր չեն։

177. Օրլէանի Նոյսը, Բատ Շիլէրի Վիկ. Օստրօգորսկու։ Թարգմ. Յ. Խ. Թֆլս. 1898. 98. միջ. եր. գինը...

Այս փոխադրութիւնը № 157 ում նշանակուածից բաւականին տարբերւում է բովանդակութեամբ։ Այնտեղ պատմւում է, որ Ժաննան անգլիացիների ձեռքով խարոյկի վրայ այրւուժ է, իսկ այս գրքում որ նա վիրաւոր ընկնում է պատերազմի դաշտում և մեռնում թագաւորի ձեռքերի վրայ։ Առանձնապէս շեշտուած է Ժ-ի վհատութեան պատճառը՝ թշնամու զօրավար Լիօնէլին սիրահարուիլը և այս պատճառով նրա կեանքին ինայելլը։ Ապա նկարագրւում Ժ-ի լրուած թշուառ գրութիւնը, ան-

տառում տնպաշտպան թափառելիս անգլիացիների ձեռքը գերի ընկնելը, բերդում շղթաները փշրելու և վերջին ճակատամարտին մասնակցելը:

Արժէ կարգաբ:

14—16 տարիկանների նամար:

178. Արարած՝ լինկոլն Մունթի: Թարգմ. Օր. Մաթիլդա Տէր Միքայէլեանցի: Թֆլո. 1885

Բովանդակութիւնը թէկ գէշ չէ, սակայն թարգմանութիւնը մեծ թերութիւններ ունի:

179. Ազատութեան սասին: Զօն Ստիւարդ Միլի: Խում. թարգմ. Ա. Կ. Մ. Ք. Է. 1898. 275 եր. գինը...

Քիչ թէ շատ զարգացածներին մատչելի պարզ աճով գրուածք է մաքի, խոճի, գործունէութեան..., ազատութեան վերաբերեալ:

Արժէ և աւելի լաւ է 16 տարեկան հասակին մօտեցածներին ապա:

180. Աստծո՞ւն թէ: մամնային Լ. Տոլստոյի: Թարգմ. Մամբրէ վարդապետի: Վզգալ. 1913, փբր. 22 եր.

Հանրամատչելի և համոզիչ կերպով խօսում է արբեցողութեան դէմ:

Արժէ կարգալ մանաւանդ այն պատանիներին, որոնք այդ ախտի ժառանգական կամ ստացական միտում ունեն:

181. Անմէդ արքայազն՝ Ալ-Շամշըլ կամ սիրոյ ովստաւը, արևելեան զրոյց: Վաշինգտոն Իրվինզի: Թարգմ. Յակոբ Խօջամիրի: Բագր. 1894. 61 միջ. եր. գինը 20 կուլ.

Արքայազնը (արաբ), արքայագուսարը (քրիստոնեայ)՝ իրկուսն էլ իրանց ծնողների ձեռքով շրջապատող աշխարհից մեկուսացրած են, որպէսզի սիրոյ վտանգին չենթարկուեն: Բայց երբ որ նրանք հասնում են արբունքին, այդ զգացմունքը սկսում են կարդալ ամենուրեք ընութեան մէջ: Խօսուն թոշունները և կախարդութիւնը վերջը միացնում է նրանց հակառակ իրանց ծնողների ձեռք առած բոլոր պահպանողական խիստ միջոցներին:

Զքնաղ կետնիքի նկարագիր է:

182. Աստուած չհանաչող Ս. Քամալեանցի: Թֆլո. 1895. փբր. 32 եր. գինը 10 կուլ.

Մի խասգեղցի (Մուշ նահանգից) արիասիրա հայ գեղջուկի քաջագործութեան պատմութիւնն է բրդերի և թուրքերի գաղանութեանց դէմ մաքառման զեղեցիկ օրինակ:

Արժէ կարգալ:

183. Վրութիւն եւ Մանուէլ, վէպ Դ. Աղաեանցի: Կրկը.

տով. Արացրած: Թփլս 1888. գիւնը 1 ր. 60 և էժանաղին 40 կոպ.

Պատանեկական կեանքից վեր տոտած այս գրաւիչ պատշերները արժե կարգավոր:

184. Աղքատ մարդիկ վեսելիուկայի:

Բազմազաւակ ձկնորսի աղքատ կեանքն է նզարագրում: Այս խեղճը սիրուն զթասրտութեամբ ներս է առնում դրացու երկու որրուկներին, որոնց մայրը մեռել էր միայնութեան մէջ՝ նախապէս իր զաւակներին բուն զնելով:

Տպաւորութիւնը խորն է:

185. Ամենալաւ բանը աշխարհում Դրուժմոնզի: Հայեր. փոխզր. կ. սարկ. Տէր-Մկրաչեանց: Թփլս. 1893. գիւնը 20 կ.

Թարողի ձեռլ բացատրում է, որ սէրն է աշխարհում ամենալաւ բանը:

Ազդու է:

286. Այց Թիւրքեաց Հայաստանին և. Սարգսեանցի: Թփլս 1890., գիւնը 60 կոպ.

Հետաքրքրութեամբ կը կարգացուի այս ճամբորդական նկարագրութիւնը:

187. Աշուկերտի յիշատեսրը և. Յարութիւնեանցի, Թփլս. 1887. 57 միջ. եր., գիւնը 30 կոպ.

Ներսիսիան գոլոցի ճամբորդ աշակերտների խմբից մէկի լիրանով հաղորդում է Սանահնից, Վարդաբուրից, Լոռից, Զալալօղլիցից, Արդուից և Օձունից ստացած տպաւորութիւններ:

188. Խանճ-Միլուն, աւանդական մի պատկեր Թօհմագնահի Վասպուրականի արշաւանքից: Սէյլան, Թփլս. 1892. 84 փքրու. եր. գիւնը 20 կոպ.

16-ր զարի պատմական միջադէպ է Գարեկին անուն թագաւորագունը սիրահարւում է Նազենիկ զեղշկուհուն, որին թուրք իշխանը ուղում է բանի հարէմ տանել: Բայց պարսից արշաւանքն ամեն բան տակն ու վրայ է անում, Նազենիկն էլ յուսահատութիւնից ծովմ է նետուում: Գարեկինը նրա միայն գիւտակն է գտնում: Պարսիկները օգնում են նրան և առաջարկում որ իրանց հաւատն ընդունէ: Սաստիկ վշտացած ու զայրացած երիտասարդը համաձայնում է, Պարսկաստանում մինչև վեղիրութեան աստիճանին է հասնում, վերջը թունաւորում է շատ բարձրաստիճան մարդկանց ու զազանաբարոյ Թահմագիսնին:

Հետաքրքրութիւն կարող է շարժել բայց իբրև գրուածք քիչ արժէք ունի:

189. Բանսատեղծ իղէալիսո Շիլէր, դր. Ա. Թառայեանցի, Սպզ. 1903. պատկերազարդ, մեծդր. 440 եր. փառակազմ 3 ր.

Շատ արժէ կարդալ այս մեծ բանսատեղծի կենսագրութիւնը, որի ազդեցութիւնը գեռահաս սերնդի վրայ զօրաւոր կը լինի:

Պէտք է տալ աւելի զարգացածներին կամ 16 տարեկան հասակին արդէն մօտեցածներին:

190. Բոյսերի մեծարանքը Ալ. Քիշմիշեանցի: Թֆլս. 1891 36միջ. եր. գինը 15 կոպ.

Հետաքրքրական տեղեկութիւներ են հին ու նոր ազգերի կեանքից բոյսերի մեծարանքի, սրանց շատերի անունների խորհրդաւոր ծագման մասին: Ափսոս որ համապատասխան լատիներէն անունները գրուած չեն:

191. Բենիամեն Փրանկլին Ֆէրդին, Շմիդտի: գերմ. թարգմ. Փել. Վարդանեանի: 1885. Թֆլս., երկր. տպ.

Մեծ մարդու այս կենսագրութիւնը շատ խրախուսական բնաւորութիւն ունի:

Բաւականին թեթև լեզուով է թարգմանուած:

192. Բուղզաւ եւ իր վարդապետութիւնը: Կազմեց Սպ. Մալխասեանց: Թ. Հ. Հ. Ը. 1897. գինը 20 կոպ.

Այս վարդապետութեան էական իդէան կայանում է կենդադական զգացողութեան ճնշման մէջ: Բուգդհայի վարդապետութեանը վերացական իդէալական էք՝ հակառակ Կոնֆուցիոսի վարդապետութեան: Տես № 218 համեմատութեան համար:

Զարգացածների համար համեմատութեան ու խորհրդակշութեան գեղեցիկ նիւթեր են: Տես «Կոնֆուցիոս» ներքեւ:

193. Բնաւորութիւն Սմայլսի: Թարգմ. Փ. Վարդանեանի. Թֆլս. 1888. գինը 1 ռ.

Երբ որ պատանին սկսում է զբաղուիլ վերացական գաղափարներով, արժէ տալ նրան Սմայլսի այս և միւս գրուածքները՝ իրեկ մի տեսակ գործնական ներածութիւն փիլիսոփայական գաղափարների:

194. Գիւղական վիաստարան Էլիզա. Օրմէշկօի: Թարգմ. Յովհ. Մեղնիկեանի, 1896. գինը 20 կոպ.

Հարստահարիչի ու հարստահարուածի գիւղական կենդանի պատկերներ են:

195. Գիւղական վաշինգտոն Շմիդի: Թարգմ. Փ. Վարդանեանի, Թֆլս, 1885, գինը 60.

Գեղեցիկ կենսագրութիւն է: Ափսոս որ գրաբար բառերը ծանրացնում են ընթերցումը:

196. Գնանիք նրա հտեսից Հ. Սինկեիչի: Թարգմ. Տ. Վարդանեանցի: Ախալցիս, 1896. 67 միջ. եր. գինը 20 կոպ.

Հիմնալի նկարագրութիւն է Անթէայի ձգտութիւնի նըրան ու Քրիստոսին շրջապատող կեանքի և վերջինիս խաչելութեան:

197. Դուզիվէրի ճանապարհորդութիւնը Սփիվթի: Թարգմ Դ. Աղայեանցի: Թ. Հ. Հ. Բ. 1897. գինը 50 կոպ.

Այս գիրքը հասկացողների համար խակապէս մի պատմական պարսաւագրութիւն (պամֆլէտ) է անգլիական կեանքից, որ շատ աննշան՝ կապ կարող է ունենալ մեր նաև հասակաւոր սովորական բնթերցողի աշխարհայեցողութեան ու կեանքի հետ: Այս գրքի հայերէն թարգմանութիւնը նույտակին քիչ թէ շատ հասցնելու համար անհրաժեշտ էր մի ներածութիւն: Բերլինի յայտնի քննադատ Լէօ Բէրգ տառում է, որ նա և իր մանուկ հասակակիցները «համաշխարհային գրականութեան այս լրատեսագոյն գիրքը իբրև հեքիաթ էին վայելում:»

Մեր գեռանաս ինչպէս նաև հասակաւոր ընթերցողները հէնց այսպէս էլ կը վերաբերուեն այս գրուածքին:

198. Գուասու Վազա, պատմ. վէպ պատանիների համար Ներեցի: Թարգմ. ոռւս. Ա. Վեհապետեանցի: Ալքսանդրպլ. 1887. 97 եր. գինը 30 կոպ.

Այս գրուածքը թէև գեղարուեստական տեսակէտով առանձին արժէք չունի, ոսկայն Շվէդիայի ազատագրական պատերազմը 16. դարի սկզբում ընդգէմ դանիացի բոնապետ Քրիստիան Բ. մինչև վերջը հետաքրքրութեամբ կարդացւում է: Աւելի գրաւում են Գուասու Վազա և Բաւ հերոսները: Արտօամբութեան սկզբները ժողովուրդը թէև վերին աստիճանի վախուկոտ է եղել սակայն վերջը, երբ զանակը ոսկըին է համնում, համարեա ամրողովին շրջապատել է ազագայ շվէդական թագաւոր Փ. Վազային: Առանց գաւաճանութեան գեպքերի գլուխ չէ եկել այդ ազատութիւնը:

Արժէք կարգալ:

199. Դիօգինէս յոյն վիլիսովիայ: Թարգմ. Սեպ. Մնջուեանի: Ալքսանդրպլ. 1900. գրբդ 119 եր. գինը...

Շատ ափսոս, որ գործնական փիլիսոփայութեան այդ կարեոր գիրքը անվարժ ձեռքով է թարգմանուած: Այնքան շատ են օտար ոճերն ու դարձուածները, որ բազմաթիւ տառասիսաշների հետ նրանք չափազանց նսեմացնում են այս ընտիր գրուածքի արժէքը: Տպաւորութիւններն այնուամենայնիւ աղդու

200. Երկու թոշուն վ., Փափազեանի, Թֆլո. 1905, 13 միջ, եր, գինը 3 կոպ. Հբատ. Թ. Հ. Բ.

Վանդակսւմ փակուած երկու գեղձանիկներից էկը լսելով տպատասէր ճնճղուկի խօսքերին՝ մի օր, երբ վանդակի դռնաւ կը բաց է մնացած լինում, փախչում է, իսկ արուն երկիւղ կրելով արտաքին աշխարհի վտանգներից մնում է մէջը և արժանանում մինչև անդամ տիրոջ արհամարհանքին:

Այս զբոյցը արժէ կարգալ:

201. Երկու բարեկամ՝ Օ. Շուլիայի: 1878. դին 25 կոպ.

Վիպախան ճամբորզական նկարագրութիւն է: Քիչ արժէ ունի:

202. Երկու երեկոյ Կոտ. Մուրլիկայի: № 184 հետ. Քրիստոսի խաչի խորհուրդն է բացարում և հրահանգում է, որ գիտնական լինելը բաւական չէ, այլ որ օգուտ պէտք է տալ ուրիշներին:

203. Զանգակի երգո Շիլէրի. Թարգմ. Գ. Բարխուդարեանցի: 1884. գինը 20 կոպ.

Բնափիը է:

204. Զզացմունքների աշխարհից Ի. Յարութիւնեանցի: Թֆլո. 1898. գինը 30 կոպ.

«Աէրը Հայաստանից ստացած խոր տպաւորութեանց ջերմ արտայայտութիւնն է: Արժէ կարգալ:

205. Զուարնալի պատմութներ Մարկ Տուէնի: Թֆլո. 1891. 104 միջ, եր, գինը, 15 կոպ.

Պէտք է երեկմի այսպիսի բաներ էլ կարդալ, որոնք թէկ շատ հրահանգիչ չեն, բայց և այնպէս հաստրակական ու ընտանեկան կեանքի երեսյթները խոշորացոյցի տակ դնելով՝ մեզ աւելի զգալի են ներկայանում:

206. Երգրում՝ Դր. Եգ. Նումանի: Թարգմ. Ի. Յարութիւնեանցի: Թֆլո. 1895. 31 փքրդ. եր, գինը 5 կոպ.

Գլխաւորապէս նկարագրում է 1889 թ. քաղաքական դըրութիւնը. ժողովրդի մասին ոչինչ, իսկ երկրի մասին քիչ բան կայ այս գրքում:

207. Թշուատների բարեկամ՝ թժ. Հասզ. Փիոլլ. ուուս. Վ. Արծրունի: Թֆլո. Հ. Հ. Բ. 1900. 91 փքրդ. եր, գինը.,

Այս վերին աստիճանի անձնագոհ, իդէալական բժիշկի կեանքը շատ և շատ օրինակելի է:

208. Իզնասոլիս Լոյոլա պատկերով, կաղմ. Լ. Մելիք-Աղամեանց. Թֆլո. 1890. 121 փքրդ. եր, գինը 30 կոպ.

Նկարագրում է ալս եզուիտական ուխտի հիմնադրի կեա-

նքը և հասարակական գործունեութիւնը, որոնց մասին կարելի  
է որոշ գաղափար կազմել այս գրքի միջոցով:

209. Խղճալիստ ծածան Շչեգրին: Թարգմ. Մ. Ղաղարհա-  
նցի. տես այլ տեղեկութիւններ № 148 ուժ:

Չուկը իդէալիստ մարդու դեր է կատարում, խօսում,  
խորհրդակցում է և միութիւն քարոզում դիշատիչ ձկների դէմ,  
բայց միամտութիւնից ինքն էլ զոհ է գումար:

Այս այլաբանութիւնը հետաքրքրութեամբ կը կարդա-  
ցուի:

210. Խմաստոնի ծանծաղուկը, Տեղեկութիւններ տես 148  
և 209 համարներում:

Այս այլաբանութեան հերոս ձուկը ծածանի հակառատ-  
կերն է, ոս միայն իր կաշուի վրայ մտածելով 100 տորի կա-  
րողանում է ապրել:

Հետաքրքրական է:

211. Խնդիրնովնութիւն Սմայլսի: Թարգմ. Փ., Վարդանեանի:  
Թֆլս. 1890. գինը 1 ռ.

Խնդիրնովնութիւն հեղինակի «Բնաւորութիւն» երկի մասին  
էլ ասել էի, արժէ որ կարգան դէպի վերացական գաղափար-  
ները արտիչն սփոռում ունեցող դեսաճաները: Այս գրուածքն  
էլ կարող է իբրև նախապատրաստութիւն ծառայել:

212. Լալուարի որսը Պ. Միքարեանցի: Թֆլս. 1901. 48  
փքրու. եր. գինը 20 կոպ.

Հիանալի պօյէմա է որսորդի ու նրա ազջկայ կեանքից:

Ճատ արժէ կարդալ:

213. Լինհարդ և Գերտորոս Հ. Պիստալոցի: Թարգմ.  
ոռու. համառօտութիւնից: Թ. Հ. Հ. Բ. 1891. 133 միջ. եր.  
գինը 25 կոպ.

Բաւականին յաջողուած համառօտութիւն է, տպաւորու-  
թիւն գործում է: Այս գիրքը ընթերցողին ակներե կերպով  
ցոյց է տալիս, թէ ինչ կարող են անել գիւղում մի քանի եռ-  
անդուն ազնիւ գործիչներ և թէ ինչ հրաշքներ կարող է գործել  
պարտաճանաչ խելացի մայրը:

214. Լինհարդ և Գերտորոս Հ. Պիստալոցի: Գերմ. թա-  
րգմ. Ի. Յարութիւնեանց: Թֆլս. 1897. 423 եր. գինը 1 ռ.  
50 կոպ.

Մհծ մանկավարժի այս վէպը, որ իրական կեանքի շատ  
խնդիրներ է շօշափում միշտ հետաքրքրութեամբ կը կարդա-  
ցուի:

Տես նաև նախընթաց համարին վերաբերեալը:

216. Կազիան Կովերսկի Ռ, լեհ. վէպիկ: Թարգմ. օր. Միհանուհի:

Երբ դաժան պրուսացիները զալիս են մի տուն օտարաշապատակ լեհացիներին Գերմանիայից դուրս անելու համար, Կազիան որբ աջկիկը (8 տարեկան) կաթուածահար է լինում ու մեռնում է:

Շատ խոր տպաւորութիւն է գործում:

217. Կախարդը է. Օրժէշկօի: Մուս. թարգմ. Յովհ. Մեկնիկևան: Պտղ. 1896. գինը 15 կոպ.

Անմեղ գթասիրտ կինը, որ դեղերով օգնում էր հիւանդաներին, խաւար ժողովրդի կողմից կախարդի տեղ է ընդունւում ու սպանւում:

Տպաւորիչ է:

218. Կոնֆուցիոս եւ իր փիլիսոփայական գործունէութիւնը: Կազմ. Գ. Բաղդ. Թ. Հ. Հ. Ը. 1887. գինը 20 կոպ.

Աւելի հետաքրքրական կը լինի այս գործնական վարդապետութեան հետ կարգալ Բուգդհայի իդէալականը և համեմատել բրիտանէական վարդապետութեանը: Տես Բուգդհա № 192.

Վերապահնել 16 տարեկան հասակին մօտեցածներին:

219. Հազարից մէկը, վէպիկ Ն. Մամեկոնեանի: Թֆլս. 1895. միջ. 234 եր. գինը 60 կոպ.

Գանձակի գիւղերից մէկի կեանքից է: Շէն ու հիւրասէր ընտանիքը քաննդում է շնորհիւ մի տզրուկ վաշխառուի: Թըշուառ ընտանիքի զաւակը, Վահանը, հարկազրում է ոռւս. տաճ. պատերազմի ժամանակ միլիցիա մտնել իր սիրած նշանածից էլ զրկուելով: Աւազը, այս թշուառ ընտանիքի որդին, բռնի կնութեան է առնում Վ.-ի նշանածին: Սովոր էլ վրայ համնելով իսպառ աղքատացնում է Վ.-ի ծնողներին, եղբօր որբերին: Վերջը Վ. հարստութեամբ վերադառնալով՝ հօր մահուանից առջ համնում է ու նրա կեանքի վերջին օրերը թեթեցնում:

Տպաւորութիւն գործում է: Տալ աւելի հասունացածներին:

220. 1500 Տարի առաջ Ի. Յարութիւնեանցի: Թֆլս. 1904. փքրդ. 64 եր. գինը 20 կոպ.

Ամփոփ պատմութիւն է մեր տառերի գլուխի մասին:

Արժէ կարգալ:

221. Հիւսիսի արծիւը, պատմական վէպ 1801-1829: Կովկասի տիրապետութեան 100 ամեակի առթիւ: Բագրատ Այլաղեանի: Թֆլս. 1901. միջ 208 եր. գինը 1 ռ.

Երբ այսօր հին բարբարոսութեանց պատմութիւնը կրկնում է իր բոլոր մանրամասնութիւններով մեր աչքերի առջև, և ելի նշանակելի է այս գրուածքի բովանդակութիւնը:

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ. Գալմայի լինզարիւնների ռուբը:

Խիզախի ճակատամարտի մէջ ջախիջախուեց սուսաց յիզափոխութեան «աւանդարդը» և ըէակցիան սահնձալրձակ բարբարոսութեամբ սկսեց տօնել իր յաղթանակը, աւել ու մահ տարածելով բազմաչարչար երկրի գիւղերում և աւաններում: Շմիգտի տրագիկական ժահը և Սպիրիդոնովայի գերմարգկային տաճաշանքները միայն շափազանց աչքի ընկնող անցքերն էին հազարաւոր նման գէպքերի, պատահած անյայտ մարդկանց նկատմամբ: Եւ ուստ յեղափոխութեան «աւանդարդը» ու. գ., իր իդէալական ոգերութեան մէջ մոռացաւ այն ըէալ հողը, այն մատերիալիստական տեսակէալ, որ նրա աշխարհայիացքի հիմքն էր կազմում, և կարծեց թէ գարերի ընթացքում գանդաղօրէն զարգացած յեղափոխութեան առաջին ծնունդը կարող է այլ բան տալ, քան լաւագոյն գէպքում ըուրդուական-գեմոկրատիական սահնձանապրութիւն: Նա սուսացաւ որ տասնեակ տարիների անդուլ աշխատանք է պահանջւում, որպէսզի ոյժերի իրական յարաքերութիւնները փոփոխուեն և առաջանայ երկրորդ ծնունդը—գեմոկրատիայի աւելի կատարեալ տիրապետութիւնը: Նրանք մռուսացած որ լոկ կամքը, հաճոյքը, մի խումբ զաւագիրների զինուած ապստամբութիւնը նոյնքան անզօր են այդ գէպքում, որքան բոնի միջոցները՝ ստիպելու որ ծննդկան կինը մի երկունքից յետոյ իսկոյն լոյս աշխարհ հանի ճնշման տակ երկրորդ մանուկը...

Ցիրուցան եղած, ջարդուած աւանդարդի տեղը բռնեց անմիջապէս նրա յետեւում կանգնած «ժողովրդի ազատութեան» կուսակցութիւնը, որ, իր շուրջ ժողովելով ընդդիմակիր ոյժերը իր գաւանած գէնքերով առաջ մղեց կոիւը բիւրօկրատիայի գէմ: Այդ, «թշնամու» գէմ էլ, ի հարկէ, լարեց իր լոլոր ոյժերը, ըէակցիօն-բիւրօկրատիան, հալածելով ազատ մամուլը, վակելով ժողովումները, արգելքներ դնելով ազատ ընտրութիւնների առջև, բանտարկութիւնների և աքսորի մատնելով աչքի բնկնող Մարտ, 1906.

զործիչներին: Եւ առօս հասարակութեան ահագին մեծամասնութիւնը, եթէ պատրաստ չէր սոցիալ-դեմոկրատների ետևից գնալու, յամենայն գէսկ հասունացած էր կոնսորիտուցիօն-դեմոկրատիական ծրագրին յարելու, ուստի բէտակցիան անկարող եղաւ խեղգել այդ պրոգրեսիւ շարժումը: Եւ առաջին անգամ Ռուսաստանում կատարուող քաղաքական ընտրութիւնները բացայաց կերպով ապացուցին այդ ճշմարտութիւնը, չնայած որ Ֆայրայել յեղափոխականները չուզեցին աջակցի իրանցից աջ գտնուող կուսակցութեան և բոյկոտ յայտարարեցին այդ ընտրութիւնների գէմ:

Առ 20 մարտի 1939 ընտրուածններից 348 հոգի պատկանում էին ժողովրդական ազտութեան կուսակցութեան, 105 աւելի չափաւոր լիբերալներին, իսկ կենուրունը—հոկտեմբերն 17-ի կուսակց:—գրաւել էր միայն 155 ձայն, նրանից աջ գտնուող առետրա-արդիւնաբերական կուսակցութիւնը 53 ձայն, առաւել ևս ողորմելի էին ողաճանողական կուսակցութիւնների յաղթանակները: Պէտք է այն էլ նկատել որ ընտրուածներից 308 «անյայտ ուղղութիւն» բաժանմունքի մէջ հն ընկել մինչդեռ ակներեւ է որպահց, գէթ ահագին մեծամասնութեան, ձախակողմեան համակրանքները, որ քաղաքական միաումնիրով սովորած աղանում:

Մեր տեսակետը ընտրութիւնների հարցում պարզել էինք յունուարի համարում:

«Սահմանադրական բեմին լիսկատար նաև առաջ կիանի մէջ—ահա առաջին նորատակը, որին պէտք է ձգտեն դեմոկրատիական բոլոր կուսակցութիւնները, չնայած լով, չպառակտելով իրանց ոյժերը՝ բիւզանդական տղանդառների նման, որոնք զողմատիկ նըրբութիւնների վէճերով էին դրացուած այն ժամանակ, երբ Պոլսի պարագների գրառմ օսմանեան բանակն էր կանդիած... Պրոգեսուի բոլոր ոյժերի դաշնակցութիւն՝ սահմանադրական կարգերը Ռուսաստանում հաստատելու նպատակով՝ ահա միացած ոյժերի ընդհանուր զրոշակը: Եւ մեզ թւում է թէ այդ հարցում նախաձեռնութիւնը պէտք է իր վրայ վիրցնի սահմանադրական ժողովրդավարական կամ ինչպէս այժմ աւելացնուում է՝ «ժողովրդական ազտութեան» կուսակցութիւնը, որ իր ծրագրով միացնում է ինտելիգենցիայի, զիւզացիութեան և բանուորականութեան շահերը և զանազանուում է ձախակողմեան ծայրացեղներից աւելի իր տակտիկայով, քան նորատակների էական տարբերութիւններով: Եթէ կամիք այդ կուսակցութիւնը աւելի ճիշտ կը լինէր ընուզել «սոցիալ-էվոլյուցիօնիստական» անունով... Միացած ոյժերով այդ ձախակողմեան միութիւնը (բլոկը) կարող էր ժողովրդի մէջ նոանդուն պրոպագանդա անել բնուրողական պայքարի ժամանակ և ուղարկել Պետական Դուման ժողովրդի շահերին նույիրուած այնպիսի հեղինակաւոր ներկայացնուցիչներ, որոնցով այնքան հարուստ է ուստական ինտելիցենցիան: Մի կողմ թողնենք վիրաւորական «բուրժուա» ածականը Մարտվիչների, Միլիլիսվերի նման անձանց նկատմամբ, մի կողմ թողնենք նեղ կոստիցամոլու-

թիւնը և գոկարինորութիւնը այս պատմական լուրջ մոմենտում։ Պէտք է հառկանալ կեանքի բիրտ լոգիկան և հասուն և առողջամիտ հայեացքով չափել բէալ դժուարութիւնները։ Զայրոյթից առամիներ կրծտել կամ խոզկան վերաբերմունք ցոյց տալ «ոչ ծայրայեղների» տակակային և փրկութիւնը սպասել միայն ապատամբական բռնկումից—նշանակում է լրջութեամբ չկշռել իբական պայմանների դրած խոչնպանների համագումարը։ Մենք հաւատում ենք որ ձախակողմեան բոլոր միացած ոյժերը, եթէ նպատակ գնին՝ բոլոր եռամովզ նուիրուելու ընտրովական պարարին, կարող են աջողութիւն ունենալ, որովհետեւ նըանց սահ տակ է այնպիսի ամուռ հոդ, ենչպիսին է աշխատող մասսայի շահերը և առնասարակ արդարութիւնը։

Առկայն «ծայրայեղները» այլ տակտիկա ընդունեցին, որ անխնայ քննադատաթեան հնթարկութիւն և սուս սոցիալ-պեմոկրատների ամենախոռուն և հեղինակաւոր անձի՝ Պլեխանովի կողմից։ իր ՃնԵՎՆԻԿ ուսումնական կուսակցութեամս կողմից ամենամասն է անում մի քանի իրողաթիւնների վրայ, որոնք ցոյց են տալիս թէ ինչ մեծ հաւատով են վերաբերում Դումային նոյնիսկ զարգացած գիւղացիները։ «Այդ հաւատի ներկայութեամս ընտրութիւնների վերաբերմբ բոյկոտը մեր կուսակցութեան կողմից, առում է նա, կոլոսալ սխալ է։ Դուման բոյկոտ անհելու վրայ նայել իբրև ինչ որ տակտիկական արժատականութեան արտայայտութեան վրայ՝ կարող է միայն նա ով չի հասկանում թէ ինչումն է կայսուում մարքսիստների արմատականութիւնը։ Այն տակտիկան որ պաշտպանում են մեր «մեծամասնականներ» («ՅՈԼՅԵՎԻԿԻ») իր վրայ կըում է պարզ հետքեր մանրութեական իգեալիզմի և մանր-բուրժուական կեղծ-յիշավուխականութեան»\*)... Մինչև այժմ այդպիսի ածականներով մկըրտում էին սուս «սոցիալ-գեմոկրատները» այն բոլոր սոցիալիստներին և գեմոկրատներին, որոնք չեին ընդունում իրանց քարացած գոգմատիզմը և միակողմանի անհամբերողութիւնը. այդ «ուղղահաւատուներին» այժմ նոյն արհամարժական ածականներն է տալիս բանուորականութեան այնպիսի պատկառելի պարագութիւն, ինչպիսին Պլեխանովը է, որ իր գարդացմամբ չի կարող Մարքսի անունը շահագործել ամեն տեսակ քեալլագիւզութիւնը. այդ նոյն այս համարում մեր աշխատակից պ. Բ. Իշխանեանը. կը ցանկայինը որ մեր ընթերցողները ուշադրութեամբ կարդային ցանկայինը առ մեր ընթերցողները ուշադրութեամբ 1848 թուականի կոմ-

\*) „Тактика, отстаиваемая папами“ болышевиками „носить на себя язвы стьды малко-буржуазного идеализма и малко-буржуазной псевдо-революционизма“.

մունիստների առակտիկայի դէմ: Նոյն հարցի պարզաբանութեան կ'օգնի և այս համարի պարբերականում զետեղած քաղուածքը ները «Պօլ. ՅԵ» հրատարակութիւնից: Մշուշը պէտք է փարատուի մեր լաւ տղերանց վլուխներից...

Իր առակտիկական սխալները արգէն սկսել է հասկանալ ո.ւ.դ. «փոքրամանականների» Փրակցիան, որ վերջերուամս կայացած իր մի որոշման մէջ ասում է.

«Ներկայ պատմական մոմենտում ո.ւ.դ. ամբողջ առակտիկան պէտք է յարմարեցնուի տնհրաժեշտութեան հետ՝ լայնացնել և ամրացնել պրոլետարական մասսաների կազմակերպութիւնը քաղաքական և անտեսական հողի վրայ... Պէտք է նեցուկ լինել բուրժուական գեմոկրատիայի այն դիմոդիր և յեղափոխական քայլերին, որոնք հակասելով մեր ծրագրային պահանջրերին, կարող են նպաստել նրանց իրագործման և եւլակէտ հանգիստանալ յեղափոխութեան յարաձուն դարձացման» («Մօլվա», 22 մարտի):

Առհասուրակ շատ բան այլ կերպարանք կը ստանար եթէ նոկտեմբերի 17-ից յետոյ չլինէին ո.ւ.դ. բազմաթիւ տաքտիկական սխալները...

«Ժողովուրդի ազատութեան» կուսակցութիւնը այդպիսով միակն եղաւ արժատուկաններից, որ հասկացաւ պատմական մոմենտի պահանջը և, դեկավարուելով իր փորձուած և շիտակ պարագուխներից, իրականութեան ամենասոսկալի պայմաններում կարողացաւ շարունակել ընդգիւմադրութիւնը բէտակցիօն-բիւրոկրատիային և նրան համուկրող կուսակցութիւնների հակաազատական ջանքներին: Այն փառաւոր յաղթութիւնները որ տարան կ.ւ.դ.երը միուսաստանի սիրտ Մոսկուայում և բիւրօկրատիայի բաստիլիա Պետերբուրգում՝ ահազին բարոյական նշանակութիւն պիտի ունենան ազատութեան համար կուսողներին խրախուսելու մտքով: Միուսաստանի հասարակական կարծիքը ճնշող մեծամասութեամբ իր հաւանութեան քուէն տուաւ Վիտակ-Դուրնովի կառավարութեան դէմ խիստ թշնամական դիրք բռնած այդ բազաքական կուսակցութեան, յաւ գիտենալով որ կօնատ-զեմօկրգնում են Պետական Դուման ու այն նպաստակով որ ժողովրդի ներկայացուցչութիւնը չլու գործիք դարձնեն իշխանութեան ձեռքում, կամ իրանց համակերպումներով բարձրացնեն եւրոպական բանկիների աշքում կոտավարութեան վարկը: Հասարակութիւնը լաւ է ճանաչում այդ Մարուվէներին, Միլիւկովներին, Բագիշչենքներին, Գետիներին և Տիոլենկօներին,—բոլորն էլ նախկին «օսվոբուժինցիներ»—, և զիաէ որ նրանք ընդունակ

Կը լինեն պաշտպան կանգելու ժողովրդի իրաւունքի և արդարութեան։ Ժողովրդի ընարողական քուէներով լիազօրութիւն ստացած՝ նրանք բարոյական հեղինակութիւն կ'ունենան հնչեցնել ոռւս ժողովրդի խօսքը, քաղաքացիական և քաղաքական ազատութեան երաշխիքներ պահանջել։ Մի կուսակցութիւն, որ իր թեկնածուների ամբողջ ցուցակը (160) ահագին մեծամասնութեամբ անցնում է Վիտտէ-Դուրնովօի աչքերի առջեկ Պետերբուրգում՝ իրաւունք ունի պահանջել որ հեռանայ և պատասխանատութեան ենթարկուի այն կուսավարութիւնը, որ սեացրուեց հասարակական քուէներով։ Երբ հասարակութիւնը ՚Դումա է ուղարկում մեծամասնութեամբ ընտրած օպպոզիցիան, ի՞նչ լոգիկայով, ի՞նչ բարոյական հիմքերով կարող են դուռվ իրանց գիրքերն պահպանել վոտահութիւնից զրկուած, գատապարտուած մինիստրները։ Այդ գատապարտութիւնը աւելի ևս նշանակելի է գառնում նոյնիսկ այն տեսակէտով, որ ընտրողական ներկայ սիստեմը, չնայած բիւրօկրատիայի բոլոր հնարագէտ խեղաթիւրութներին, այնուամենայնիւ սկ քուէ գուրս բերաւ Վիտտէ-Դուրնովօի դէմ... Կառավարութիւնը անշուշտ կը ցանկար որ գարձեալ մէջ խառնուէին տաք զլուխ ծայրայեղները՝ «զինուած ապստամբութեան» և շինծու «գործադուլների» խաղերով, որպէսզի իր օձիքը ազատի այս խաղաղ, սակայն ահագին բարոյական ոյժ և ժողովրդական համակրանք կրող կ.դ. երի կռուից, որ երկաթէ օդակով շրջապատում է Վիտտէ-Դուրնովօի մինիստրութիւնը և փախուստի ոչ մի ելք չթողնելով, ստիպում անձնատուր լինել։ Արդէն պրովոկատորական լուրեր են սկսել տարածել, իրը թէ նոր գործադուլներ են սլատրաստուում. այդ լուրերի նոպատակները բարեբախտաբար հասկանում է հասարակութիւնը։ Միւս կողմից լուրեր են տարածում որ Վիտտէն «հիւանդութեան պատճառով» պէտք է թողնի մինիստր-նախագահի պաշտօնը...»

Հ. Ս.

Մարտի 25-ին:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Աօցիւրութան եվոլյուցիան սահմանադրական եւլընեաւմ.—բանուուական գործադրութիւն եւ Կուրիերի կատարումը ներանիայում.—Թողիւարիանի օքտին նաև Բիլ Ազգի պյում.—Թիւրքիայի շամանների մասին մի խնի գիտադրութիւններ

Սահմանադրական-ժողովրդավարական իրաւակարգը անհրաժեշտ հիմք է յետագայ հասարակական-տնտեսական զարգացման համար։ Եւ այն բոլոր երկրներում, որոնց մէջ քաղաքացիական և քաղաքական ազատութիւնները ամրանալով դառնել են արգէն բնակիչների երկրորդ բնոյթը—ճանապարհը սոցիալիզմի յաղթանակի համար կարող է առաջարկված համարուել։ աշխատանքի ներկայացուցչութիւնը օրէցօր կալմակերպուելով, անընդհատ բարձրացնելով իր զիտակցութիւնը, քայլ առ քայլ գիրքեր գրաւելով կապիտալի զօրութեան վրայ յինած գտակարգերից՝ վերջ ի վերջոյ այնքան փոփոխած է լինելու հասարակական խաւերի յարաբերութիւնները, որ յեղափոխութիւնը նմանուելու է մի բնական ակտի, ինչպէս ծննդաբերութիւնն է։ Սաղմը մօր արգանդում պէտք է գանգաղ և կանոնաւոր փոփոխութիւնների ենթարկուի, զարգանայ, հասունանայ, որ երկունքը բնական յեղափոխութիւն ճանաչուի, արտակարգ միջոցներով առաջացնելով, վաղաժամ ծնունդ՝ ստանում ենը վիժում, որ մահացու է ոչ միայն անկատար մանուկի, այլ և յաճախ մօր համար։ Այս ըերած օրինակի մէջ շատ լաւ կարելի է տեսնել էվոլյուցիայի և ըեկոլիցիայի յարաբերութիւնը և կապը... Հասարակական կարգերի ներքին էվոլյուցիան բաւական առաջ է զնացել եւրոպական բոլոր սահմանադրական երկրներում, սակայն դեռ չի հասել սոցիալական յեղափոխութեան վերջին ակտի հասունութեան։

Աշխատանքի և կապիտալի յարաբերութիւնների ներկայ վիճակը սահմանադրական երկրում լաւ լուսաբանում են հիւս-արևելեան Ֆրանսիայում տեղի ունեցած վերջին զէպքերը։ Կուրրիէրի ածխահորերում պայթիւնի զոհ զնացին հազարից աւելի բանուորներ և դրանից յետոյ նոյն շրջանում (Պաղէ-

կալէ) 100 հազար բանուորներ գործադուլ յայտարարէցին Հարց է ծագում, արդեօք հանքատէրերը նախօրօք ձեռք էին առել բոլոր այն նախազգուշութիւնները, որ բանուորների կեանքը չենթարկուեն այդպիսի վտանգների, անշուշա գատաստանական քննութիւնը կը պարզի կապիտալիտաների յանցապարտութեան աստիճանը, և նրանք սափուած կը լինին հատուցում տւղ զրկուածներին: Խոկ գործադուլը աւելի յարածուն կառի մի ար տայայտութիւն է նա ընդհատումնելով միշտ շարունակուելու է, քանի տեսելու է աշխատանքի և կապիտալի մաքառումը, բանուորները գիտակցօրէն կողմակերպուած համերաշխութեամբ զնում են իրանց աշխատանքի դրութիւնը բարուուրելու որոշ պահանջները. կառավարութեան գերը այդ գէպ-ըում սահմանափակում է միայն արտաքին խաղաղութիւնը և հանգստութիւնը պահպանելու մէջ, թողնելով որ երկու կողմերը իրանց վէճը լուծեն խաղաղ կոմպրոմիսների միջոցով: Եւ նկրքին գործերի մինիստր արմատական-սոցիալիստ Կլեմանսոն իմացաւ ժամանակի պահանջներին համապատասխան տակտով վերաբերուել գործադուլին, յարգելով աշխատաւոր գասակարգի կատարեալ իրաւունքը՝ ազատօրէն խաղաղ ճանապարհով պաշտպանելու իր իրաւունքները: Զօրքը, պոլիցիան հեռացը լուծուած էին և պահուած առանձին տեղերում, որովհետեւ գործադուլ անողները բանուութիւնների դիմելու ոչ մի տառմագրութիւն չէին ցոյց տալիս: Եւ արհեստակցական ուժեւ կազմակերպութիւնը երևան էր հանում իր ամբողջ դիմացկանութիւնը այդ անզէն, կուլտուրական միջոցներով կոիւ մղելու մէջ: Բանուորականութեան աճող ոյժը ստիլում է բայլառայլ գիշումներ անել նրա օգտին:

Նշանաւոր է Կուբբիերի կատաստրոֆում մի մանրամասնութիւնն. երբ աղէտի լուրը հասաւ Գերմանիա, Վեստֆալիայից բանուորների խմբեր շտապեցին զժքազգութեան վայրը փրկելու աշխատաւոր ֆրանսիացի եղբայրներին. այդ բարձր մարդասիրական զգացմունքը Գերմանիայի բանուորների կողմից խոր տպաւորութիւն է թողել ամբողջ Ֆրանսիայում, ուր նացիոլիստական բնիքնչի դադափարը տարէցտարի մարում է չհսոյած Դէրուլէյնսերի հայրենասիրական տաք ճառերին...

Բանուորների կեանքն ու առողջութիւնը պահովող օսրինագծով է սկսում իր գործունէութիւնը և անզլիտական նոր կառավարութիւնը: Օրինադիմ արդէն առաջին անդամ կարգացուել էր պալամենտում:

Լիբերալ մինիստրութեան բիլից հանուեց այն կէտը, որով արէդ-իւնիսիստների վրայ մասնակի պատասխանաւուութիւն

էր դնւում նրա առանձին անդամների արարքների համար. նա հաւաքիրպուհց բանուրական պատգամաւոր Հիդսոնի բիլին, որով բանուրական միութիւնները պատասխանատու չեն ճանաչւում այն ժամաների համար, որ կրում են գործատէրերը գործադուների շնորհիւ: Երբ բիլի հակառակորդները ակնարկեցին այն բանի վրայ որ լորդերի ժողովը միենոյն է կը մերժի օրինազիթը, Կէյր-Հարդին հետևեալ խօսքերով պատասխանեց. «Եթէ բիլլը կը մերժուի համայնքների պալատից այն ժամանակ յարատե ընդհարում կը ծագի ինչպէս պալատում, այնպէս և երկրում: Կառավարական կուսակցութեան և օպոզիցիայի անդամները լաւ գիտեն փորձով թէ ինչ կարող են անել կազմակերպուած բանուրները, երբ նրանք լրջօրէն մի բան իրանց ձեռքը վերցնեն, այդ պատճառով երեխ չեն ուղենալ կրկնելու այդ փորձը: Ինչ վերաբերում է լորդերի պալատին—այդ թողէք մեզ գիտնալ. նա ով ընդհարման մէջ կը մտնի բանուրների հետ մեզ զբաղեցնող հարցի առիթով՝ ամրող կեանքի ընթացքում կը զղչայ: Եւ Հիդսոնի Բիլլը, ինչպէս յայտնի է լրագրներից, անցաւ ձայների առագին մեծամասնութեամբ:

Դասնանք սահմանադրական երկրներից բոնակալական երկրներին, ուր հարցերը պատուած են գեղ մարդկային ամենատարրական իրաւունքների անապահովութեան շուրջը: Այդպիսի երկրների մէջ վատթարագոյնն է, ինարկէ, Թիւրքիան: Նրա կուլտուրական սակաւաթիւ տարրերի ամբողջ դժբաղդութիւնը այն է որ ազգարնակութեան ահազին մեծամասնութիւնը 90<sup>0</sup>: զանուում է մտաւոր-տնտեսական զարգացման այնպիսի գրութեան մէջ որ ներկայումս գեղ չի կարող արտադրել հակակառավարական ընդդիմադիր խոշոր ոյժ, ուստի ներքին յեղափոխութիւնը այնաեղ զանազան խմբակների դաւադրական փորձերից դէնը չի անցնում: Այդ գաւադրական խիզախ փորձերով նոյնքան այժմ անցուալի է աջողութիւնը, որքան նման փորձերը ապարդիւն անցան 50—60 տարի առաջ Ռուսաստանում: Թիւրքիայի այն գաւանսերում, ուր մահմեդական տարրը գերիշխող է, ուր թուրք և քիւրզ ովկիանուառում ցիր ու ցան օազիսների նման ընկած են պարիս բրիստոննեանների ազգարնակչական կողիներ, յոյս գնել մօտալուս յեղափոխութեան վրայ նշանակում է չճանաչել իրականութիւնը: Թիւրքիայից ազատուեցան դրսի օգնութեամբ այն երկները, որոնք համեմատարար միաձոյլ ցեղական կազմ ունեին. Ռումանիա, Սերբիա, Յունաստան, Բուլղարիա, մնաց Մակեդոնիան, որի մէջ թրբական րեժիմի տակ մնշուած զա-

նազան ցեղերը այժմ, թողած ընդհանուր թշնամուն, կոտաղի կորու են մզում իրար գէմ նացիօնալիստական հոգի վրայ: Նացիօնալիստական ձգտութները սկսել են արթնանալ նաև Հայաստանում ապրող թուրք ու քուրդ տարրերի մէջ, և այդպիսով աւելի ևս կնճռու է գառնում առանց այն էլ գորգեան հանգոյցից աւելի գժուար լուծելի հայկական հարցը: Դաւադրական յեղափոխութեան խիզախ տակտիկան, ինչպէս ցոյց տուեց 25 տարրուայ անցեալը, աւելի ևս, վատթարացնում է այդ գժոխբում ապրող հայերի կացութիւնը՝ ամրոց գաւառներ գաղարկում ին հայութիւնից, հայ տարրը իրրե յեղական-անտեսական ոյժ կորցնում է իր նշանակութիւնը, հայերի բնաջնջումը գառնում է թիւրք ըէժիմի ներքին ծրագիր: Պոլսում սուլթանին սպանելու անաջող վորձից յետոյ այժմ նորից սկսել են կատաղի ճնշումներ հայերի գլխին. «Ամբողջ երկրում, ասում է (Рyc. Вեճ. № 79) ինչպէս գաւառներում, նոյնպէս և Պոլսում նորոգուեցան հալածանքները, ճնշումները, որոնք յիշեցնում են իննսունական թուականների վատթարագոյն տարիները»: Ամեն օր լրագրներում տպուած փաստերը նոյնն են տում: Դրա գիմաց քաղաքակիրթ պետութիւններից ամենահամերապետականը — Ամ. Միաց. Նահ. յայտնում են թէ ոչինչ չեն կարող անել այդ «զըժքախտ էակների համար»: Խնդրի այդ գերմարդկային գժուարութիւնը պահանջում է գործելու խորագննին, շրջահայեց և հեռաւաս տակտիկա, որ լոկ բուռն զգացմունքի և խիզախութեան վրայ չպէտք է յենուած լինի... Այդ մասին մենք կը խօսենք այլ անզամ:

I. U.

28 Մալուխ.

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԿԱԵՆՔԻ ՔՐՈՆԻԿ:

Եզրիլուահայեր. Պոլսու փաշա Նուրբարի նուիրատութեամբ շինուելիք նոր վարժարանի (տես «Մուրճ» 1905 թ. №) հիմնարկէքը Կահիրէյում մեծ հանդիսաւորութեամբ կատարուել է մարտի 4-ին հոգեորական և աշխարհական հայ մեծամեծների և երկու սեռի բազմութեան ներկայութեամբ. Եզրիլուսի հանրային կրթութեան նախարար Եազուազ Արթին փաշան ևս ներկայ է գտնուել:

Իր հասի մէջ նութար փաշան ասել է ի միջի այլոց հետեալը.

«Ի՞նկատի առնելով որ այս շինութեանց ծախքերի համար բաւական պիտի լինի միայն մէկ մասը այն գումարի, որ մեր երիտասարդներուն կրթութեան յատկացնել մտադրած էի արդէն, որոշեցի մնացածովը հաստատել թոշակներ, որոնք պիտի տրուին ամենէն յաջողակ և արժանաւոր Հայ ուսունողներին, որպէս զր միջոց ունենան կատարելագործելու իրանց բարձրագոյն ուսումները Եղիպատոսի կամ Եւրոպայի վարժարաններին մէջ, ուր կարող են աւելի ընդարձակ հմտութիւններ ստանալ, և այսպէս յաջողի իրանց ընտրած ասպարէզներուն մէջ պատուաւոր և անկախ զիրքեր զրաւելու:

Բնականաբար կը փափագէի որ այս թոշակներից մի բանին օգտակար լինէ մեր հասխակրթաբանից ելնող շրջանաւարտ աշակերտաներին. բայց դրա համար՝ հարկ է որ այնտեղ աւանդուած ուսումը նրանց հասցնէ երկրորդական վարժարաններ ընդունելու վիճակին: Ուստի պէտք է որ չը բաւականանք ոսուկ նիւթական յառաջդիմութեամբ, այլ այնպէս անենք որ նրա համապատասխան մտաւորական յառաջդիմութիւն էլ ձեռք բերուի, զուգընթաց քայլելով: Այս բարեկարգուած շէնքին մէջ պէտք է դրուի և լաւագոյն ծրագիր: Ուստի իմ արտայայտած բաղձանքս է,—որ վստահ եմ թէ Ազգն ալ կը փափագի—որ մեր վարժարանները որանից յետոյ ոչ թէլ բանով ետ չըմնան կառավարական ուրիշ հմանօրինակ վարժարաններից: Ցանկալի է, և նոյն իսկ հարկ է, որ մերիններն էլ յաջողին հասնելու միենոյն աստիճանին և մեր վարժարաններից ելնող տղաները այնչափ լու զինուած լինեն՝ որչափ ուրիշ զպրոցական հաստատութեանց մէջ պատրաստուած իրանց նմանները, որոնց հետ պէտք պիտի ունենան մրցելու կեանքի ալայքարին մէջ, ինչ որ էլ լինի իրենց ընտրած ասպարէզը:

—Ծուլմանաւայելը. Բրայիլացում 1866 թուականից հաստատուել են զաղթական հայեր, որոնց թիւը այժմ համառում է 400-ի, գրանք մեծ մասմբ արձեստաւորներ են, նպարավաճառ, հացագործ, սրճագործ, կօշկակար, ստիրիչ և այլն. կայ և երկաթի մի գործարանատէր և երկու ագարակատէրեր: Գաղզութը ունի փոքրիկ մի եկեղեցի յարակից փոքրիկ շնորպ բահանայի համար: Իսկ վարժարան, որնէ բարեկործական հաստատութիւն և ընթերցարան բացակայում են բոլորովին: Հայ արհեստաւորներ ու բանուորներ զալիս են լքցնելում Բուքարէշտ բազարն ես: Հայ բանուորները անզարգացած լինելով անընդունակ են արհեստակցական միութիւններ կազմելու, հայի խնդրի համար սաստիկ մրցում են իրար հետ, աշխատանքը 18 ժամ գարձնելով, մասնակից անելով ծանր զործին նաև իրանց 5—6 տարեկան

մանուկներին։ Անխուսափելի է դարձել և հայ կնոջ աշխատութիւնը՝ ընտանիքը սովից ազատելու համար։ 250 տասից բաղկացած տեղացի հայութեան մէջ կատարելապէս մարած է հասմանական ոգին. իւրաքանչիւրը իր զլիսի ճարն է տեսնում։ Տեղացիները փչացած, օտարացած մի տարր են դարձել։ Այդ գաղթականների մէջ նոր-նոր երևում է գիտակցութիւն, որ պէտք է իրանք ոկտին հոգ տանել իրանց վերածնութեան մասնին. վարժարան, ընթերցարան և պրոֆեսուարիզնալ միութիւններ հաստատելով։ Այդ հետաւոր երկրների հայ արհեստաւոր-բանուորների մասին արգեօք մատաժնւմ են մեր այն կուսակցութիւնները, որոնք «պրոլետարիատի» գասակարգային գիտակցութիւնը արթնեցնելու մասին են խօսում...»

— Լոնդոնում հայերի թիւը համառում է մօտ 300 է. բոլորն էլ համարեա աշխատաւոր գասակարգից են. մի հայ (Աթարեան) Լոնդոնի մօտ ունի գառօգի գործարան, ուր աշխատաւորների մեծամասնութիւնը բաղկացած է հայերից. այդպիսով Լոնդոնի հայ գաղութի կազմը բաւական տարբերում է Պարիզում համախմբուած հայերից, որոնք մեծ մասամբ վաճառականներ են, ուսանողներ և... խմբագիրներ, արհեստագիտներ։ Գաղթական նոր հստանքների ծայրը Պարիզ էլ է մուտք գործել. թրքահայ գաղթականներին աւելացան այժմ կովկասահայ գաղթականներ ևս և «լէպհօ-լէ-լէ»-ն հնչեց ֆրանսիական մայրաքարարի ուղարհներից մէկում կաղմած բարեկործական երեկոյթներին...»

Փարիզի Matin օրաթերթի մարտ 19-ի թույն մէջ կարգում ենք. «Վերջին կոտորածներին պատճառով իրենց երկրից վտարուած և ամենախեղճ վիճակի մէջ այս միջոցին Փարիզ հասած 12 ի չափ Հայերի մի խումբ, երեկի իրենց հայրենակիցներից կազմըւած Բարեկործական ընկերութեան մասնաւողովի իրենց կողմից նպաստ տալ մերժած լինելով, վնացին Ժան—Գուման փողոցի Հայոց եկեղեցին և այնտեղ մի տեսակ ցոյց արին, որ ոստիկանութիւնը միջամտելու պարտաւորեցու.»

— Ամեր. Միացեալ-Նահանգ. Նախագահի կողմից արուեց պատճխան եւրոպական հայասէրների և հայերի գիմումներին. յունուարին յայտնած մեր յուսեւն շեշտը դժբախտաբար այսօր արգարացաւ։ Արտաքին գործերի մինիստր Ռուտը Զէյմո Ռէյնողուգսին ուղարկած նամակում յայտնում է հետեւալը.

Տ է ր.

Նախագահը ինձ յանձնած է յայտնել ձեր 13 յունուարի նամակի ընդունուելը, որի հետ ներկայացուած էր և մի խընդրագիր, հաւաքաբար ստորագրուած ֆրանսիայի, Խոտալիայի,

Բելգիայի, Շուէգիայի, Դանիայի, Մեծ-Բրիտանիայի, Հոլլանդիայի, Գերմանիայի և Աւստրօ-Ռւգարիայի ազգեցիկ անձնաւորութիւնների կողմից, որով կոչում են անում նախագահին Միւրքահպատակ հայերի կրած անգիտութիւնների առաջն առաջնու:

Խնդրատունների բարձր զիբըը, եթէ հնարաւոր լինէր՝ աւելի ևս պիտի շահագրգուէր նախագահին այդ խնդրով, որին արգէն անցած տարինների ընթացքում նա իր անկեղծ ուշադրութիւնն էր նուիրած:

Ամերիկացի ժողովրդի կարեկցութիւնը բոլոր հրկնների ճնշուածների հանգէպ յաջորդաբար արտայայտուած է այս կառավարութեան այլև այլ միջոցներով և դժբախտ հայերի նըշկատմամբ՝ ճարտարախոս կերպով ձայնակցուելով ամերիկական հասարակութեան կողմից: Միանգամայն գուրս է կասկածից, որ նախագահը կուզէ, որ հայերը վայելին կեանքի ու գոյքի ապահովութիւն, այն, ինչ որ երրորդական միացեալ կառավարութիւնները նպատակ են ունեցած նրանց համար ձեռք բերելու:

Թիւրքահպատակ հայերի տառապանքները բարձրաձայն օգնութիւն ու դարման են աղաղակում: Այդ տառապանքները վրդովուած են համայն մարդկութեան մարդասիրական զգացումները և աշխարհը միացած է սորբալու ու դատապարտելու այն ցեղային թշնամութիւնները, որոնք տիրում են թուրք բընակչութեան տարբեր տարբերի մէջ: Ոչ մի ծշմարտասէր մարդ չէ կարող ականատես լինել նուանօրինակ գէպքերի՝ առանց ուղենալու՝ ոյժին գիմել նրանց առաջն առնելու համար: Եթա տնենայն անկեղծութեամբ կը ցանկայի, որ Միացեալ-Նահանգները այդ ոյժը ունենային, բայց համահաւասար անկեղծութեամբ համոզուած եմ թէ Միացեալ-Նահանգների ջանքերը, որ անհրաժեշտութէն՝ օրինաւոր ու հզոր միջամտութեան ոյժ չունեն աննշան և կտմ ոչ մի արդիւնք չափանի բերեն, նկատի առնենելով մի ուրիշ պետութեան գործերի ու շարժառիթների գուպարտութիւնը, որ անխուսափելիօրէն պիտի յայտնուի: աւելի վլասակար պիտի հանդիսանայ քան օգտակար այն անբախտ արարածների համար, որոնց ցանկալի կը լինէր նպաստել:

Չեր խոնարհ ծառայ՝

Էլի՛ու Ռուս

Այլ բան սպասել նշանակում էր իինել սեր կապիտալիստական դարում բոժանտիկ, երազուն իդէալիստ...

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Полярная звезда № 12.—**Պետր**  
**Ստրովիկի** խմբագրութեամբ լոյս  
 տեսնող այդ շաբաթական համազէսի  
 № 12-ի մէջ ապրուած «Ի՞նչ է սոցիա-  
 լիզմ» վերնագրը տակ յայտնի ոռու  
 տնտեսագէտ-հասպարակախօս Մ.  
 Տուգանի—Բարանիսկով։ յօդուածը՝  
 մատնանիշ անելով այն ահազին ժա-  
 ւալի գրայ, որ օրէցօք ստանում է  
 սոցիալիզմը, գործում է որ սո-  
 ցիալիզմը, իրքի ուսմանք զեռ շատ  
 հոռով է կատարեալ դիմական սիս-  
 տեմի իրէալից։ Ընդհանրագէս սո-  
 ցիալիզմ կոչում է քաղաքատնտե-  
 սական մի ուղղութիւն, որ ցանկա-  
 լի է համարում արդիւնագործական  
 միջոցների նկատմամբ մասնաւոր  
 սիփականութեան ոչնչացումը և կար-  
 ծում է թէ ժամանակակից հաւարա-  
 կական զարգացումը տանում է գէպի  
 այդ ոչնչացումը։ Մական արդիւնա-  
 գործամթեան համայնացումը սոցիա-  
 լիզմների համար միջոց է համանելու  
 մի նպատակի՝ ապատել մարդուն  
 մարդու հարստանարութիւնից։ Բայց  
 արդիւնագործամթեան համայնացու-  
 մը զեռ ինքն ըստ ինքնան սոցիա-  
 լիզմ չէ, սասմէ և Տուգան-Բարա-  
 նովսկին, այժմ էլ կան շատ ակցիօ-  
 ներական ընկերութիւններ, որոնց  
 մէջ այս կամ այն կապիտալիստ ան-  
 հատը չէ գործ տէրը, այլ բազմա-  
 թիւ բաժնետէրի, որոնք ինքնին են  
 պատկանուունակ արդիւնագոր-  
 ծութիւնների մէջ աշխատող ըորոր  
 բանուորները, սակայն այդպիսի հըս-  
 կայական համայնացած և կենարունա-  
 ցած կապիտալիստական արդիւնա-  
 գործամթիւնն էլ այնուամենայնի չի  
 կարող սոցիալիստական կոչուել։ Յօ-  
 դուածագիրը մի առ մի տուաջ է րե-  
 սում նշանաւոր սոցիալիստականի ո-  
 րոշումները և եղանակնում, որ ոչ  
 մէկը ճիշտ չէ ամփոփում սոցիալիզմի  
 էկութիւնը։ Սոցիալիզմը, իրքի ա-  
 պագայ հասարակական կազմի իրէալ,  
 անորոշ է և մշուշապատ։ Սոցիալիս-  
 տական իրէալը անկարելի է հասկա-  
 նալ առանց նաև առարտութեան ըսկըզ-  
 րունքի։ Իսկ անհաւասարութիւնը  
 իրերի բնութեան մէջ է արմատա-  
 ցած կազմի անհաւասար էլեմենտ մէջ է արմատա-  
 ցած մարդիկ անհաւասար են ծըն-  
 տում իրանց ֆիգիրական, մասուոր  
 բնունակութիւններով, բարոյականի

ճաշակի և այլ հակումներով։ Ոչ մէ  
 հասարակական կազմ չի կարող վերա-  
 ցնել այդ բնական անհաւասարու-  
 թիւնը։ Եւ ինչն ձգտել այդ անհա-  
 ւասարութիւնը վերացնելու։ Միթէ  
 ընդհանուր հաւասարութիւնը երաշ-  
 խաւորում է ընդհանուր երաշնկու-  
 թիւնը։ «Հաւասարութեան սկզբունքի  
 տարրալուծումն է զիմաւոր։ Ծնա այդ  
 հիմնական հարցի պատասխանն է որ  
 տալիս է նոր ժամանակի ամենամեծ  
 փիլիսոփայ կանուք Նրա հիմնական  
 սկզբունքը այն է որ բոլոր մարդիկ  
 բնութիւնից հաւասար են, որպան և  
 նրանք տարբեր լինեն իրանց յատ-  
 կութիւններով և արժանիքներով։  
 Նրանք հաւասար են իրանց տպակելու  
 և բախտաւոր լինելու իրաւունքով,  
 նրանք հաւասար են այն յարգանքով  
 որով մինք պէտք է վերաբերուենք  
 նրանց բոլորի շահներին, նրանք հա-  
 սարար են, որովհետի իրաքանչիւր  
 մարդու անձ ունի անսահման միջ  
 արժէք։ Կանուք հետեւել կերպով է  
 բնորոշում մարդու բնածին իրա-  
 ւունքները, և իմայն մի բնածին իրա-  
 ւունք ունի մարդը։ արատութիւնն  
 (ուրիշի կամայականութեան պար-  
 տագիր ներկործութիւնից անկախու-  
 թիւն) որչափով այդ պատասխիւնը  
 համապարոււնակելի է միւս մարդ-  
 կանց պատասխեան հետ, դա միակ,  
 սկզբնական իրաւունքն է, որ յատուկ  
 է իրաքանչիւր մարդու հէնց այն  
 պատճառով որ նա մարդ է Բնածին  
 հաւասարութիւնը՝ այսինքն՝ իրա-  
 քանչիւր իրաւունքը ուրիշ նկատ-  
 մամբ աւելի պարտականաթիւններ  
 չկրել, քան այդ վեցջննը կրում է  
 առաջինի նկատմամբ, ինչպէս և  
 մարդու իրաւունքը՝ լինել ինքն իր  
 աւելը՝ այդ բոլոր իրաւունքները  
 պարունակում են արդէն բնածին ա-  
 զատութեան ոկբունքի մէջ և իս  
 կապէս չեն կարող նրանից անջա-  
 տուել։

Արդ, արդիւնագործական միջոցնե-  
 րի մասնաոր սեփականութիւնը  
 տնտեսական անխուսափելի օրէնք-  
 ներով գառնում է մի մարդու կող-  
 մից իրաւունք հարստանարել միւսին,  
 անխուսափելիօրէն սահմանափակում  
 է աշխատող անհատի պատութիւնը  
 և զարձնում է դարդակ իրաւաբա-

բոլորի «բնածիզ»  
հաւասաշը ուղարկենք : Այլ խօսքերով՝  
աշդիւնաչ, միջացների մասնաւոր  
ուժականութիւնը անհամապատաս-  
խան է, մարդու իրաւունքին՝ ինելու  
ազատ և հաւասար: Այդ պատճառով  
սոցիալիզմը պահանջում է հասա-  
րակութեան բայրը անգամների Տիե-  
ժեստական հաւասարութիւնը և մինք  
կարող ենք սոցիալիզմը սրոշել իր-  
ու անտեսական կողմից հասարա-  
կութեան այնպիսի կազմակերպու-  
թիւն, երբ անկարելի է հասարակու-  
թեան մի մասի անգամների հարրո-  
տաճարութիւնը միւսների կողմից:

Ընդհանուր առմամբ սոցիալիզմի  
մէջ նկատում են երեք զլիաւոր  
ուղղութիւններ, 1) կոլեկտիվիզմ,  
2) կոմմոնիզմ և 3) անտրիզմ: Այդ  
երեք սոցիալիստական ուղղութիւն-  
ների վերջնական նույսակների մէջ  
տարբերութիւն չկայ—բոլորն եւ  
ձգուում են ոչնչացնելու մարդու հա-  
րսածարումը մարդով և ապահովել  
բոլորի սննդուստկան հաւասարի-  
րաւութիւնը: Կոլեկտիվիզմը (կամ  
նոր մարդով հասկացած սոցիալիզմը)  
պահանջում է իւրաքանչիւրից այն  
աշխատանքը, որին նա ընդունակ է  
և տալիս և վարձատրութիւն այն  
չափով որ համարատասկանում է  
հասարակութեան տուած նրա աշ-  
խատութեան, «իւրաքանչիւրից նրա  
ընդունակութեան» համեմատ, իւրա-  
քանչիւր ընդունակութեան, «նրա  
գործերի համեմատ» ասում է Սեն-  
Սիմօնը: Կոմմոնիզմը ժխտում է  
աւելի արդինաւոր բանուորների աւ-  
ելիք վարձ սահանալու իրաւունքը,  
որպինտե ինքը մարդը հասարակա-  
կան արդինք է և այս կամ այն ընդու-  
նակութիւններով ծնուելը մարդու  
սեփական կամքից չէ կախուած: Հե-  
տեւարար կոմմոնիզմի նշանաբանն է,  
«իւրաքանչիւրից նրա ոյժերի համե-  
մատ, իւրաքանչիւրին նրա պահանջ-  
ների համեմատ», ինչպէս ձևակեր-  
ալ է Կարէն: Անարխիզմի տարբե-

րութիւնը վերև յիշած երկու ուղ-  
ղութիւններից կայանում է նրանում  
որ անտրիզմը անպայման ժխտում  
է հասարակական աշխատանքի ստի-  
պողական կազմակերպումը և կարե-  
լի է համարում սոցիալիզմի վերջ-  
նուկան հապատակի իրազործումը,  
մարդկանց միանգաման ազատ և  
անստիպողական զործակցութեամբ:  
Բայ այդ ուղղութեան ոչ միայն  
պետութիւնը պէտք է ոնհաւանայ,  
այլ և վերանայ ամեն մի ստիպո-  
ղական հասարակական իշխանու-  
թիւն, զադարի մարդու որեէ իշխա-  
նութիւն մարդու վր : Անարխիզմի  
իրէալն է—անհատի և տարեալ ա-  
զատութիւնում ինքնավարութիւնը:  
Ժամանակից հետաքրքրութիւն  
է ներկայացնում և (փետր. 18-ին,  
տա-  
րիատի զիկտատուրա» անունով Իդ-  
գօնվի յօզուածը: Ռուս սոցիալ-զի-  
մոկրանների տակտիկական սիալ-  
ները քննելուց առաջ նեղինակը, որ  
համոզունքով սոցիալիստ է, առա-  
ջուց նախատեսում է որ նեղ կու-  
սակցամոլութեամբ վառուած պա-  
րունակը խելոյն զիմելու են նայո-  
յանքի, վարկարեկ անող զրպարտու-  
թիւնների և այլն և այլն, չէ որ  
նոյնիսկ Մարքս և Էնգելսին 18  
թուականին «գուաճան» անունով  
կնքեցին, որովհետեւ նըանք համար-  
ձակութիւն ունեցան մերկացնելու  
1848 թուականի յեղափոխութեան  
ժամանակ կտարած մի շարք սիալ-  
ները... Այդպէս են ամեն տեղ նեղ  
կուսակցական շահերին զիտութիւնն  
և արդարութիւնը զոհող Փանատի-  
կուսները, որոնք միշտ աւելի չարիք են  
քան բարիք առաջադիմութեան հա-  
մար...»

Պըտեարիատի միանեծանութեան  
զարափարը բլոնկիստական ծագում  
ունի: «Բլանկիստաները, ասում է  
Էնգելսն, այնպիսի մարդիկ են, ո-  
րոնք վարժուել են գաւառութիւնն  
զպրոցում, սովոր են գաւառիբների  
զպրոցում,

թեան խիստ կարգապահութեան, կարծում են թէ համեմատալրա փոքրաթիւ խիզախ, լաւ կաղմակերպուած մարդկանց խումբ կարող է նովաստաւոր հանգամանքներում ձեռք դրցել իշխանութիւնը և իր ձեռներում ողաճի մինչև որ աջողուի ժողովը դրդություն գրաւել յեղափոխութեան կողմը և համախմբել նրան պարագութեանքի մի փոքրիկ կոյստի շուրջը»: Այդ հաւաքացողութեան զեմ ենցիրը 1895 թուականին հակազդեց իր տեսակետը: «Եթէ և ներկայ պրոլետարիատի հզօր բանակը՝ զրում էր նուզեն և չկարողացաւ համեսել իր նըղպատակին, իթէ նա անկարող է յաղթանակել մի գնական հարուածով, և ստիպուած է մանր մաքառումակ խել թշնամոց զիրք դիրքից տեսեց՝ այստեղից անդամնալի կերպով հետահում է որ 1848 թուականին անկարելի էր սոցիալիստական կերպարանափառութիւնը իրագործել լոկ իշխանութիւն ձեռք զցելով»: Հին ձեր ապատամբութիւնը, փողոցացին կոիւները պատճեշներով հանուզէրծ՝ չարունակում է նաև այդ հարցի մասին (տես «Մուրճ» № 1), իզդուկը համաձայն է յայտնի ուստ սոցիալիստի քըն-նադատական վերաբերմունքին, արահամարձելով «լիբերալ», «գուաճան» «բուրժուա» խօսքերով զիմացինին վախեցնելու երախայտմիտ բանակուի ձեւեն: Խակ ըմբառների կոսուսիրութեամբ այդ «սոցիալիզմուկըները» տարուել էին տարհրային հոսանքով և մոռացել ոչ միայն ինպելին, այլև կորցրել զատելու ընդունակութիւնը, չուզենաւով որեւէ կոմպոմմասի մէջ մանել լիբերալների հետ, նրանք իրանց սխալ առաջիկայով միայն ուժեղացընը բէկացիան ապահովութիւնը այն պարզ ճշշմարտութիւնը որ բիւրոկրատիայի ձեռքից իշխանութիւնը կարող է լաւագոյն զէպքում անցնել լիբերալ-դեմոկրատների ձեռքը, որ կը տար պրոլետարիատին առնուազն պրոֆեսիոնալ միութիւնների և մամուլի ազատութիւն, առանց որոնց բանուորների հոմար անհնարին է լոյն

թիւնը, նրա զիտակից վերարկը-մունքը զէպի այն, ինչի համար նա մաքառում է, և ինչ պահանջում է իսկ որպէսպի մասսան իմանաց թէ ինչ անի-անհրաժեշտ է երկարատի և տոկուն աշխատանք:

Այն էվոլյուցիոնիստական աշխարհայնացքը որի վրայ հիմնուած է իսկական մարքսիզմը ուսւսոցիալ-զեմուկրատները միանգամայն մոռացութեան տուին, քաղաքական և սոցիալիստական յեղափոխութեան տարրերութիւնը իսպան խախտուից, «սոցիալ-զեմուկրատները» հրէշտար թուիչքով մարքսիստական հասկացողութիւնից ընկան և ակարբիզմի ըմբռնուզութեան և բակութիւնից զիրքի ըլլակը: Մենք արգէն ծանօթացրէնք Պիեռանովի հայեցքը-ների հետ այդ հարցի մասին (տես «Մուրճ» № 1), իզդուկը համաձայն է յայտնի ուստ սոցիալիստի քըն-նադատական վերաբերմունքին, արահամարձելով «լիբերալ», «գուաճան» «բուրժուա» խօսքերով զիմացինին վախեցնելու երախայտմիտ բանակուի ձեւեն: Խակ ըմբառների կոսուսիրութեամբ այդ «սոցիալիզմուկըները» տարուել էին տարհրային հոսանքով և մոռացել ոչ միայն ինպելին, այլև կորցրել զատելու ընդունակութիւնը, չուզենաւով որեւէ կոմպոմմասի մէջ մանել լիբերալների հետ, նրանք իրանց սխալ առաջիկայով միայն ուժեղացընը բէկացիան ապահովութիւնը այն պարզ ճշշմարտութիւնը որ բիւրոկրատիայի ձեռքից իշխանութիւնը կարող է լաւագոյն զէպքում անցնել լիբերալ-դեմոկրատների ձեռքը, որ կը տար պրոլետարիատին առնուազն պրոֆեսիոնալ միութիւնների և մամուլի ազատութիւն, առանց որոնց բանուորների հոմար անհնարին է լոյն

ծրագրով մաքսուսմ: Կառավարութիւնը տեսնելով ընդգիրմադիր կուսակցութիւնների համեմաշխութիւնը, տեսնելով որ լիբերալ գեմոկրատները իսկական յենակէտ ունեն մասսայի մէջ, տատանումներից և հակայինափոխական փորձերից յետոյ սովորական պէտք է լինէր նահանջիլ և գէտ մի քանի զիրքերը յանձնել: Ասել թէ լիբերալ գեմոկրատները կամ «ՅԵՄԸ» իշխանութիւն ձևոք ձգելով «կը իսարենայ բանուորաներին» անհիմն է, որովհետեւ հէնց բիւրոկրատիայի օգտին գործած չլինելու նպատակով նա այդ չէր անիւ Սակայն առցիւլ-դեմոկրատները չուղեցան ի նկատմ ու նկնջալ տակարիկական այլ պահանջը. Նրանք վճռեցին թէ իրանք մենակի բաւական ոյժ ունեն ոչ միայն բիւրոկրատիան տապալիլու, այլև բուրժուազիան հալուածելու: Մամուլի մէջ և միտինգներում լիբերալների զէմ անխնաց պատերազմ էր յայտարարուած, խոշոր բուրժուազի այլի զէմ իսկոյն զառն առեցին զօտով մտցնելով ութ մամեայ աշխատանք, մանր բուրժուազիան խրտնացրին զինուած ապստամբութեան, անվերջ գործազուների, անտեսական մանակութեան ըւրուականներով: Հետեանիքը սսուկալի ջախջախում, որից «լիբերալների» հետ տուժեցին և իրանք սոցիալ-դեմոկրատները: Համարժէք համարել «բուրժուազիան» և ուսւ «լիբերալներին» անմատութիւն է: Եւ սոցիալ-դեմոկրատները ոչ մի գիտակցութիւն չմտցրին հին շաբունով վարած ապստամբութեան մէջ և առաջացրին մի տարերային շարժում, որ էնգիւլ հետեւալ կերպով է տարբարակութել գետ 10 տարի՝ առաջ. «Առաջին խոշոր յաջողութիւնից յետոյ արտթական փորբամանութեան

մէջ սովորաբար առաջ էր գալիս պառակում, մի մասոր բաւականանում էր առացածով, միւսը ուզում էր առաջ ընթանալ, զնում էր նոր պահանջներ, որոնք գէլի մասամբ համապատասխանում էին ժողով. մասսայի իսկական կամ երևակայի առաջի լուսական շահերին. Առանձին զէպքելում այդ աւելի արմատական պահանջները իրականանում էին իսկապէս, բայց յաճախ լուկ կարճ ժամանակով. չափաւոր կուսակցութիւնը կը զին յաղթող էր հանդիսանում, վերջին յաղթութեան պատուին բը ամրողապէս կամ մասամբ ոչնչացրում էին. յաղթուածները այն ժամանակ ըստում էին զաւաճանութեան մասին կամ իրանց պարտութիւնը պատահականութեան էին վերապրում: Մինչզիս իրականապէս բանը մէծ մասամբ լինում էր այսպէս. առաջին յաղթութեան հետևանքները ամրապնդում էին միայն երկրորդ յաղթանակով, աւելի արմատական կուսակցութեան յաղթանակով, իսկ զբանից յետոյ արմատականները հնրանց յաջողութիւնները նորից անհետանում էին բէմիզ:

Յօգուածագիրը զալիս է այն եղբակացութիւն որ պէտք է միահամայն թողնել «արոյիտարիխափ գիկտասուրայի» մասին միտքը, որովհեա այդ մասին խօսք կարող է լինել միայն իսկական սահմանադրական-պարլամենտական իրաւակարգ հաստատուելուց յետոյ, Դաշնակցութիւնը իսկական սահմանադրականների հետ տակտիկական անհրաժեշտ քայլ է պրոլետարիխափ շահերի մասին մտածողների համար: Խնչգէս տեսնում է ընթերցողս, արտադրյալտուած մտքերը շատ մօտ են ամսագլխի յունուարի ներք, տեսմէջ պարզած տեսակէտներին:

## Երես

14. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .  
15. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .  
20. ՅԱԽԵԼՈՒՄԾ. ՁԷյմս Մորիքը «ՀԱԶԻ ԲԱՐԱՆ ԱՆԳԵԼԻԱՅԻՄ», վէպ պարոկ. կհանրից, թարգմ.  
անդ. Մ. Կարապետեան . . . . .

## ԽՄԲԱԳՔՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածազրկեց դրել պարզ, մասնաւոյ բաւերը, յատուկ անուններն ու օստա բաւերը, և թերթի միայն մի երեսի վրայ. առանձնաբայլս աւ գալաճնել կետադրութեան, ուղարգութեան եւ նոր պարեւերթիւնները սուսակի լինելու վրայ. Թարգմանութեան հետ ողէոք է ուղարկել խմբագրութեանը նոն բնագիրը:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնեւում են: Զեռագիրը յետ սոսանալու համար պէտք է ուղարկել ճանապարհութափութ: Փաքք յօդուածներն ու սոսանալորները չեն վերադարձնում:

3. Քրուածքների վարձատրութեան շափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռադիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնս իրան է վերապահնում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը:

5. «Մուրի» համարը չստացուելու վեպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քանի յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է որատարխանի համար ուղարկեն նամակագրում՝ կամ պոստային ըլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոտեկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այսոնել նաև հին հասցէն:

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ Ե ԲԱԺՇՆԱԾԳՔՆԻ ԹԻՒԽՆ

1906 P.

# „ՄԱԿՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՐՄԱՆԱԳՐԻ

## ԲԱԺԱՆՈՐԴՅԱԳԻՆԸ

**Օսմանական տարբեկան** 10 լ. **Արտադրություն** 12 լ. **(32 գ.)**

**¶** *Qarulqanasi* **¶** *ku* *mampiñu*      6 »      »      »      (18 p.)

**Հատուկ համարը 1 բռլի, բաժանողագինը ամսական՝ 1 բռլի  
ծախօթութիւն. Բաժանողագինը կարելի է վճարել նաև մաս-մաս.  
Ծխակ, դպր, քարտուճինսերի և ուսուցիչների, զիրական քահանաների,  
միջն. ուս. աշակերտների, ուսանողների և բանությունների համար բաժանոր-  
դագինն է 8 բռլի Ռուսաստանում:**

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՈՒՄ է

**Філіпповіц – Імбратора інш. (документи відомих фундаторів, т. № 12)**  
**Імбратор розумів що він підтримує це питання в Тифлісі, въ редакцію**  
**журнала «МУРЧЪ».**

**Урбанистичнаго** Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

«Մարձ»-ի գաղտնաշխմերը:

Այլքառանդրոպոլ. — պ. Հետի Մանուէլեան

Болгари.—*μαθ., Φ. Ομηρούκεων*, (Б. Морек. я. № 26) и *ηγ. Ζ. Βοζυαρέων*:

Բիբի-Ելբար—ոլ. Դ. Տանիկեան:

ԵՐԵՎԱՆ—«Արարատ» գրախանու

Կարս—պ. Համովզասր Տ.-Խոչստրեան:

Պուլաւս—ազ. Սամ. Թումեան:

Սոչի—սլ. Արամ Յակոբեան (Ահծովեզերեայ Հրանտ):

Սահմանադրությունը՝ Ռ. պ. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր):

Սիւժեռովոյ—պ. Ե. Հայրապետեան:

Թիգլիկ — «Գուտտենբերգ» և «Կենաք

Վարդիկաւեց.—Յ. Ք. Սար

Թաւրիզ—պ. Հ. Պանիրեան:

Ըգիպտոս—դոկտոր Վ. Փաշալինսկի-Խում  
ի Տիկին Հայութ Խաչատրյան

Էնգլիա-ու. Գ. Օ ելլիք-Օ բըահամեան:

ԵՐԵՎԱՆ—պ. Տիգրան Աբգարեան:

**ԱՆՏԱՐԱՐՄՈՒԹԻՒՆ** ըստունում է ամեն լիզուսի. Յայտարար  
քարինիքի համար վճարում են.—1 երես բռնող յայտարարութեան հա-  
մար 15 ր., 1/2 եր. 8., 1/4 եր.՝ 4 ր., տողատեղ (կորպ.).—40 կ.:

## ԽԵԲԱԳԻՐ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ